

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ ԳՈՒՐԳԵՆԻ

**ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
ՀՀ ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԻԴ.03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար
աշխ. գիտ. դոկտոր., պրոֆեսոր՝ Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ	9
1.1 Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ոեգիոնալ զարգացման տեսությունների համակարգում	9
1.2 Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի աշխարհագրական մեկնաբանությունը	24
1.3 Հասարակության տարածքային կազմակերպման օրենքներն ու օրինաչափությունները և աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը	29
ԳԼՈՒԽ 2. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	39
2.1 Ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը և տնտեսական հիմնավորումները.....	39
2.2 Ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունն ըստ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի.....	45
ԳԼՈՒԽ 3. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ	53
3.1 «Աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» առանձնահատկությունները	53
3.2 «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» ուսումնասիրության աշխարհագրական մոդել	60
ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԸՍՏ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ	68
4. 1 ՀՀ զարգացման բնաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական նախադրյալները.....	68
4.2 ՀՀ «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունները	80

4.3 ՀՀ «զարգացման բլեռների» գործառության կազմակերպման առանձնահատկությունները	95
4.4 ՀՀ տարածագործառության կազմակերպման առանձնահատկությունները.....	125
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	131
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	133
ՀԱՎԵԼՎԱԾ	

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունը XX դարի վերջում պետական տնտեսվարման ու կարգավորման համակարգից անցում կատարեց շուկայական ազատականացման և ինքնակարգավորման տնտեսական համակարգ: Պետական ամբողջատիրական կառավարման մի ծայրահեղությունից անցում կատարելով ազատ շուկայական ինքնակառավարման մյուս ծայրահեղություն, Հայաստանի բավականին կայացած տնտեսությունը զրկվեց նախկին կենտրոնական ֆինանսավորումից, երաշխավորված ռեսուրսային և ապրանքային շուկայից, հայտնվեց արդեն իսկ ձևավորված ու ազատ մրցակցային նոր շուկա ներառվելու բավականին դժվարալուծ խնդրի առջև:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ և՛ պետական, և՛ շուկայական տնտեսվարման համակարգերը ծայրահեղական են, նախընտրելի է պետություն-շուկա զուգընտրանքը՝ խառը տիպի տնտեսվարումը, որում համակցվում են շուկայական ինքնակարգավորումը և պետական կարգավորումը: Դրանց արդյունավետ համագործակցությունը հասարակության և պետության համար ապահովում է հնարավորինս առանց ցնցումների զարգացում: Նման պայմաններում, բնականաբար, շուկայական ինքնակարգավորման քաղաքակիրթ միջավայր ստեղծող տնտեսական ճիշտ քաղաքականությունը տրնտեսության զարգացման և տնտեսական ակտիվության բարձրացման ծանրակշիռ գործոն է դառնում:

Այսօր նորանկախ ՀՀ կանգնած է, շուկայական ազատ մրցակցային հարաբերությունների հենքի վրա, գիտականորեն հիմնավորված տնտեսական քաղաքականության մշակման և տնտեսվարման նոր համակարգի ստեղծման անհետաձգելի խնդրի առջև: Վերջինիս լուծման համար արդիական է համարվում պատմական փորձաքնություն անցած և աշխարհի, մասնավորապես Եվրոպայի, մի շարք զարգացած երկրների տնտեսական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում դրված աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական դրույթների ընդհանրացումը և ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում դրանց կիրառման առանձնահատկությունների ու հնարավորությունների բացահայտումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է հիմնավորել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրույթների և սկզբունքների

կիրառման առանձնահատկությունները ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացներում:

Տրված նպատակի իրականացման համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- հիմնավորել ռեգիոնալ զարգացման տեսությունների համակարգում աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի նախապատվությունը,
- տալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրսևորման աշխարհագրական առանձնահատկությունները,
- ցույց տալ հայեցակարգի հիման վրա կառուցված տնտեսության պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության առանձնահատկությունները, դրսևորման տարբերությունները,
- հիմք ընդունելով աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը, ստեղծել տնտեսության ռեգիոնալ ուսումնասիրության և կազմակերպման մոդել,
- կիրառել աճի բևեռներ և կենտրոններ մոդելը ՀՀ տնտեսության տարածագործառույթային կազմակերպման և զարգացման ռազմավարական ուղղությունների կանխորոշման համար: Ըստ այդմ.
 - բացահայտել ՀՀ «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունները,
 - բացահայտել ՀՀ «զարգացման բևեռների» գործառույթային և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները,
 - առաջարկություններ անել ՀՀ տնտեսության տարածագործառույթային կազմակերպման բարեփոխումների ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգն է, առարկան՝ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսամեթոդական վերլուծությունն է և վերջինիս կիրառական նշանակության բացահայտումը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացներում:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Առաջադրված խնդիրների լուծման համար տեսամեթոդական հիմք են ծառայել տնտեսագիտության և սոցիալ-տնտեսական աշխարհագրության տեսության, ռեգիոնալ տնտեսական զարգացման և տարածքային կազմակերպման, ռեգիոնալ քաղաքականության տեսության վերաբերյալ դասականների աշխատությունները, հայրենական

ու արտասահմանյան հետազոտողների աշխատանքները, ՀՀ տնտեսության զարգացման ծրագրային փաստաթղթերն ու հայեցակարգերը:

Աշխատանքի կատարման համար տեղեկատվական հիմք են համարվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներում առկա համապատասխան նյութերը, Համաշխարհային բանկի և միջազգային տարբեր կազմակերպությունների տեղեկագրերը, փորձագիտական գնահատումները, ՀՀ Էկոնոմիկայի և Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների պաշտոնական տվյալները:

Աշխատանքում կիրառվել են վերլուծության և համադրության, արտարկման, մակաժողովրդական և արտաժաման, համեմատաաշխարհագրական, վիճակագրական, պատկերանշանային մոդելավորման (հատկապես՝ մաթեմատիկա-աշխարհագրական, քարտեզագրական), գրաֆների, աշխարհատեղեկատվական (GIS) քարտեզագրման և այլ մեթոդներ:

Հետազոտության պաշտպանվող հիմնադրույթները:

1. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը շուկայական տնտեսության զարգացման համար ապահովում է գիտատեսական հիմք, ունի կիրառական նշանակություն ռեգիոնալ զարգացման ու տնտեսության տարածագործառույթային կազմակերպման գործում:
2. Երկրների տնտեսական զարգացման գործընթացում պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում նախընտրելի է աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի կիրառությունը:
3. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը ունի առանձնահատկություններ և դրսևորման տարբերություններ զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում:
4. ՀՀ տնտեսության ժամանակակից զարգացման գործընթացներում տարածքային և գործառույթային բարեփոխումների իրականացման համար գիտատեսական հիմք կարող է հանդիսանալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը ՀՀ տնտեսության զարգացման և տարածագործառույթային կազմակերպման համալիր հետազոտություն է՝ հիմքում ունենալով աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունք-

ները:

Աշխատանքի գիտական նորույթներն են.

1. ընդհանրացվել են աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տարբեր մոտեցումները և առաջարկվել կիրառման սկզբունքներ,
2. բացահայտվել են աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիման վրա կառուցված տնտեսության պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության առանձնահատկությունները և դրսևորման տարբերությունները զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրներում,
3. աշխարհատեղեկատվական համակարգերի օգտագործմամբ, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիման վրա, մշակվել է տնտեսության տարածագործառնության ուսումնասիրության և կազմակերպման մոդել,
4. առաջին անգամ ՀՀ-ում կիրառվել է տնտեսության տարածագործառնության ուսումնասիրման և կազմակերպման մոդելը, առաջարկվել՝ տնտեսության ռեգիոնալ զարգացման և կատարելագործման նպատակային ուղիներ:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ռազմավարական ռեգիոնալ ծրագրերի մշակման աշխատանքներում:

Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթները և արդյունքները զեկուցվել և տպագրվել են միջազգային և հանրապետական նշանակության գիտաժողովներում.

- «Աշխարհագրության գիտականօրոգողական ներուժը և գործնական կիրառումը», հանրապետական գիտաժողով, Երևան, 2011,
- “Modern problems of geography” proceedigs of the conference: Dedicated to the 80th Anniversary Since the Foundation of Vakhushti Bagrationi Institute of Geography, Tbilisi, 2013,
- «ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները», հանրապետական գիտաժողով, Երևան, 2015:

Աշխատանքի տեսական ընդհանրացումներն և եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և Երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-

տնտեսական աշխարհագրության ամբիոնի սեմինարներում, ֆակուլտետի գիտխորհրդում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական ինը հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից (150 անուն), հավելվածից: Ատենախոսությունը բաղկացած է 144 էջից: Ընդգրկում է 12 աղյուսակ, 17 քարտեզ, որից 15-ը ԱՏՀ կիրառմամբ ստացված վերլուծական քարտեզներ են:

Երախտագիտություն: Խորին երախտագիտություն եմ հայտնում ատենախոսության գիտական ղեկավար, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ավագյանին՝ խնդրի դրվածքի, օգտակար խորհուրդների, աշխատանքի նկատմամբ մշտական ուշադրության և առաջարկությունների համար:

Շնորհակալություն եմ հայտնում ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ աշխատանքի ընթացքում օգտակար խորհուրդների համար:

ԳԼՈՒԽ 1. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

1.1. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՌԵԳԻՈՆԱԼ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ռեգիոնալ զարգացման և տնտեսության տարածքային կազմակերպման արևմտյան տեսություններից մեկն է: Տարածքային կազմակերպման տեսությունները Արևմուտքում և խորհրդային երկրներում ունեցել են զարգացման տարբեր և ինքնուրույն ուղղություններ: Խորհրդային երկրներում այս հայեցակարգին բավականին մոտ տեսություն է տարածքային արտադրական համալիրների տեսությունը:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը իր տրամաբանական բացատրությունը ստացել է հենվելով մինչ այդ եղած գործոնային, շտանդորտյան, գիտատեխնիկական (նորամուծությունների), դինամիկ (ռեգիոնալ տնտեսական զարգացման) տեսությունների վրա, իսկ իր հետագա, արդեն առավել ամփոփ ձևակերպումը ստացել է գիտական նոր ուսումնասիրությունների, տեսության գործնական կիրառման հաջող կամ անհաջող փորձերի գիտական վերլուծությունների գործընթացում:

Ավելի ուշ Արևմուտքում ստեղծվում են տնտեսության տարածքային կազմակերպման նոր տեսություններ, ինչպիսիք են «ազատ տնտեսական գոտիների», «տնտեսական կլաստերների», «տնտեսական միջուկների» և բազմաթիվ այլ տեսություններ: Սակայն, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը, անցնելով պատմական փորձաքննություն, այսօր շարունակում է հաջողությամբ գործել և դրված է աշխարհի շատ երկրների, հատկապես Արևմտյան Եվրոպայի երկրներից շատերի, ռեգիոնալ տնտեսական քաղաքականության հիմքում:

1.1.1. ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ

Արևմտյան տեսությունները տարբերվում են իրենց բովանդակությամբ, ուսումնասիրության նպատակներով, օբյեկտներով, մեթոդաբանությամբ և խմբավորվում են հետևյալ խմբերում:

Տարածքային կազմակերպման առաջին խմբի տեսությունները **«գործոնային»** տեսություններն են, որոնք ուսումնասիրում են տեղաբաշխման գործոնների ազդեցությունը ռեգիոնալ մասնագիտացման ձևավորման վրա: «Գործոնային» տեսություններից հայտնի են **Ա. Սմիթի** «բացարձակ առավելությունների» տեսությունը

(1776 թ.) [136], **Դ. Ռիկարդոյի** «հարաբերական առավելությունների» տեսությունը (1817 թ.) [132], XX դարի 20-30-ական թթ. շվեդացի գիտնականներ **Ե. Խեկշերի** [115] և **Բ. Օլինի** [124] «գործոնների հարաբերակցության» տեսությունը, XX դարի 50-ական թթ. ամերիկացի գիտնական **Վ. Լեոնյակի** «ծախսեր-արտադրանք» մոդելը [121]:

Երկրորդ խմբի տեսությունները «**շտանդորտյան**» տեսություններն են: Վերջիններս տնտեսական տարածքի և բնակչության տարաբնակեցման տարածքային կազմակերպման մաթեմատիկական իդեալականացված մոդելներ են: Ռեգիոնալ զարգացման դասական՝ «շտանդորտյան» տեսությունները ներկայացնում են **Ի. ֆոն Թյունենի** «մեկուսացած պետության» մոդելը (1826 թ.) [137], **Վ. Լաունհարդտի** արդյունաբերական ձեռնարկությունների ռացիոնալ տեղաբաշխման մոդելը (1882 թ.) [120], **Ա. Վեբերի** արդյունաբերական ձեռնարկությունների տեղաբաշխման բազմագործոն մոդելը (1909 թ.) [140], **Ֆ. Աուերբախի** օրենքը (1913 թ.) [104], որն իր ժամանակին մեծ ճանաչում չգտավ, իսկ ավելի ուշ նույն օրինաչափությունը բացահայտվեց **Ջ. Ջիպֆի** (Ցիպֆի) կողմից և նրա անունով էլ օրենքը այսօր կոչվում է Ցիպֆի օրենք [143], **Վ. Կրիստալլերի** «կենտրոնական տեղերի» տեսությունը (1933 թ.) [106], **Ա. Լյոշի** «տնտեսական լանդշաֆտի» հայեցակարգը (1954 թ.) [70, 97, էջ 152-153], ամերիկյան տարածական վերլուծության դպրոցի հիմնադիր **Ու. Այզարդի (Իզարդ)** (1969 թ.) [117, 97, էջ 72] և այլ հեղինակների տեսությունները, որոնք հիմնականում կառուցվել են շուկայական տնտեսության տարածական կազմակերպման օպտիմալ պատկերացումների հիման վրա:

Երրորդ խումբն են կազմում «**գիտաբեխնիկական**» կամ «**նորամուծություններ**» տեսությունները, որոնցում ուշադրություն է դարձվում տնտեսության տեղաբաշխման վրա ԳՏԱ-ի դերի ուսումնասիրությանը: Հայտնի են **Ի. Շումպերերի** (1912 թ.) [100] և **Տ. Հեգերստրանդի** (1953 թ.) [114] նորամուծությունների դիֆուզիայի տեսությունները: Նորամուծությունների դիֆուզիայի աշխարհագրական դրսևորումների հետագա ուսումնասիրություններով զբաղվել են նաև այնպիսի գիտնական-ռեգիոնալիստներ, ինչպիսիք են **Ա. Պրեդը, Խ. Պերլոֆֆը, Բ. Բերրին** և այլն:

Չորրորդ խմբում ներառվում են «**ռեգիոնալ տնտեսական զարգացման**» կամ «**դինամիկ**» տեսությունները, որոնցում ուսումնասիրություններն ուղղված են հետամնաց երկրների և շրջանների զարգացման մակարդակի բարձրացման ուղիների

փնտրտուքին [60]: Արևմուտքում դինամիկ հայեցակարգերի նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է հատկապես 50-ական թթ. վերջին և 60-ական թթ. սկզբներին: Դինամիկ հայեցակարգերը հաջորդում են դասական տեսություններին, որոնց մոտենում են քննադատաբար, մի շարք դեպքերում էլ անհանդուրժողաբար: Նոր մոտեցման կողմնակիցները, ի տարբերություն դասական տեսությունների, դիտարկում են ոչ միայն տարածական համակարգերի կառուցվածքը, այլ նաև դրանց շարժիչ ուժերը, էվոլյուցիայի փուլերը, դրանց գործառույթային բնույթը: Ուսումնասիրությունների հիմքում դրվում է էվոլյուցիոն մոտեցումը, որը հնարավորություն է ընձեռում բացահայտել օբյեկտիվ զարգացման օրինաչափություններ: Հայտնի են **Ջ. Ֆրիդմանի** «կենտրոն-ծայրամաս» հայեցակարգը (1966 թ.) [111], **Ա. Ֆրանկի** կախվածության տեսությունը (1971 թ.) [110], **Խ. Ռիչարդսոնի** պատճառային փոխալայմանավորվածության մոդելը (1973 թ.) [133], **Խ. Գիրշի** «հրաբխի» մոդելը (1979 թ.) [113], **Ի. Վալլերստեյնի** համաշխարհային համակարգերի հայեցակարգը (1979 թ.) [138, 139] և այլն:

«Դինամիկ» տեսությունների խմբին է դասվում նաև աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը, որը մեծ ճանաչում է ստացել հատկապես անցած դարի 60-ական թթ.: Հայեցակարգի մշակումը սովորաբար կապում են ֆրասիացի տնտեսագետ **Ֆր. Պերուի** «աճի բևեռներ» հայեցակարգի հետ [125, 126]: «Աճի բևեռներ» հայեցակարգի նման այլ հայեցակարգեր մշակվել են **Գ. Մյուրդալի** [123] և **Ա. Հիրչմանի** [116], իսկ տարածական տարբերակը՝ Պերուի աշակերտ՝ **ժ. Բուդվիլի** [105] կողմից: Ժ. Բուդվիլին իրավամբ կարելի է համարել այդ հայեցակարգի համահեղինակ:

Ֆր. Պերուն կիսում էր Ի. Շումպետերի նորամուծությունների դիֆուզիայի մասին գաղափարները և դրանց մի զգալի մասն էլ կիրառել է իր հայեցակարգում: Ըստ նրա, նորամուծությունները առաջացնում են խտացումներ՝ խմբվելով առաջատար ճյուղի շուրջ: Եթե դրա հետ մեկտեղ այդ ճյուղը հանդիսանում է զարկերակային, այսինքն ընդունակ է ստեղծել դրական բազմապատկիչի արդյունք (մուլտիպլիկատորի էֆեկտ), ապա, վերջինս հանդես է գալիս որպես աճի բևեռ: Ֆր. Պերուի մոտ աճի բևեռը հանդիսանում է գործառույթային հասկացություն: Իսկ տնտեսական տարածքը հայեցակարգում ներկայանում է որպես յուրատիպ ուժային դաշտ, որում գործում են որոշակի կենտրոններ ուղղված կենտրոնամետ և դրանցից դուրս եկող կենտրոնախույս

ուժեր:

Ֆր. Պերուն տարբերակում է «աճի բևեռների» երեք հիմնական խմբեր [125, 126].

- 1. առաջատար ճյուղեր,** ճյուղ-շարժիչներ, որոնք ունեն աճի հզոր ներուժ և նորամուծությունների տարածման կարողություն, այլ խոսքով՝ ճյուղեր մեծ բազմապատկիչի արդյունքով.
- 2. տեղական նշանակության ճյուղերի խումբ,** որոնք կապված են առաջինի հետ «ծախս-թողարկում» բնույթի հարաբերությունների համակարգի միջոցով: Այս հարաբերություններն էլ հենց ծառայում են որպես ողջ տնտեսության վրա առաջատար ճյուղերի արդյունքի փոխանցման միջոց:
- 3. արտադրության տարածական ազդմերացիա,** որոնք ապահովում են ձեռնարկությունների համար «արտաքին տնտեսում»: Ձևավորվում է փոխկապակցված արդյունքների շարք, որոնք ընդունակ են բարենպաստ պայմաններում մեծապես փոխել շրջանի տնտեսական տարածքը [57, էջ 64-65]:

Պերուն տարբերակում է բևեռները նաև ըստ զարգացման միտումների [125, 148].

- 1. Ճյուղեր,** որոնք զարգանում են դանդաղ և երկրի տնտեսության կառուցվածքում նրանց բաժինը նվազում է: Այդպիսիք են, օրինակ արդյունաբերության հին ճյուղերը (ածխարդյունաբերություն, տեքստիլ, նավաշինություն և այլն):
- 2. Ճյուղեր** զարգացման բարձր տեմպերով, սակայն որոնք էական ազդեցություն չունեն տնտեսության մնացած ճյուղերի զարգացման վրա: Այդպիսիք են, օրինակ սպառողական առարկաների արտադրությունները, որոնք չեն պահանջում հետագա արդյունաբերական վերամշակում:
- 3. Ճյուղեր** զարգացման բարձր տեմպերով, որոնք ծնում են շղթայական ռեակցիա, նպաստում արդյունաբերական կենտրոնների ձևավորմանը: Այդպիսիք են մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և էլեկտրաէներգետիկան: Այնտեղ, որտեղ զարգանում են այս ճյուղերը, ձևավորվում են աճի բևեռներ:

Ըստ Պերուի «աճի բևեռները» նորամուծությունների յուրաքանչյուր գեներատորներ են, բայց միայն դրանց դիֆուզիան է ապահովում ծանրակշիռ տնտեսական արդյունք:

Ընդ որում, Ֆր. Պերուն գտնում էր նաև, որ «աճի բևեռների» ստեղծման և զարգացման ուղիների կանխորոշման խնդիրներում որոշիչ դերը պատկանում է պետու-

թյանը, որը պետք է տնտեսության, նրա ճյուղերի և շրջանների միջև ապահովի հարմունակ զարգացում, նվազեցնի կամ բերի ընդունելի մասշտաբների տարածական անմիատարրությունը և անհամամասնությունը: Ֆր. Պերուն, ի տարբերություն նեոկլասիկ ուղղության ներկայացուցիչների, կարծում էր, որ տնտեսական աճը դա իրար հաջորդող ոչ հավասարակշիռ իրավիճակների հերթափոխում է, ուր հավասարակշռությունը ժամանակավոր է և ոչ մշտական: Այդ իսկ պատճառով, նա առաջարկում էր ներդաշնակ աճը և ինդիկատիվ պլանավորումը որպես երկրների, շրջանների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների նվազեցման գործիք [57, էջ 66-79]:

Ժ. Բուդվիլի հայեցակարգը (1966 թ.) [105] Ֆր. Պերուի հայեցակարգի հետագա զարգացումն է և նրա «աճի բևեռների» մասին վերացական մտքերի հստակեցումը: Ժ. Բուդվիլի հայեցակարգը հաստատում է, որ տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության աճը հավասարապես չի ընթանում. մշտապես կարելի է առանձնացնել դինամիկ, այսպես կոչված, առաջնային զարկերակային ճյուղեր: Դրանք ողջ տնտեսության զարգացման խթանիչներն են, և հանդիսանում են «զարգացման բևեռներ»: Վ. Լեոնտևի «ծախս-թողարկում» տիպի հարաբերությունների համակարգի միջոցով նորամուծությունների արդյունքը փոխանցվում է ողջ տնտեսության վրա: Իսկ արտադրության կենտրոնացման գործընթացն արտադրությունները կենտրոնացնում է որոշակի վայրերում՝ «աճի կենտրոններում» [148]:

Ինքը՝ Ժ. Բուդվիլը, գրում է այսպես. «Ռեգիոնալ զարգացման բևեռները իրենցից ներկայացնում են զարգացող ճյուղերի հավաքածու, տեղաբաշխված են ուրբանիզացված զոնաներում և ընդունակ են իրենց ազդեցության ողջ գոտում առաջացնել տնտեսական գործունեության հետագա զարգացում»: Հաջորդիվ նա ընդգծում է. «Աճի կենտրոններն իրենցից ներկայացնում են քաղաքներ, որոնք ընդգրկում են զարկերակային ճյուղերի համալիրներ» [105, էջ 112]: Ըստ էության, Բուդվիլի տեսությունում կիրառվում է երկու հասկացություն՝ «զարգացման բևեռ» և «աճի կենտրոն»: Դրանցով կարծես թե սահմանազատվում են գործառության և աշխարհագրական մասերը: «Զարգացման բևեռի» տակ հասկացվում է ճյուղերի հավաքածուն, իսկ «աճի կենտրոնի» տակ՝ կենտրոնացման օջախները:

Բուդվիլը առաջարկում է «աճի կենտրոնների» ենթակարգություն՝ ըստ Վ. Կրիստալլերի կենտրոնական տեղերի տեսության առաջարկած ենթակարգության:

Նա առանձնացնում է «աճի կենտրոնների» հետևյալ տեսակները.

- *փոքր և «դասական» քաղաքներ* - մասնագիտացված են երրորդական սեկտորի ճյուղերով և սպասարկում են հարակից գյուղական վայրերը,
- *միջին չափի արդյունաբերական քաղաքներ* - մասնագիտացված են տնտեսության առաջատար ճյուղերով, զարգանում են արտաքին ազդեցությամբ,
- *խոշոր քաղաքային ագլոմերացիաներ* - ընդգրկում են զարկերակային ճյուղերը և ապահովում աճի ինքնավարություն,
- *ինտեգրացման բևեռներ* - ընդգրկում են մի քանի քաղաքային համակարգեր և որոշում տարածական կառույցների ողջ էվոլյուցիան [65, էջ 26-27]:

Նա նաև ընդգծում է, որ *ինքնավար աճ բնորոշ է միայն կենտրոնական տեղերի վերին ենթակարգային մակարդակներին, իսկ ցածր տարածական կառույցների աճը որոշվում է նորամուծությունների դիֆուզիայի մեխանիզմներով:*

«Աճի բևեռների» տեսության հետ սերտորեն կապված է **Պ. Պոտյեի** *զարգացման առանցքների տեսությունը* [131]: Տեսության առանցքային ենթադրությունն այն է, որ զարգացումը փոխանցվում է կարևորագույն արդյունաբերական կենտրոնները միացնող գլխավոր մայրուղիների երկայնքով: Պ. Պոտյեի աշխատանքն ինչ-որ չափով պատկերում է Վ. Կրիստալլերի տրանսպորտային սկզբունքները: Առանցքների մասին տեսությունն օգնում է մեկ ամբողջության մեջ միավորել տրանսպորտային ցանցի ազդեցության, բնակավայրերի ենթակարգության ու աճի կենտրոնների տեսությունները [57, էջ 87]:

Խ. Լասունի «աճի բևեռ» հայեցակարգը (1972 թ.) առավել մանրամասն է ուսումնասիրում տնտեսական աճի բևեռները և բացահայտում հետևյալ առանձնահատկությունները [119].

1. աճի բևեռներ կարող են լինել նաև ռեգիոնալ նշանակության ձեռնարկությունները, (ոչ միայն առաջատար ճյուղերը), որոնք ունեն արտահանման նշանակություն,
2. բևեռները աճում են ի հաշիվ համազգային պահանջարկի խթանների,
3. աճի խթանը փոխանցվում է աշխարհագրական ծայրամասերին և երկրորդական ճյուղերին ձեռնարկությունների միջև շուկայական կապերի միջոցով [57, էջ 87]:

«Աճի բևեռ» հայեցակարգն իր արձագանքն է գտել նաև Նախկին սոց. երկրների որոշ գիտնականների աշխատանքներում (**Լ. Կեսեգի**՝ Հունգարիա, **Վ. Կավալեց**՝ Լե-

հաստան, **Կ. Միխայլովիչ՝** Հարավսլավիա): Նրանց աշխատանքներում, այնուհանդերձ, հստակ դիտվում է սովետական տնտեսական դպրոցի ազդեցությունը:

Արևմուտքում զարգացման հիմնախնդիրների նկատմամբ հայացքների փոփոխությունները, բնականաբար, իրենց արտահայտումն են գտնում և ռեգիոնալ գիտությունների բնագավառում: 70-ական թթ. տեղի է ունենում մինչ այդ մեծ հեղինակություն վայելող «աճի բևեռներ» հայեցակարգի անկում: Այդ ժամանակաշրջանում Արևմուտքում հետաքրքրությունը մեծանում է երկրների, շրջանների զարգացման անհավասարության մշտական վերարտադրության գործընթացը բացատրող այլ բնույթի տեսությունների և հայեցակարգերի նկատմամբ: Ի հայտ են գալիս տնտեսական, քաղաքական, աշխարհագրական մի շարք աշխատություններ, որոնք բացատրում են ժամանակակից աշխարհում ուժերի գլոբալ բաշխումները: Ակնհայտ էր ռեգիոնալ գիտության գլոբալացումը և համաշխարհային տնտեսության ընդհանուր օրինաչափությունների բացահայտման ձգտումը:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը վերստին մեծ հեղինակություն է ձեռք բերում 80-90-ական թթ. և դրվում շատ երկրների ռեգիոնալ տնտեսական քաղաքականության հիմքում:

1.1.2 ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում ռեգիոնալ զարգացման միտքն ունեցել է բավականին յուրատիպ ընթացք: Ռուսաստանի տնտեսության տարածքային կառուցածքի ուսումնասիրություններում առանձնահատուկ ուշադրության է արժանի **տարածքային արտադրական համալիրների** մասին ուսմունքը: ՏԱՀ-երի մասին հայեցակարգը ԽՍՀՄ-ում ստեղծվել է 30-ական թթ., սակայն մինչ պատերազմը լայն պաշտոնական ընդունելություն և տարածում չի գտել: Այն իր գործնական կիրառումը գտել է Պետալանի գործունեության մեջ, իսկ որպես գիտական հայեցակարգ մշակվել **Ն. Կոլոտովսկու** կողմից [63]:

ՏԱՀ-ը նյութական արտադրության տարածքային կազմակերպման ձև է և իրենից ներկայացնում է որոշակի տարածքում ձևավորված փոխկապակցված ճյուղերի և ձեռնարկությունների զուգակցություններ՝ տնտեսական ակտիվությունը բարձրացնելու նպատակով: ՏԱՀ-երի հիմքը կազմում են մասնագիտացված ճյուղերը, որոնց տեղաբաշխման համար տվյալ տարածքն ունի բնական և տնտեսական առավել

բարենպաստ պայմաններ: Հիմնական ճյուղերի կամ ձեռնարկությունների շուրջն ստեղծվում են օժանդակ կամ հիմնական արտադրության թափոններն օգտագործող արտադրություններ, նաև արտադրական ենթակառուցվածքի կառույցներ [52, էջ 306]:

«Արտադրողական ուժերի զարգացման որոշակի մակարդակում ՏԱՀ կարող է ձևավորվել հին յուրացված շրջաններում արդեն առկա արտադրության հիմքի հարըստացման ու վերափոխման շնորհիվ: ՏԱՀ կարող է ձևավորվել նաև նոր յուրացվող շրջաններում: Այս դեպքում արդեն դրանց ձևավորման ու զարգացման գործընթացն ընթանում է նպատակային ձևով, համազգային կամ ռեգիոնալ ծրագրերի ու ինդիկատիվ պլանի հիման վրա» [36, էջ 217]:

«ՏԱՀ-ում գործում է ամեն մի համակարգին ներհատուկ այն օրենքը, սիներգետիկական այն էֆեկտը, երբ համակարգի բաղադրիչների համաձայնեցված աշխատանքի արդյունքը ավելի մեծ է, քան առանձին բաղադրիչների աշխատանքի արդյունքների թվաբանական գումարը» [36, էջ 221]:

Պատահական չէ, որ թե՛ արտասահմանյան, և թե՛ ռուս աշխարհագետները հետազայում հայտնաբերեցին բավականին ընդհանրություններ ՏԱՀ-ի և «աճի բևեռներ» հայեցակարգերի միջև (օրինակ՝ Գոխմանը, 1979 թ.) [56]:

Հայեցակարգերի նմանությունն այն է, որ երկուսում էլ կարևորվում են գերակայող ճյուղի և վայրի ընտրությունը և դիտվում են որպես հետամնաց և նոր շրջանների զարգացման միջոց: Սակայն *ՏԱՀ-ի հայեցակարգում հիմնական շեշտը դրվում է ԷԱՑ-երի՝ միևնույն հումքի և էներգիայի օգտագործմամբ հաջորդականորեն կապված արտադրական գործընթացների ամբողջության վրա, իսկ «աճի բևեռ» հայեցակարգում՝ զարկերակային արտադրությունների և բազմապատկիչի արդյունքի վրա: ՏԱՀ հայեցակարգը չի ներառում կենտրոնի և աճի բևեռի ստեղծում, բայց գործնականում հեռու չէ կենտրոնացման օգուտի օգտագործումից, դոմինանտ ճյուղի ստեղծումից:*

Պերուի «աճի բևեռ» հայեցակարգի հետ ռուս գիտնականներին ծանոթացնող առաջին գիտնականներից է եղել **Է. Ալաևը** [39]: Նա և նրան հաջորդող շատ աշխարհագետներ հայեցակարգի կարևորագույն խնդիրը համարում էին կենտրոնի ընտրությունը տարածքի յուրացման և զարգացման, բևեռացված զարգացման տարբերությունների մեղմացման գործընթացում:

Ընդհանրապես կարելի է մեկնաբանել, որ ռուսական գիտական միտքը ռեգիոնալ զարգացման ուղղությամբ ընթացել է արևմտյանին զուգահեռ, թեպետ եղել է ինքնուրույն, ժամանակ առ ժամանակ նույնիսկ նրանից մեկուսացած:

Տարածական զարգացման բևեռացման սովետական հետազոտությունները 60-ական թթ. ավելի մոտ էին արևմտյան դպրոցի ուսումնասիրություններին, քան նախորդ «պլանային-արդյունաբերական» փուլի աշխատանքները: Ընդհանուր էին դրանց երկուսի կողմից ընդունվող մի շարք եզրահանգումներ: Տնտեսության տարածքային կազմակերպման ուսումնասիրություններում հայտնի էին **Ա. Խրուշևը, Յու. Սաուզկինը, Ի. Նիկոլսկին, Ս. Նիմիկը, Բ. Ռոդոմանը** և այլն:

Սովետական գիտնականները տարածական տեղաբաշխման խնդիրներին մեծ ուշադրության են արժանացրել, սակայն ընդհանրացված կառույցների փորձեր քիչ են եղել: Հիշարժան են **Ի. Մայերգոյզի** [72, 73] և **Ն. Կոնդրասկի** [64] աշխատանքները:

Նորագույն հետազոտություններից հիշարժան են **Ս. Արտաբալևսկու, Բ. Պոգրեբնյակի, Մ. Ժուկովայի, Ա. Գավրիլովի, Ի. Շվեցովի, Տ. Լաշևի** և բազմաթիվ այլ տնտեսագետների և աշխարհագետների աշխատանքներ:

Հայաստանում ռեգիոնալ զարգացման, բնակչության և տնտեսության տարածքային կազմակերպման խնդիրների ուսումնասիրություններ կատարվել են միայն XX դարի առաջին քառորդից սկսած՝ ԽՍՀՄ տոտալիտար համակարգում:

Ռեգիոնալ զարգացմանն ուղղված աշխատանքներ են կատարել բազմաթիվ հեղինակներ, որոնք սակայն ունեին հետազոտական, վերլուծական բնույթ: Տեսական ընդհանրացումները քիչ էին և հենվում էր ռուսական դպրոցի տեսամեթոդական կառույցների վրա: Հիշարժան է Լ. Վալեսյանի «Производственно-территориальный комплекс Армянского ССР» (1970 թ.) աշխատանքը [45]: Տեսաընդհանրական բնույթով առանձնանում են նաև 80-ական թթ. սկսած Մ. Մանասյանի և Ա. Վալեսյանի հոդվածներն ու թեկնածուական ատենախոսությունները:

ՀՀ անկախացումից հետո ակտիվորեն շարունակվում են ռեգիոնալ զարգացմանն ուղղված աշխատանքները, այս անգամ հիմքում ունենալով ռուսական և մասամբ էլ արևմտաեվրոպական դպրոցների տեսամեթոդական սկզբունքները:

1.1.3 ՌԵԳԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներկա ժամանակներում ռեգիոնալ զարգացման և տնտեսության տարածքային

ու գործառութային կազմակերպման ուսումնասիրությունները շարունակում են առաջնահերթ կարևորություն ներկայացնել: Առանձնապես կարևորվում են Մ. Պորտերի «մրցակցային առավելությունների» և «կլաստերների» [130, 82, 83] ու «ազատ տնտեսական գոտիների» տեսությունները, որոնք բոլորն էլ նպատակաուղղված են շուկայական տնտեսության պայմաններում ազգային տնտեսությունների մրցակցության ուղիների փնտրտուքին: Տեսությունները, ըստ էության, չեն հակասում իրար, այլ շոշափում են այդ գործընթացի մասնավոր հատվածներ և շատ դեպքերում լրացնում են միմյանց:

Այսպես, «մրցակցային առավելությունների» տեսության հեղինակ Մ. Պորտերը գտնում է, որ շուկայական տնտեսության պայմաններում մրցակցությունն ազգային տնտեսությունների շարժիչ ուժն է, իսկ միջազգային մրցակցությունում երկրների, և նրանցում այս կամ այն ճյուղի, հաջողության պատճառները հետևյալներն են [82, 76, էջ 48].

1. գործոնային պայմանները (բնական ռեսուրսներ, մարդկային ռեսուրսներ, ենթակառուցվածք, գիտատեղեկատվական ներուժ և այլն),
2. պահանջարկի պայմանները (արտաքին և ներքին),
3. ճյուղերի վիճակը,
4. ձեռնարկության ռազմավարությունը:

Նա նաև մշակել է երկրների զարգացման և դրանց մրցակցության իրականացման եղանակների չորս փուլերի հայեցակարգը [82, 76, էջ 48].

1. մրցակցություն արտադրական գործոնների հաշվին (բնորոշ է ցածր եկամուտ ունեցող երկրներին),
2. մրցակցություն ներդրումների հաշվին (բնորոշ է միջին եկամուտ ունեցող երկրներին),
3. մրցակցություն նորամուծությունների հաշվին (բնորոշ է բարձր եկամուտ ունեցող երկրներին),
4. մրցակցություն հարստությունների հաշվին (բնորոշ է զարգացած երկրներին):

«Այս փուլերից յուրաքանչյուրում գտնվող երկրների համար նա տարբերակել է ռեգիոնալ տնտեսական քաղաքականության իրականացման մի շարք առաջարկներ:

Տնտեսություններին, որոնք գտնվում են գործոնային փուլում, առաջարկում է

պահպանել մակրոտնտեսական և քաղաքական կայունություն, ձեռք բերել կրթական բարձր մակարդակ, օրենքի առաջնություն, ստեղծել և զարգացնել ենթակառուցվածքներ, բացել շուկաներ և օգտագործել այլ երկրների առաջնային տեխնոլոգիաները:

Տնտեսություններին, որոնք գտնվում են ներդրումների փուլում, առաջարկում է միջոցներ ներդնել ենթակառուցվածքների կատարելագործման, գիտական հետազոտությունների իրականացման, «կլաստերների» ստեղծման համար: Նաև պայմաններ ստեղծել տեխնոլոգիական առաջընթացի և տնտեսության բոլոր ճյուղերի արագընթաց զարգացման համար:

Տնտեսություններին, որոնք գտնվում են նորամուծությունների փուլում, առաջարկում է նպաստել «կլաստերների» հետագա զարգացմանը, ստեղծել հետազոտական հաստատությունների ցանց, որը կներառի ոչ միայն գիտական լաբորատորիաներ, այլ նաև համապատասխան մակարդակի կադրերի պատրաստում» [82, 76, էջ 59-60]:

«Կլաստերների» տեսության հեղինակը ևս Մ. Պորտերն է: Ըստ նրա, կլաստերը դա շահագրգռված կողմերի ջանքերի համախմբման կազմակերպման ձև է և ուղղված է մրցակցային առավելությունների ձեռքբերմանը [83]:

Կլաստերները որոշակի տարածքում փոխկապակցված և փոխլրացնող ընկերությունների՝ մթերքի մատակարարման, մասնագիտական ծառայությունների, ենթակառուցվածքի, գիտահետազոտական ինստիտուտների, ԲՈՒՀերի և այլ կազմակերպությունների խմբեր են, որոնք մեծացնում են ինչպես առանձին ընկերությունների, այնպես էլ ողջ կլաստերի մրցունակության առավելությունները: Կլաստերացումը հարմար և իրատես կազմակերպման մոդել է, հնարավորություն է ընձեռում կենտրոնացնել ռեսուրսները և կառուցել գործարար փոխհարաբերություններ: Դա տեխնոլոգիական շղթաների «շինարարություն» չէ, ինչպես ՏԱՀ-ում, այլ միայն տեղական տնտեսական սուբյեկտների գործարար հարաբերությունների ստեղծում, ընդհանուր շահերի պաշտպանություն, տեխնոլոգիական ինտեգրացիա, համատեղ հետազոտությունների ֆինանսավորում: Կլաստերները յուրօրինակ «զարգացման բևեռներ» են, որոնք ձեռք են բերում մրցակցային առավելություններ:

Ներկայումս լայնորեն կիրառվում են նաև տնտեսության կազմակերպման **«ազատ տնտեսական գոտիների»** տեսության առավելությունները:

Ազատ տնտեսական գոտիները հարակից տարածքների նկատմամբ հատուկ

իրավաբանական կարգավիճակով, ազգային կամ օտարերկրյա ձեռնարկատերերի համար հատուկ հարկային տնտեսական պայմաններով սահմանափակ տարածքներ են: Դրանք իրարից տարբերվում են իրականացվող գործառույթներով, տնտեսության մեջ ինտեգրման աստիճանով, ներկայացվող հարկային համակարգով, մասշտաբներով: Ազատ տնտեսական գոտիներն էլ յուրօրինակ «աճի կենտրոններ» են:

XX դարի վերջին երկրների մրցունակության մասին ինքնատիպ աշխատանք է ներկայացրել **Պ. Կրուգմանը** [118]: Նա բացատրում է տնտեսական ակտիվության կենտրոնացման պատճառները և համակարգում տարածքի մրցունակության առավելությունները՝ առանձնացնելով գործոնների երկու խումբ.

«**I բնույթի**» գործոններ: Այդպիսիք են շուկայում պահանջարկ ունեցող բնական ռեսուրսների ապահովվածությունը, աշխարհագրական դիրքը: Այս առավելությունները գործում են անկախ մարդկանց գործունեությունից:

«**II բնույթի**» գործոններ: Դրանք այն առավելություններն են, որոնք ձևավորվում են մարդկանց և հասարակության գործունեության արդյունքում: Այդպիսիք են ագլոմերացիոն արդյունքը (քաղաքներում բնակչության և տնտեսության խտացումը, որն ապահովում է տնտեսում մասշտաբում), մարդկային կապիտալը (բնակչության կրթությունը, առողջությունը, աշխատանքային շարժառիթները, շարժունակությունը), հաստատությունները, որոնք նպաստում են նախաձեռնությունների կլիմայի բարելավմանը, նորամուծությունների տարածմանը, ենթակառուցվածքի զարգացմանը և այլն:

Տարածքի զարգացման գործընթացում երկու գործոնների խումբն էլ կարևոր են, բայց ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, տարածքի զարգացմանը զուգընթաց փոքրանում է առաջին խմբի գործոնների դերը և կարևորվում երկրորդ խմբի գործոններին՝ ի շնորհիվ ներդրումների աճի, ենթակառուցվածքի զարգացման, հաստատությունների մոդեռնիզացման: Երկարաժամկետ կտրվածքում հենց երկրորդ խմբի գործոններն են նպաստում տարածքի տնտեսական զարգացման անհամամասնությունների կրճատմանը և նոր աճի գոտիների ստեղծմանը: Սակայն տարածքի զարգացման համահարթում տեղի չի ունենում. մրցունակ տարածքներում տնտեսական աճը մշտապես ծնում է տարածական անհամամասնություն: Այս երևույթը լավ ուսումնասիրված է Եվրոպայի և Եվրամիության օրինակով [127, 128, 109]:

Ծանոթանալով ռեգիոնալ զարգացման և տնտեսության տարածքային կազմակերպման հիմնական տեսություններին և հայեցակարգերին՝ մեր կողմից կատարվում է հետևյալ եզրակացությունը, որ համաշխարհային գլոբալիզացման պայմաններում ռեգիոնալ զարգացման համար հարկավոր է երկրների մրցունակ տնտեսությունների ստեղծում, որի համար էլ անհրաժեշտ է.

• մրցակցային առավելությունների դաշտ. բնական, մարդկային, տնտեսական ռեսուրսներ, ներդրումների երաշխավորություն, քաղաքական կայունություն, վարչական հարցերի լուծման պարզություն և այլն: Սա տնտեսության զարգացման գործոնային, նախադրյալային՝ ըստ Կրուգմանի, առաջին և երկրորդ բնույթի գործոնների ամբողջությունն է, որոնք ազգային տնտեսության զարգացման համար ստեղծում են բարենպաստ կամ անբարենպաստ միջավայր: Սա այն «հողն» է, որի առավելությունների համալիր գնահատման և կիրառման հիման վրա կառուցվում է երկրի մրցակցային առանձնահատկությունների բնութագիրն ու ուղին: Յուրաքանչյուր երկրի համար դրանք ինքնատիպ են ու փոփոխական:

• մրցակցային առավելությամբ արտադրություններ՝ որպես գործառության հենք, «զարգացման բևեռներ»: Այս հենքի վրա կառուցվում է երկրի ողջ տնտեսությունը, իսկ վերջիններիս զարգացմամբ, բազմապատկիչի արդյունքի շնորհիվ, ապահովվում երկրի ազգային տնտեսության զարգացումը: «Զարգացման բևեռների» ընտրությունում կարող են հիմք հանդիսանալ «բացարձակ», «հարաբերական», «համեմատական», կամ էլ «մրցակցային» առավելությունների տեսությունների, հայեցակարգերի տեսական դրույթները:

Ինչպես գտնում են Մ. Պորտերը և բազմաթիվ այլ տնտեսագետներ և աշխարհագետներ, համաշխարհային տնտեսությունում երկրները պետք է մրցեն առավելությունների համար և յուրաքանչյուր երկիր պետք է մասնագիտանա այն ապրանքների արտադրության մեջ, որոնց գծով ունի մրցակցային առավելություններ: Այսինքն, պետք է ստեղծվի տնտեսական միջուկ՝ տնտեսական հիմնականախք, առաջատար բևեռներ, որոնց վրա կհենվի երկրի ողջ տնտեսական զարգացումը:

• մրցակցային առավելությամբ տարածքներ՝ որպես տարածական հենք, «աճի կենտրոններ»: Ստեղծելով առաջատար կենտրոնների ցանց, վերջիններս «կենտրոն-

ծայրամաս», «նորամուծությունների տարածման», «ագլոմերացիոն արդյունքի» օրենքների արդյունքում, իրենց ազդեցության դաշտում ընդգրկում են երկրի ողջ տարածքը, դրանով իսկ, ապահովելով մեզոմակարդակում՝ համաչափ զարգացում, մակրոմակարդակում՝ մրցակցություն:

Այսօր ընդունվում է, որ հասարակական, այդ թվում և տնտեսական, զարգացման ալիքները տարածվում են զարգացած երկրների լիդեր կենտրոններից դեպի հարակից տարածքներ և ավելի թույլ զարգացած երկրների առավելություններ ունեցող շրջաններ, ուր առկա են առավել նպաստավոր և մրցակցային պայմաններ: Մրցակցային առավելություններով տարածքները տարբեր երկրներում տարբեր են: Այսպես, Չինաստանում դրանք մերձծովյան շրջաններն են, Բրազիլիայում՝ խոշոր ագլոմերացիաները, Հնդկաստանում՝ մարդկային կապիտալով տարածքները, Արևելյան եվրոպայի երկրներում՝ մայրաքաղաքները և զարգացած երկրներին հարող արևմտյան սահմանները:

Ն. Զուբարևիչը զարգացող երկրների համար առանձնացնում է մրցակցային առավելություններով տարածքների հետևյալ տիպերը.

- **խոշոր քաղաքներ:** Հենց այսպիսի, հին արդյունաբերական կամ ռեսուրսաարդյունահանման ճյուղերի քիչ ծանրաբեռնվածությամբ խոշոր քաղաքներն են առաջինը յուրացնում բարձր տեխնոլոգիական և հետինդուստրիալ գործառույթները, որի արդյունքում և ապահովում են կայուն զարգացում:

- **Ուշ ինդուստրիալ ճյուղերով** (ավելի հաճախ բարձրտեխնոլոգիական մեքենաշինության, սարքաշինության) **զարգացման ռեգիոններ:**

- **Բարենպաստ աշխարհագրական դիրքով ռեգիոններ** (մերձծովյան, կամ առավել զարգացած երկրների հետ մերձսահմանային ռեգիոններ): Հենց նրանցում են գլխավորապես ձևավորվում հատուկ կարգավիճակով գոտիները, ուր և ձգտում են արտադրությունները, աշխատուժը:

- **Ռեսուրսների արդյունահանման ռեգիոններ:** Սակայն սրանցում պահպանվում է գաղութային տնտեսության ձևը՝ եկամտի արտահոսքով, իսկ նորամուծությունները ներդրվում են ավելի դանդաղ [59, էջ 131-132]:

Ըստ 2009 թ. Համաշխարհային բանկի հաշվետվության [141], տարածքի մրցակցային առավելությունները ձևավորում են երեք բազային գործոններ, որոնց անվանում են «3D չափահամակարգ».

1. **Density** (խտություն)-բնակչության տարածական կենտրոնացումն է և ագլոմերացիոն արդյունքը,
2. **Distance** (հեռավորություն)-տնտեսական հեռավորությունն է, որը պայմանավորված է համաշխարհային շուկայի հեռավորությամբ, տրանսպորտային և տեղափոխման ծախսերով, ենթակառուցվածքի զարգացվածությամբ,
3. **Division** (բաժանում)-ինստիտուցիոնալ արգելքներն են, այդ թվում սահմանային արգելքները, որոնք խոչընդոտում են ապրանքների, ծառայությունների, նորամուծությունների թափանցմանը և տարածական շարժունակության ինստիտուցիոնալ արգելքները [40, էջ 159-162]:

Ընդ որում, տարբեր աշխարհագրական մասշտաբներում «3D չափահամակարգի» մակարդակների առաջնայնությունները տարբեր են (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Տարածքի աշխարհագրական մասշտաբը և տնտեսական աշխարհագրության «3D չափահամակարգի» մակարդակների առաջնայնությունը [40, էջ 162]

	Աշխարհագրական մասշտաբ		
	Տեղական	Ազգային	Միջազգային
Չափահամակարգի ընտրություն	Շրջան	Երկիր	Ռեգիոն
Հեղինակավոր չափահամակարգ	Խտություն	Հեռավորություն	Բաժանում
Կարևորությամբ երկրորդ չափահամակարգ	Հեռավորություն	Խտություն	Հեռավորություն
Կարևորությամբ երրորդ չափահամակարգ	Բաժանում	Բաժանում	Խտություն

Վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տնտեսության աճը և մոդեռնիզացիան առավել արագ է ընթանում այն տարածքներում, ուր առկա են նորամուծությունների դիֆուզիայի համար լավագույն պայմաններ. ինչպիսիք են բնակչության և նրա որակի բարձր կոնցենտրացիան, ենթակառուցվածքի առավել զարգացվածությունը, փոքր տնտեսական հեռավորությունը, ցածր ինստիտուցիոնալ արգելքները: Իսկ տվյալ եզրահանգումից էլ հետևում է, որ տնտեսական զարգացվածություն և մրցունակություն ապահովելու համար հարկավոր է լուծել հետևյալ խնդիրները.

1. քաղաք-կենտրոնների հովանավորում, որոնք ծնում են նորամուծություններ և տարածում ծայրամասեր,
2. ենթակառուցվածքի զարգացում, որը թույլ է տալիս կրճատել տնտեսական հեռավորությունը,
3. «երկրորդ բնույթի» գործոնների բարելավում:

Այսպիսով, պետության ծաղկումը կապված է համաշխարհային շուկայում նրա մրցունակության մակարդակից, իսկ մրցունակության մակարդակը՝ ռեգիոնների նախադրյալների արդյունավետ օգտագործումից: Ռեգիոնների նախադրյալների առավելագույն օգտագործումն էլ իր հիմքում ունի, ըստ մեզ, մրցունակությունը ապահովող վերոհիշյալ երեք բաղադրիչների՝ **մրցակցային առավելությունների դաշտի, մրցակցային առավելությամբ արտադրությունների և մրցակցային առավելությամբ տարածքների**, համալիր գնահատումն ու գիտական կազմակերպումը: Եթե առաջին բաղադրիչը՝ մրցակցային առավելությունների դաշտը, որոշում է ազգային տնտեսության զարգացման նախադրյալներն ու հնարավորությունները, ապա երկրորդ և երրորդ բաղադրիչները որոշում են տնտեսության, մի դեպքում՝ տարածքային և մյուս դեպքում՝ գործառույթային կազմակերպման առանձնահատկությունները, որոնք ոչ պակաս կարևոր են երկրի մրցունակության գործընթացում: Իսկ մրցակցային առավելությունների երկրորդ և երրորդ բաղադրիչները դրված են աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիմքում, որոնք միանշանակորեն հենվում են երկրի ռեսուրսային ներուժի և հնարավորությունների վրա:

Ռեգիոնալ տնտեսական զարգացման ժամանակակից պրակտիայում աճի բևեռների ու կենտրոնների գաղափարները հաջողությամբ իրականանում են **ազադ տնտեսական գոտիների, տնտեսական կլաստերների, տեխնոպարկերի և տեխնոքաղաքների** ստեղծմամբ [98, էջ 7]:

1.2. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական գիտությունների տեսական վերագինման ներկա փուլին, որը սկսվել է անցյալ դարի կեսերին, բնորոշ են մեթոդաբանական նոր մոտեցումների, տե-

սությունների ու հայեցակարգերի ձևավորումն ու զարգացումը: «Աճի բևեռներ» հայեցակարգը թեև ծագել է տնտեսագիտության տեսական դաշտում, սակայն այսօր հաջողությամբ մուտք է գործել նաև աշխարհագրության տեսական դաշտ, քանի որ իր դրույթներում ունի տնտեսության տարածքային և գործառության կազմակերպման առանձնահատկությունները: Մուտք գործելով աշխարհագրական տեսական դաշտ՝ այն ակնհայտ է աշխարհագրական համալիր ուսումնասիրություն, մեթոդների և մոտեցումների այլ շրջանակներ, և բնականաբար, ուսումնասիրության այլ արդյունքներ ու եզրահանգումներ:

Ֆրանսուա Պերուն տվել է «աճի բևեռ» հասկացության շատ պարզ սահմանում. «դա օբյեկտ է, որն ընդունակ է նպաստել այլ օբյեկտների աճին» [125]:

«Աճի բևեռի» նմանատիպ սահմանում տվել է Կ. Պավլովը. «դա այն է, ինչը նպաստում է սոցիալ-տնտեսական համակարգի զգալի թվով այլ տարրերի աճին» [77]:

Կան «աճի բևեռ» հայեցակարգի բազմաթիվ այլ մեկնաբանություններ.

...քաղաքային միջուկ իր շրջակա տարածքում, որն ընդունակ է բնակչության, տնտեսական գործունեության և եկամտի մակարդակի ինչպես ինքնահոս աճի, այնպես էլ պոտենցիալ աճի (որն անհրաժեշտության դեպքում կարող է խթանվել պետության միջամտությամբ):

...տնտեսական ակտիվության քաղաքային կենտրոն, որն ընդունակ է հասնել ինքնուրույն աճի մինչև որոշակի մակարդակ, որից հետո աճը սկսում է տարածվել կենտրոնի հարակից տարածքներ, և, հետագայում էլ, պետության առավել թույլ զարգացած շրջաններ:

...քաղաքային բնակավայր 250 000-ից ոչ պակաս բնակչությամբ, որը հանդիսանում է զարգացող շրջանի սիրտը [122]:

Ներկա մեկնաբանմամբ՝ աշխարհագրական հանրագիտարանային բառարանում, նրա բացատրությունը տրվում է այսպես.

««Զարգացման բևեռներ» և «աճի կենտրոններ» հայեցակարգը ռեգիոնալ տնտեսագիտության և տնտեսական աշխարհագրության մեջ տեսական հայեցակարգ է. նպատակ ունի բացատրել ժողովրդական տնտեսության տարածական կենտրոնացման գործընթացը և առաջարկել շուկայական տնտեսության պայմաններում ռեգիոնալ զարգացման հիմնախնդիրների կառուցողական լուծումներ: Ըստ այս հայեցակարգի,

տնտեսության բոլոր ճյուղերում արտադրության զարգացումը հավասարապես չի ընթանում, մշտապես կարելի է առանձնացնել դինամիկ (այսպես կոչված զարկերակային) ճյուղեր: Այդ ճյուղերը, հանդիսանալով ողջ տնտեսության զարգացման շարժիչը, իրենցից ներկայացնում են «զարգացման բևեռները»: Արտադրության կենտրոնացման գործընթացը զարկերակային ճյուղերը կենտրոնացնում է որոշակի վայրում (շրջանում)՝ «աճի կենտրոնում» [52, էջ 236-237]:

Մենք լիովին համաձայն ենք վերոհիշյալ սահմանումների հետ, սակայն առաջարկում ենք սահմանման համալրման մեր տարբերակը: Մինչ սահմանումը՝ քննարկենք հայեցակարգում մեզ հուզող մի քանի հարցեր:

Առաջին: Հայեցակարգում կիրառվում են երկու հասկացություններ. «զարգացման բևեռ» և «աճի կենտրոն»: Սրանցով կարծես թե սահմանազատվում են գործառության և աշխարհագրական մասերը: «Զարգացման բևեռի» տակ հասկացվում է գործառության մեկնաբանությունը՝ ճյուղերի հավաքածուն, իսկ «աճի կենտրոնի» տակ՝ աշխարհագրական մեկնաբանությունը, այսինքն կոնկրետ բնակավայրը: Ըստ հայեցակարգի ակնկալվում է երկու այս անբաժանելի մասերի միասնական ուսումնասիրություն: Սակայն, իրականությունն այնպիսին է, որ, նախ, ստեղծվել է տերմինաբանական խայտաբղետություն, կիրառվում են «աճի բևեռ», «զարգացման կենտրոն», «ֆոկուս», «բևեռ» տարբերակները, որոնք կորցրել են իրենց իմաստային հստակությունը, և, ապա, շատ հաճախ, ուսումնասիրություններում դիտարկվում է հայեցակարգի երկու մոտեցումներից միայն մեկը, կամ ճյուղայինը, կամ տարածականը:

Այսպես, աշխարհագետների մի խումբ հիշատակում է «աճի բևեռ» և հասկանում կենտրոններ, որոնք ունեն տնտեսական զարգացման հզոր ներուժ և կարող են նպաստել ողջ ռեգիոնալ տնտեսության զարգացմանը: «Աճի բևեռ» հայեցակարգն ընկալվում է որպես կենտրոնի ընտրության տեսություն: Մոռանալով տնտեսական ծագումը, կենտրոնին վերագրվում է կենտրոնական տեղի մեկնաբանություն և համարժեքացվում բնակավայրի, հիմնականում քաղաքի հետ: Իսկ Պերուի կողմից մատնանշվող տարածքի տնտեսական բևեռացումը փոխարինվում է տարածքի բևեռացված զարգացման հետ:

Աշխարհագետների մի այլ խումբ էլ «աճի բևեռի» ուսումնասիրություններում շեշտը դնում է տնտեսության, մասնավորապես արդյունաբերության առաջատար, մասնագիտացման ճյուղերի ընտրության, տնտեսության կառուցվածքային բարեփոխումների, համաշխարհային շուկայում մրցունակության ապահովման հարցերի վրա:

Ուսումնասիրության երկու ուղղություններն էլ բնական են. առաջինում մեծ տեղ է տրվում հայեցակարգում կիրառվող երկու հասկացություններից աճի կենտրոններին, երկրորդում՝ զարգացման բևեռներին: Երկու ուղղությամբ ուսումնասիրություններն էլ ապահովում են գիտականության բարձր մակարդակ, սակայն ռեգիոնալ զարգացման հա-մալիր և ամփոփ պատկերի ստացման համար անհրաժեշտ է ուղղությունների սին-թեզ:

Երկրորդ: Հայեցակարգում որպես գործառութային հիմք ընդունվում է տնտեսու-թյան միայն նյութական արտադրության ոլորտը: Անտեսվում է տնտեսության ոչ նյու-թական արտադրության ոլորտը և սոցիալական բաղադրիչը: Իհարկե սա թերի է:

Պատմական զարգացման վաղ ժամանակաշրջանում բևեռաստեղծ գործոնների շարքում առաջնային են եղել նպաստավոր բնակլիմայական պայմանները, ապա տ-րանսպորտաաշխարհագրական դիրքը, ավելի ուշ, արդյունաբերական զարգացման սկզբնական շրջանում՝ լեռնահանքային արդյունաբերության ճյուղերը, հետագայում՝ վե-րամշակող արդյունաբերության ճյուղերը: ԳՏԱ-ի պայմաններում, երբ տեղաբաշխման վրա թուլանում է հումքային գործոնի և մեծանում աշխատուժի, կառավարման, տեղե-կատվության, գիտության, կրթության, սոցիալական ենթակառուցվածքի և այլնի ազդե-ցությունը, զարգացման բևեռի նշանակություն են ձեռք բերում այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են վարչական գործոնը, գիտատար արտադրությունները, ծառայությունների ոլորտի ճյուղերը, տուրիզմը և այլն: Ներկայումս, ԳՏԱ զարգացման արդյունքում գոյա-նում են նոր արդյունաբերական ճյուղեր, կրճատվում են տրանսպորտային ծախսերը, մեծանում է ճյուղային և տարածքային կառուցվածքների իներտությունը, փոխվում է պահանջարկի կառուցվածքը և ծավալը: Այդ ամենով պայմանավորված՝ շարունակում են ծնվել բևեռաստեղծ նոր բաղադրիչներ՝ տեղաբաշխման նոր օրենքներով:

Վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ բավականին պարզունակ կլինի, եթե ենթադրենք, որ որպես զարգացման բևեռներ կարող են լինել միայն տնտե-սական գործոնները, այն էլ միայն արդյունաբերության ճյուղերը: Ավելին, որքան բարձր

է երկրի տնտեսական զարգացման մակարդակը, այնքան առավել վստահորեն է մերժվում տվյալ ենթադրությունը:

Երրորդ: Հայեցակարգում հստակեցված չեն բազմամակարդակ ուսումնասիրության անհրաժեշտության հարցերը: Ե՛վ «աճի կենտրոնները», և՛ «զարգացման բևեռները» ունեն ազդեցության տարբեր դաշտեր, և բնականաբար, ճիշտ կլինեն դրանց ենթակարգային ուսումնասիրությունները [49]:

Այսպիսով, ըստ մեր ուսումնասիրության արդյունքների, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը համալիր ու գիտական հետազոտություն կարող է ապահովել միայն հետևյալ պայմանների դեպքում.

1. Հարկավոր է «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» համատեղ ուսումնասիրության սինթեզ՝ չտարանջատելով և չկարևորելով դրանցից մեկը:

2. Հարկավոր է որպես «զարգացման բևեռներ» դիտարկել ոչ միայն արտադրական ոլորտը, ինչպես առաջարկում են տեսության հեղինակները, այլ նաև տնտեսության ոչ նյութական ոլորտն ու սոցիալական, վարչական բաղադրիչները ևս:

3. Հարկավոր է ուսումնասիրություններ կատարել ենթակարգության և «մասշտաբների խաղի» կտրվածքով: Սա հնարավորություն է ընձեռում բազմամակարդակ ուսումնասիրություններով ապահովել երկրի մրցունակության և տարածքային անհամաչափ զարգացման, բևեռացման մեղմացման խնդիրների լուծում: Դրա համար հարկավոր է «աճի կենտրոններում» տարբերակել մայրաքաղաք, խոշորագույն ռեգիոնալ կենտրոն, տարածաշրջանային կենտրոն, տեղական կենտրոն մակարդակներ, և՛, մրցունակ, և՛ ոչ մրցունակ տարածքներ, «զարգացման բևեռներում» տարբերակել հանրապետական, մարզային, տեղական մրցունակ բևեռներ, և, գերակայող-ղեկավար (բազմապատկիչի արդյունքով օժտված), լրացնող ու սպասարկող (ծախս-թողարկում հարաբերության) ճյուղեր:

4. Հարկավոր է ենթակառուցվածքի միասնական ցանցի ստեղծում: «Աճի կենտրոնների» ձևավորման, զարգացման, ազդեցության դաշտի աշխարհագրական ընդարձակման ու ինտենսիվության մեծացման գործընթացում կարևորվում է ճանապարհային և սոցիալ-արտադրական ենթակառուցվածքների միասնական ցանցի ստեղծումը, իսկ «զարգացման բևեռների» բազմապատկիչի արդյունքի մեծացման գործընթացում

կարևորվում է հումքա-էներգետիկ, սպասարկող, օժանդակ արտադրական կապերի ստեղծումը:

5. Հարկավոր է հասարակության զարգացման և տարածքային կազմակերպման փուլա-էվոյուցիոն զարգացման օրինաչափությունների ուսումնասիրություն, որը հնարավորություն է ընձեռում 1. հասկանալ հայեցակարգի էությունը և համապատասխանելիությունը օրինաչափությունների հետ, 2. գնահատել երկրի ներկա վիճակն ու առանձնահատկությունները, 3. զարգացման հաջորդականությունից ու օրենքներից ելնելով անել կանխատեսումներ և դիմամիկ ուսումնասիրություններ [49, էջ 223-225]:

Այսպիսով, քննարկելով տեսության վերոհիշյալ առանձնահատկությունները տանք մեր սահմանումը:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը ռեգիոնալ տնտեսության զարգացման հայեցակարգ է, որում «զարգացման բևեռները»՝ ռեգիոնալ զարգացման գործառության գերակա ճյուղերը, բազմապարկիչի արդյունքի շնորհիվ, իսկ «աճի կենտրոնները»՝ տարաբնակեցման համակարգի կենտրոնական տեղերը, «կենտրոն-ծայրամաս» փոխհարաբերության և դիֆուզիոն տարածման արդյունքում ապահովում են երկրի զարգացում և տարածքային ու գործառության օպտիմալ կազմակերպում: Դրանով իսկ իրականացվում է տարածքի ներուժի լիարժեք օգտագործում, համաշխարհային շուկայում մրցունակության ապահովում և սուր բևեռացված զարգացման մեղմացում:

1.3. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Ըստ հանրահայտ աշխարհագետ Ա. Հետների, օրենքները «լավագույն միջոցներն են, որպեսզի մտովի իշխենք իրականության ողջ բազմազանությանը»: Ապա ավելացնում է. «Օրենքների հաստատման դժվարությունը, որը կապված է գիտելիքների անբավարարության հետ, չպետք է համարել օրենքների հաստատման անհնարինություն ընդհանրապես» [53]:

Մոտ 80 տարի առաջ ասված այս խոսքերը չեն կորցրել իրենց արդիականությունը և կարևոր մեթոդոլոգիական մոտեցում են աշխարհագրական ուսումնասիրու-

թյուններում: Այսօր հասարակական աշխարհագրության շատ հանրաճանաչ ու հեղինակավոր մասնագետներ միանշանակորեն ընդունում են օրենքների բացահայտման կարևորությունը և այդ ուղղությամբ կատարում հաջող ուսումնասիրություններ:

Գիտակցելով օրենքների ու օրինաչափությունների կարևորությունը, փորձենք ամբողջացնել ու լրացնել մեր մեծերի ուսումնասիրության արդյունքները և տալ հասարակության տարածքային կազմակերպման օրենքներն ու օրինաչափությունները, որոնց իմացությունը մեզ հնարավորություն կընձեռի գիտականորեն և հիմնավորված միջամտել ու ուղղորդել հասարակական երևույթները՝ չհակասելով նրանց բնական ու օբյեկտիվ զարգացմանը: Հակառակ դեպքում, ինչպես վկայում են պատմության բազմաթիվ օրինակներ, անհաջողությունն անխուսափ է:

Ըստ **Ա. Տկաչենկոյի**¹ հասարակական աշխարհագրության հեղինակավոր գիտնականներից մեկի հասարակության տարածքային կազմակերպման հիմնական օրինաչափություններն և օրենքները 7 են, որոնց նա անվանում է «սկիզբներ» [94, էջ 215-224]:

1. Տեղերի փոխլրացում: Ըստ որի, երկրի մակերևույթի ոչ մի վայր ընդունակ չէ բավարարել իր բնակչության բոլոր պահանջմունքները, որի հետևանքով էլ առաջանում է գործառույթների փոխանակման անհրաժեշտություն: Վերջինիս արդյունք են հանդիսանում մասնագիտացումը և աշխատանքի աշխարհագրական բաժանումը:

2. Գրավիտացիոն օրինաչափություն: Ըստ որի աշխարհագրական օբյեկտների փոխազդեցության և փոխգործունեության ուժը, մյուս հավասար պայմանների դեպքում, համեմատական է դրանց սոցիալ-տնտեսական զանգվածին և հակադարձ համեմատական դրանց միջև հեռավորությանը:

3. Տարածական կոնցենտրացիա: Ըստ որի երկրի մակերևույթի առանձին հատվածներ, ի շնորհիվ իրենց դիրքի կամ ինչ-որ հատկության, ձեռք բերելով շրջապատի նկատմամբ առավել գրավչություն, վերածվում են բնակչության և նրանց գործունեության կենտրոնացման վայրերի:

4. Աշխարհագրական տարածքի կոնցենտրիկ կառուցվածք: Ըստ որի, կենտրոնացման վայրի ազդեցությամբ, որոնք սովորաբար վերածվում են տնտեսամշակութային կենտրոնների, դրանց հարակից տարածքները ձեռք են բերում կոնցենտրիկ կառուցվածք:

5. Աշխարհագրական տարածքի հիերարխիկ կառուցվածք: Ըստ որի, բնակչության կենսագործունեության տարածքային համակարգերը իրենց կառուցվածքով ենթակարգային են. համակարգերը, որոնք ղեկավարում են առավել փոքր համակարգերը, միաժամանակ մտնում են առավել խոշոր համակարգերի մեջ:

6. Տարածքային (ռեգիոնալ) զարգացման փուլայնություն: Ըստ որի, գործում են տարածքի զարգացման տարածաժամանակային օրինաչափությունները:

7. «Տեղական համապատասխանության» սկզբունք: Ըստ որի, ցանկացած տարածք ունի զարգացման համար բնական, պատմամշակութային, ըստ մեզ, նաև աշխարհաքաղաքական և կառավարման ինքնատիպ պայմաններ:

Մեկ այլ աշխարհագետ **Գ. Պողոթնուշին** տարբերակում է հասարակության տարածքային կազմակերպման չորս օբյեկտիվ օրինաչափություններ [81, էջ 175-181]:

1. Հասարակության զարգացման համակարգասինթերգետիկ բնույթը: Ըստ որի, հասարակության տարածքային համալիրներում և համակարգերում առկա են համակարգային և սինթերգետիկ երևույթներ. էմերջենտություն, անհավասարակշռություն, կայուն և անկայուն իրավիճակների հերթափոխություն և այլն:

2. Հասարակության զարգացման փուլաէվոլյուցիոն զարգացումը: Ըստ որի, հասարակական տարածքային համակարգերում և համալիրներում, դրանց առանձին բաղադրիչներում առկա են զարգացման փուլերի (էվոլյուցիոն գործընթաց), ցիկլերի (կենսագործունեության գործընթաց) հաջորդական հերթափոխություն:

3. Հասարակական տարածական կառույցների ենթակարգություն: Ըստ որի, հասարակական տարածական համակարգերի և համալիրների բաղադրիչների գործառույթների ու նշանակության, ինչպես նաև տարածական ենթահամակարգերի միջև առկա է մասշտաբային և ուղղահայաց ենթակարգություն:

4. Հասարակական տարածական համակարգերի զարգացման մուլտիպլիկացիոն պայմանավորվածություն: Ըստ որի, տարածական համակարգերում և համալիրներում առկա է զարգացման գործոնների և պայմանների բազմապատկման ազդեցություն, որի արդյունքում համակարգաստեղծ բաղադրիչների ստեղծմանը զուգընթաց ձևավորվում են նաև օժանդակ, սպասարկող, ուղեկցող և այլ բաղադրիչներ:

Մեծապես համաձայնելով վերոհիշյալ հասարակական տարածական կազմակերպման օրենքներին և օրինաչափություններին, առաջարկում ենք տարբերակել ՀՏԿ հետևյալ օրենքներն ու օրինաչափությունները և դրանց խմբերը [51, էջ 332-333]:

1. ՀՏԿ համակարգասինէներգետիկ օրենքներ.

- Համակարգի բաղադրիչների ֆունկցիոնալ ինքնատիպության և փոխլրացման օրենք (տեղերի փոխլրացման օրենք),
- Համակարգի բաղադրիչների փոխապայմանավորման օրենք (բազմապարկիչի արդյունք),
- Սիներգետիկ փոխներթափանցման, որակական սինթեզի օրենք (բաղադրիչների գործունեության փոխներթափանցում, որի արդյունքն ավելին է, քան բաղադրիչների արդյունքների մեխանիկական գումարը),
- Ինքնազարգացման, ինքնակարգավորման (որպես համակարգի քանակական փոփոխությունների), ինքնակազմակերպման (որպես համակարգի որակական փոփոխությունների) օրենք, կապերի և դրանց հակազդող հակադարձ կապերի միասնության օրենք:

2. ՀՏԿ փուլաէվոլյուցիոն զարգացման օրենքներ.

- Ցիկլիկ զարգացման օրենքներ,
- Էվոլյուցիոն զարգացման օրենքներ:

3. ՀՏԿ ենթակարգության օրենքներ.

- Հասարակական տարածական կառույցների ենթակարգության օրենք (ուղղահայաց ենթակարգություն),
- «Մասշտաբների խաղի», ուսումնասիրության մասշտաբների ենթակարգության օրենք (հորիզոնական ենթակարգություն):

4. ՀՏԿ կենտրոնացման (կոնցենտրացման) օրենքներ.

- Տարածական կոնցենտրացման օրենք,
- Գրավիտացիոն օրենք,
- Կոնցենտրիկ կառուցվածքների ձևավորման օրենք:

5. ՀՏԿ ապակենտրոնացման (դիֆուզիայի) օրենքներ.

- Ընդարձակման դիֆուզիայի օրենքներ,

Ընդարձակման դիֆուզիա (երբ նորամուծությունները առաջացման կետից տարածվում են հարակից տարածքներ բոլոր ուղղություններով),

Տեղափոխման դիֆուզիա (երբ նորամուծությունների տարածումն ընթանում է որոշակի ուղղությամբ),

- *Հերարխիկ դիֆուզիայի օրենքներ* (երբ նորամուծությունների տարածումն ընթանում է.
 - զարգացած երկրներից զարգացող երկրներ,
 - բարձր կարգի կենտրոններից ցածր կարգի կենտրոններ):

6. Տեղական համապատասխանության օրենքներ.

- *Բնատեսուրսային բազմազանության օրենք,*
- *Պատմամշակութային բազմազանության օրենք,*
- *Աշխարհաքաղաքական բազմազանության օրենք,*
- *Կառավարման բազմազանության օրենք:*

Նկատի ունենալով

1. ՀՏԿ ընդհանուր օրենքներն ու օրինաչափությունները,
2. հասարակության բարդ կառուցվածքը՝ ոլորտներն ու բաղադրիչները,
3. ՀՏԿ արդեն իսկ ստեղծված տեսություններն ու հայեցակարգերը,

փորձ է արվել ամբողջացնել ռեգիոնալ զարգացման տարածքային ու գործառության կազմակերպման առանձնահատկությունները պայմանավորող գործոնները [51, էջ 332-333]: Դրանք են.

- ***Բնատեսուրսային գործոն.*** որպես անիզոտրոպ միջավայր, ուր ընթանում են հասարակական կյանքի տարածքային դրսևորումները:

- ***Տարածքի բևեռացման գործոն.*** կենտրոն-ծայրամաս փոխհարաբերության տարածական կազմակերպման օրինաչափությունները որպես տարածական կենտրոնացման և ապակենտրոնացման դրսևորում (Ջ. Ֆրիդմանի կենտրոն-ծայրամաս փոխհարաբերության տեսություն) [111]:

- ***Սոցիալ-տնտեսական գործոն.*** սոցիալ-տնտեսական զարգացման տարածական և գործառության օրինաչափությունները որպես տնտեսական բաղադրիչի փուլաէվոլյուցիոն զարգացման և տարածքային կազմակերպման դրսևորում (տնտեսության զարգացման Ն. Կոնդրատևի մեծ ցիկլերի տեսություն) [64]:

- **Տարաբնակեցման գործոն.** տարաբնակեցման զարգացման տարածական օրինաչափությունները որպես բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման փուլաէվոլյուցիոն զարգացման և տարածքային կազմակերպման դրսևորում (Զիբսի տարաբնակեցման էվոլյուցիայի տեսություն) [112]:

- **Ենթակառուցվածքի գործոն.** ենթակառուցվածքի (հատկապես տրանսպորտային ցանցի) զարգացման օրինաչափությունները որպես ենթակառուցվածք բաղադրիչի փուլաէվոլյուցիոն զարգացման և տարածքային կազմակերպման դրսևորում (Տարխովի տրանսպորտային ցանցի էվոլյուցիայի տեսություն) [93]:

- **Ինքնազարգացման, ինքնակարգավորման ու ինքնակազմակերպման գործոն.** որպես տարածքի՝ բարդ համակարգի բաղադրիչների կապերի ու հակադարձ կապերի միասնության դրսևորում [41]:

- **Սինէնթրոպիկ գործոն.** որպես բոլոր գործոնների արդյունքների որակական սինթեզի դրսևորում [101, 102]:

- **Ենթակարգության գործոն.** որպես տարածքի՝ բարդ համակարգի բաղադրիչների, ենթահամակարգերի ենթակարգության, դրանց գործառության գործունեության տեսականու և հավաքածուի համապատասխանության դրսևորում (Կրիստաեւլեր-Լյոշի կենտրոնական տեղերի տեսություն) [106, 70]:

- **Բազմապատկման գործոն.** որպես համակարգի դոմինանտ բաղադրիչի բազմապատկիչի արդյունքի դրսևորում (աճի բևեռի և ՏԱՀ-ի հայեցակարգեր) [125, 63]:

- **Գլոբալիզացման գործոն.** համաշխարհային շուկան, միջազգային աշխատանքի աշխարհագրական բաժանումը, վերազգային ընկերությունները, ֆինանսաարդյունաբերական խմբավորումները՝ որպես բաց համակարգի կարևոր արտաքին գործոններ:

- **Աշխարհաքաղաքական գործոն.** վարչատարածքային բաժանումը, ներքին և արտաքին քաղաքական պայմանները, կառավարման ձևերն և այլն՝ որպես տեղական ինքնատիպության գործոններ:

- **Պատմամշակութային գործոն.** պատմական իրադարձություններն և սոցիալ մշակութային պատկանելիությունը՝ որպես տարածքային կազմակերպման տեղական ինքնատիպության գործոններ:

Այս գործոնների համատեղ դրսևորման արդյունքում ձևավորվում է ռեգիոնի տարածքային և գործառության կազմակերպման պատկերը, բացատրվում տարած-

քային անհավասար զարգացման առանձնահատկությունները, բացահայտվում զարգացման միտումները, և որպես բոլորի արդյունք, կանխորոշվում կառավարման և ռեգիոնալ քաղաքականության ուղղություններն ու գործընթացները:

Տարածքային և գործառության կազմակերպման վերոհիշյալ օրինաչափությունները հնարավորություն են ընձեռում հասկանալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի շատ առանձնահատկություններ, «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» զարգացման փուլաէվոլյուցիոն փոփոխությունները, զարգացման տարբեր փուլերում հարակից տարածքների հետ դրանց փոխհարաբերությունները:

Այսպես, **«աճի կենտրոնները»** իրենց ձևավորման վաղ փուլերում, երբ դրանցում մեծ են կենտրոնացման գործընթացները և ձևավորվում են շրջակա տարածքների էներգետիկ, նյութական և ինֆորմացիոն ռեսուրսների կլանման շնորհիվ, դրսևորում են բևեռացման բացասական ազդեցություն: Բացասական ազդեցությունը նկատել և իրենց աշխատանքներում դիտարկել են շատ հետազոտողներ, որոնցից մեկն է Գ. Միրդալը [123]: Ըստ նրա, «աճի կենտրոնի» մրցակցության պայմաններում մեծապես կարող է թուլանալ հարակից տարածքների արդյունաբերությունը: «Աճի կենտրոնում» լավագույն հնարավորությունների առկայության արդյունքում հարակից տարածքները կարող են զրկվել նաև աշխատուժի զգալի մասից, խնայողություններից, սոցիալ-տնտեսական բազմաթիվ հնարավորություններից: Կենտրոններում կենտրոնացման գործընթացի շարունակական բնույթը կարող է էլ ավելի սրել բևեռացման բացասական հետևանքները: Այստեղից եզրակացնում ենք, որ թեպետ էվոլյուցիոն զարգացման գործընթացի հաջորդականության առաջընթաց իմացությանը, հարկավոր է կառավարման գիտականորեն հիմնավորված միջամտություն, այլապես բևեռացման խորացման երկարաժամկետ ձրգվածությունը կարող է երկրի առջև դնել մի շարք կենսական կարևորության խնդիրների լուծման անհրաժեշտություն:

Տարաբնակեցման զարգացման ավելի ուշ փուլերում, երբ կենտրոնացման գործընթացներին զուգահեռ հանդես են գալիս նաև ապակենտրոնացման գործընթացները, մեծանում է «աճի կենտրոնների» դրական ազդեցությունը: Գ. Միրդալը և բազմաթիվ այլ հետազոտողներ եզրահանգում են, որ որքան բարձր է տնտեսության զարգացման մակարդակը և աճի տեմպերը, այնքան մեծ է «աճի կենտրոնների» դրական, քան բացասական ազդեցությունը:

Այսպիսով, կենտրոնի և նրա ազդեցության գոտու միջև գործում են ուղղակի և հակադարձ կապեր: Կապերի հարաբերակցությունները զարգացման տարբեր փուլերում, բնականաբար, տարբեր են, և որևէ մեկի գերակայության ժամանակ խոսում ենք կամ ուղղակի (բևեռացման), կամ հակադարձ (համահարթման) կապերի մասին: Եթե զարգացման նախնական փուլերում գերակայում են ուղղակի կապերը, սրվում է բևեռացումը, ապա կենտրոնի ձևավորման և զարգացման ավելի ուշ փուլերում գերակայում են հակադարձ կապերը, տեղի է ունենում համահարթում: Այստեղից էլ կենտրոնի զարգացվածության աստիճանի և նրա ազդեցության գոտու կապի անժխտելի փաստը, թե «Ինչպիսին քաղաքն է, այնպիսին էլ, որպես օրենք, նրա ազդեցության դաշտում գտնվող գյուղերն են:Առանց զարգացած կենտրոնի չի կարող լինել նաև զարգացած ծայրամաս» [58, էջ 38]: Պատահական չէ, որ գյուղական դեպոպուլյացիայի շրջանները ղեկավարում են փոքր դեպրեսիվ քաղաքները, մինչդեռ համեմատաբար բարենպաստ գյուղական շրջանները տեղաբաշխված են խոշոր և աճող քաղաքներին մոտ:

Ինչ վերաբերում է **«զարգացման բևեռներին»**, ապա գործառույթային կազմակերպման օրինաչափություններից եզրակացնում ենք.

1. հասարակության զարգացման գործընթացում ձևավորվում են տնտեսության զարգացման տվյալ մակարդակին բնորոշ տնտեսության ճյուղեր՝ իրենց տեղաբաշխման առանձնահատկություններով,

2. տարածքի զարգացման տարբեր փուլերին համապատասխանում է տնտեսության ճյուղային տարբեր կառուցվածք և դրանց հարաբերակցություն,

3. «աճի կենտրոններում» նորամուծությունների կենտրոնացմանը զուգընթաց տեղի է ունենում «հնացած արտադրությունների» դիֆուզիա կիսածայրամաս, ապա ծայրամաս:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի համար առանցքային կարևորություն են ներկայացնում **ենթակառուցվածքի** տարածքային կազմակերպման օրինաչափությունները, քանի որ դրանք «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» կապի, միասնական ցանցի ապահովման երակներն են: Ըստ էության, հայեցակարգում «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» գիտական հիմնավորված ընտրությունից հետո ենթակառուցվածքի միասնական ցանցի ստեղծումը երրորդ կարևոր պայմանն է:

Բացի ճանապարհային ցանցի ձևավորման և տարածքի ենթակառուցվածքի յուրացվածության աստիճանի փուլային ուսումնասիրությունից, ոչ պակաս կարևոր է տը-

րանսպորտային նորամուծությունների փուլային ուսումնասիրությունները: Դրանք կարևորվում են հատկապես այն պատճառով, որ տարածքի կազմակերպման գործում տրանսպորտային նորամուծություններն արմատական փոփոխություններ են մտցնում արագության ցուցանիշում: Բնականաբար հաղթահարվում է տարածության և ժամանակի հիմնախնդիրը, և խոսք է գնում տարածության մոտեցման, «տարածքի սեղման» մասին: Նորամուծության ամեն մի թռիչքի դեպքում գծագրվում է տարաբնակեցման մի նոր շերտ՝ առավել հզոր կենտրոնների ցանցով:

Այսպիսով, յուրաքանչյուր տարածք իր յուրացման ընթացքում անցնում է փուլափոխությունից զարգացում: Ռեգիոնալ փուլային զարգացման բավականին հաջող սինթեզի փորձ են արել Գրիցայը, Յոֆֆեն և Տրեյվիշը ուր նրանք սինթեզել են Կոնդրատևի, Ֆրիդմանի, Ջիբսի փուլային պատկերացումները՝ ներկայացնելով սխեմայի տեսքով (նկար 1) [58, էջ 58-61]:

Սխեմատիկ վերլուծությունը հնարավորություն է ընձեռում հետևել տարածական զարգացման միտումների հերթափոխությանը և հաջորդականությանը, բացատրել տարբեր շրջանների զարգացման անհամաչափությունը:

Ինչպես երևում է նկար 1-ից, տարածքի շարունակական զարգացումը հանգեցնում է գոյություն ունեցող ուրբանիստիկ միջուկների սերտաճմանը, և նոր, սկզբում արդյունաբերական, իսկ զարգացման ավելի հասուն փուլերում նաև ԳՏԱ սերման, օջախների ձևավորմանը: Ձևավորված միջուկներն ընդարձակվելով, «լցնում» են տարածքը ըստ սկզբունքի, որը անգլիացի գիտնականներ **Ս. Ռոբերտը** և **Ու. Ռանդոլֆը** պատկերավոր անվանել են «նարինջի վրա բորբոսի սկզբունք» [134]: Այլ կերպ ասած, տարածքի յուրացումը ընթանում է երկու ուղղությամբ. ընդարձակվում են նրա գլխավոր ելակետային օջախները և միաժամանակ նրանցից հեռու գոյանում են բոլորովին նոր կետեր, որոնք աստիճանաբար միանում են վերածվելով մեծ հետքերի:


ա
0 օՇԻՔ

բ
1-3 օՇԻՔ

գ
4 օՇԻՔ

դ
5 օՇԻՔ

ե
6 օՇԻՔ



I $\dot{Y}^{3/2} G$
 $\dot{e}^{1/2} \mu \dot{Y}^{3/2} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \mu^3 \dot{Y} \dot{C}^{1/2} \dot{C}^3$

II $\dot{Y}^{3/2} G$

III $\dot{Y}^{3/2} G$
 $\dot{e} \dot{a} \dot{\eta} \mu^3 \dot{Y} \dot{C}^{1/2} \dot{C}^3$

IV $\dot{Y}^{3/2} G$
 $\dot{I} \dot{a} \dot{Y} \dot{i} \dot{\eta} \dot{a} \dot{\eta} \mu^3 \dot{Y} \dot{C}^{1/2} \dot{C}^3$


V $\dot{Y}^{3/2} G$
 $\dot{\eta} \dot{a} \dot{\eta} \mu^3 \dot{Y} \dot{C}^{1/2} \dot{C}^3$

$^2 \dot{e}^3 \dot{C} \dot{Y} \dot{Y} \dot{E} \dot{C} \dot{Y}$: $\dot{Y} \dot{a} \dot{\eta}^3 \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{a} \dot{\eta} \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{Y} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \dot{C}$
 $\dot{I} \dot{a} \dot{\eta} \dot{I} \dot{a} \dot{\eta} \dot{U} N1$

$\dot{Y} \dot{a} \dot{\eta}^3 \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{a} \dot{\eta} \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{Y} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \dot{C}$
 $\dot{I} \dot{a} \dot{\eta} \dot{I} \dot{a} \dot{\eta} \dot{U} N2$

$\dot{C} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \dot{C}^3 N1$

$\dot{Y} \dot{a} \dot{\eta}^3 \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{a} \dot{\eta} \dot{U} \dot{a} \dot{\eta} \dot{Y} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \dot{C}$
 $\dot{C} \dot{Y} \dot{a} \dot{\eta} \dot{C}^3 N2$



1 -N1 նորամուծությունների օջախի ծնունդ և ընդարձակում, **2** -N2 նորամուծությունների օջախի ծնունդ և ընդարձակում, **3** -մինչինդուստրիալ, ինդուստրիալ և հետինդուստրիալ ժամանակաշրջանի քաղաքային կենտրոններ, **4** -տարաբնակեցման մեջ կենտրոնամետ կամ կենտրոնախույս գործընթացների ուղղությունը, **5** -մեզամիջուկի և արտաքին ծայրամասի միջև սահմանը

Նկ. 1. «Կենտրոն-ծայրամաս» հարաբերության ձևավորման պատմա-աշխարհագրական փուլերը պայմանական մակրոռեգիոնում. Ն. Կոնդրատևի (K), Զ. Ֆրիդմանի (F', F''), Զ. Զիբսի (G) փուլային հայեցակարգերի սինթեզ

Գործառույթային տեսակետից, ԳՏԱ սերման օջախներում ծնունդ առած նոր գործառույթները դուրս են մղում հին արդյունաբերական գործառույթներին դեպի արագորեն հասունացող մոտակա կամ հեռակա ծայրամաս: Արագանում է արտաքին ծայրամասի ինդուստրիալիզացիան, որոնք մինչ այդ մասնագիտացված էին առաջին սեկտորի ճյուղերով: Ավելի ուշ, մեծանում են երկրորդական, ապա երրորդական տնտեսական գործունեության ապակենտրոնացման միտումները, իսկ առաջնայինը՝ գյուղատնտեսականը, շարունակում է «սեղմվել»: Քաղաքների համակարգում և տնտեսական շրջաններում մեծանում է բազմակենտրոնությունը:

Զարգացման հասուն փուլերում, ԳՏԱ նորագույն ճյուղերի ներուժի ընդարձակմանը զուգընթաց, արդեն այդ նորագույն ճյուղերն են ձեռք բերում լայնակի տարածում: Միաժամանակ, խոշոր քաղաքային ագլոմերացիաներից դուրս, ի հայտ են գալիս գիտատար արտադրությունների ինքնուրույն կենտրոններ: Որպես օրենք, դրանք տեղաբաշխվում են մեզամիջուկի այն վայրերում, որոնք արդյունաբերության մեջ մեծապես ընդգրկված չեն, և դրանով իսկ պահպանել են իրենց միջավայրը, ունեն

լավ սոցիալական ենթակառուցվածք: Այս ամենը հանգեցնում է կենտրոնախույս միտումների հետագա ուժեղացմանը և տարածքի համատարած յուրացմանը [58, էջ 60-61]:

Այսպիսով, հասարակության տարածքային կազմակերպման օրենքների և դրանց հիման վրա ռեգիոնալ զարգացման տարածական կազմակերպման գործոնների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում մեզ.

- Համոզվել, որ աճի բևեռ և կենտրոն հայեցակարգն իր հիմքում ունի այդ օրենքներն ու օրինաչափությունները, և ռեգիոնալ զարգացումը դիտարկում է հասարակության բոլոր բաղադրիչների տարածքային կազմակերպման համալիր դաշտում:

- Հասկանալ ռեգիոնալ զարգացման գործընթացները, դինամիկ շարժընթացը, դրանց բացասական և դրական դրսևորումներն և իրականացնել գիտականորեն հիմնավորված ռեգիոնալ քաղաքականություն՝ չհակասելով օբյեկտիվ ինքնազարգացման օրենքներին ու օրինաչափություններին:

- Հասկանալ զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների ռեգիոնալ զարգացման գործընթացները և կանխորոշել աճի բևեռ և կենտրոն հայեցակարգի կիրառման տեղական առանձնահատկությունները և ըստ դրա էլ՝ ռեգիոնալ քաղաքականության տարբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսության գլոբալիզացումը, ինտեգրացումը և այդ գործընթացներում ազգային տնտեսությունների աստիճանական ներգրավումը ժամանակակից իրականություն են: Ազգային տնտեսությունները ներառվում են տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման համաշխարհային մրցակցության ազատ շուկայական դաշտ, որի արդյունքում էլ յուրաքանչյուր երկրի առջև բացվում են ոչ միայն նոր հնարավորություններ ու հեռանկարներ, այլ նաև՝ անկանխատեսելի վտանգներ:

Ազգային տնտեսությունների զարգացման ուղղություններից մեկը փակ տնտեսության ստեղծումն է, բայց ինչպես վկայում է երկրների պատմական զարգացման փորձը, ինքնամեկուսացման պայմաններում տնտեսության հետամնացության հաղթահարում հնարավոր չէ: Սա տնտեսության զարգացման մի ծայրահեղությունն է: Մյուս ծայրահեղությունն էլ ազգային տնտեսությունների անսահման բացվածությունն ու թափանցիկությունն է: Այս դեպքում էլ, ինչպես ցույց են տալիս խորհրդային երկրների ազգային տնտեսությունների «ցնցող» բացման օրինակները, կարգավորող մեխանիզմների բացակայության պայմաններում, երբ համաշխարհային ծայրամասը պատրաստ չէ բաց շուկայի և կոշտ մրցակցության պայմաններին, ազգային տնտեսությունները ևս խարխափում են, դառնում խոցելի:

Ազգային տնտեսության զարգացման խոհեմ տարբերակը ակնկալում է համալիր մոդելի ստեղծում, որը կհենվի երկրի ներքին և արտաքին մեծաթիվ ու տարաբնույթ, երբեմն հակասական գործոնների հաշվառման վրա, կներառվի բաց տնտեսական գործընթացների մեջ, հաշվի կառնի համաշխարհային շուկայի առանձնահատկությունները, կնպաստի օտարերկրյա կապիտալի ընտրովի ներհոսքին, կապահովի արտադրական մասնագիտացում և համալիրություն (տնտեսական հարաբերական ինքնուրույնություն), կպաշտպանի տեղական մասնավոր սեփականության իրավունքները:

Այս գործընթացի իրականացման գործում մեծապես կարևորվում է կառավարության միջամտությունը և գիտականորեն հիմնավորված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունը:

Պետական տնտեսական քաղաքականությունը պետության կողմից կիրառվող այն միջոցառումների և եղանակների ամբողջությունն է, որն ուղղված է տնտեսական գործընթացների կարգավորմանը:

Ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը պետական կարգավորման բաղկացուցիչ մաս է, օրենսդրական, վարչական և տնտեսական միջոցառումների համալիր, որը նպաստում է արտադրողական ուժերի առավել ռացիոնալ տեղաբաշխմանը և բնակչության կյանքի մակարդակի համահարթմանը: Ռեգիոնալ քաղաքականության գլխավոր նպատակն երկրի շրջանների միջև սոցիալական և տնտեսական առավել սուր անհամամասնությունների հարթեցումն է:

Մասնագետները, մասնավորապես **Գ. Կամերոնը, Օ. Կուզնեցովան** [66, էջ 63] և ուրիշներ, երկրների տնտեսական զարգացման գործընթացում պետական միջամտության և ռեգիոնալ քաղաքականության անհրաժեշտության երեք մոտեցում են տարբերակում:

«Նեխնյերվենցիոնալ»- սկզբունքորեն մերժում է ռեգիոնալ աճի գործընթացում կենտրոնական կառավարման ազդեցության անհրաժեշտությունը:

«Ադապտոր»- ընդունում է երկրի զարգացման գործընթացում պետական կառավարման աննշան ուղղորդումն ու շուկայական տարերային ուժերի ազդեցության մեղմացումն՝ ի շնորհիվ բնական գործընթացների խթանման:

«Ռադիկալ վերափոխման»- կողմնակից է պետական և ռեգիոնալ քաղաքականության ակտիվ կառավարման:

Առաջին դեպքում ձևավորվում է շուկայական համակարգ, որի «առանցքային գիծը մրցակցությունն է և գենետիկորեն իր մեջ կրում է բևեռացման գործընթացներ» [44, էջ 47]: Շուկայի այս թերությամբ են բացատրվում երկրների բևեռացված զարգացման և անհամամասնությունների սրման հիմնախնդիրները:

Երրորդ դեպքում ձևավորվում է պլանային համակարգ, որի հիմքում էլ ընկած է այսպես կոչված «հավասարեցումը»: Վերջինս հաճախ հակասում է բնական զարգացման գործընթացներին:

Ըստ մեր դիտարկումների, առավել ցանկալի է «ադապտոր» մոտեցումը, որը սակայն դրական արդյունք կարող է ապահովել միայն հենվելով հասարակության զարգացման օրենքների ու օրինաչափությունների վրա: Դրան հակառակ գործընթացները, որ-քան էլ նպատակները լինեն ցանկալի, դրական արդյունք չեն ապահովի, որի մասին վկայում են ռեգիոնալ քաղաքականության պատմության անհաջող փորձերը, կամ էլ կպահանջեն մեծ ներդրումներ՝ բարենպաստ պայմանների ստեղծման համար:

Երկրների զարգացման գործընթացում պետական միջամտության և ռեգիոնալ քաղաքականության կարևորությունը փաստում են նախկին սոցիալիստական երկրների, այդ թվում և Հայաստանի, շուկայական ռեֆորմացման պատմության էջերը: Այս երկրները թևակոխելով շուկայական հարաբերություններ, հայտնվում են սոցիալ-տնտեսական ճգնաժամում, որի մասշտաբներն և տևողությունը գերազանցում են նույնիսկ առավել վատատես սպասումները, իսկ տարածքի բևեռացված զարգացման արդյունքում՝ սրվում ռեգիոնալ անհամամասնությունները: «Երկրների տնտեսական վերակազմավորման փուլում ճիշտ պետական քաղաքականության դեպքում հնարավոր էր խուսափել ճգնաժամերի կործանարար հարվածներից կամ դրանք արագորեն հաղթահարել, որի ակնառու օրինակներ էին Հունգարիան, Չեխիան և Սլովակիան, որոնք կարողացան պահպանել բնակչության կուտակումները, մտցնել վարկեր, ճնշել ինֆլացիան, երկրում ներքին գները պահպանել միջազգայինից 30% ցածր և, որի արդյունքում էլ, արագորեն ներգրավվել աշխատանքի համաշխարհային բաժանման համակարգ և երկիրը ներդրումների համար դարձնել գրավիչ» [44, էջ 47]: Այնինչ, սոցիալիստական մյուս երկրներին չհաջողվեց նման քաղաքականություն վարել և հայտնվեցին խորը ճգնաժամում:

Ընդունելով պետական տնտեսական կառավարման ու ռեգիոնալ տնտեսական քաղաքականության կարևորությունը, այնուհանդերձ պետք է ընդունենք նաև, որ այն չպետք է լինի ինքնանպատակ և գտնվի ակտիվ կառավարման և հսկողության դերում: Պարզապես պետք է լինի այն հոգատար «ձեռքը», որը գիտականորեն հիմնավորված միջոցներ է ձեռնարկում իր առջև դրված նպատակների և խնդիրների լուծման համար: Ինչպես վկայում է մի շարք երկրների, հատկապես Արևմտյան Եվրոպայի, ռեգիոնալ քաղաքականության պատմության փորձը, կախված ժամանակի հրամայականից, երկրի զարգացման մակարդակից, երկրում առկա խնդիրներից և բազմաթիվ այլ

պատճառներից, պետական տնտեսական կառավարումը և ռեգիոնալ քաղաքականությունը կարող է լինել ակտիվ կամ պասիվ, և կարող է ցուցաբերել քանակական (դրամական) կամ որակական (իրավական) աջակցություն [21, էջ 105]:

Ռեգիոնալ զարգացման կարգավորման գործընթացներ սկսել են իրականացվել դեռևս XIX դարի կեսերին, սակայն այն զանգվածային բնույթ է ստացել միայն XX դարում: Ռեգիոնալ քաղաքականության առաջին գործընթացը սկսել է 1930-ական թվականներին և գլխավոր պատճառը 1929-1932 թթ., տնտեսական ճգնաժամի հետևանքների վերացումն էր, որոնք առավելապես դրսևորվել էին ծայրամասային և թույլ զարգացած շրջաններում: Այդ ժամանակաշրջանում ռեգիոնալ քաղաքականության ծրագրեր իրականացվել են հատկապես Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում:

Ռեգիոնալ քաղաքականության վաղ փուլում նրա տեսական դրույթներում դրված էին **քենսյան** և **նեոկլասիկ** մոտեցումները: Ըստ այս տեսական մոտեցումների ընդունվում էր երկրների տնտեսական ազատ մրցակցությունը: Ազատ անկառավարելի շուկան բնական գործընթացում պայմանավորում է ռեգիոնալ զարգացման անհավասարություն: Տնտեսական զարգացումը կապվում էր արտադրական ներուժի՝ տեխնոլոգիական մակարդակի բարձրացման, ներդրումների մեծացման, աշխատուժի քանակի ավելացման և որակի բարձրացման, բնական ռեսուրսների յուրացման խթանման հետ: Ազգային տնտեսության զարգացումը բացատրվում էր որպես ազատ մրցակցության արդյունքում ռեսուրսների արդյունավետ բաշխում: Ենթադրվում էր, որ ռեգիոնները մրցում են միմյանց հետ արտադրության գործոնների համար: Ըստ նրանց, որևէ ռեգիոնի առաջընթաց աճ հնարավոր է միայն այլ ռեգիոնների աճի տեմպերի նվազման հաշվին: Այս ենթադրություններից էլ եզրակացվում էր, որ միջռեգիոնալ տարբերությունների հարթում հնարավոր է ի հաշիվ զարգացած շրջաններից դեպի առավել թույլ զարգացած և քիչ եկամտաբեր շրջաններ կապիտալի և աշխատուժի տեղափոխման [62, էջ 35]:

Ռեգիոնալ քաղաքականությունը, որը հենվում էր **նեոկլասիկ** մոտեցման վրա, առաջարկում էր.

- ներդրումների աճ առավել թույլ զարգացած շրջաններ,
- արտադրական ենթակառուցվածքի կատարելագործում,
- բնակչության միգրացիայի հնարավորությունների խթանում [62, էջ 35]:

Քենսյան մոտեցումը հատկապես կարևորում էր պահանջարկի գործոնը և կենտրոնանում էր արտադրանքի արտահանման և մասնագիտացման արտադրությունների ստեղծման վրա, որոնք և որոշում են ողջ երկրի տնտեսական առաջընթացը:

Քենսյան մոդելի վրա հենվող ռեգիոնալ քաղաքականությունը առաջարկում էր.

- խթանել ռեգիոնից արտահանման պահանջարկը,
- աշխատուժ և կապիտալ ներդնել բազիսային՝ արտահանման մեջ կողմնորոշ վաճ ոլորտներում [62, էջ 36]:

50-ական թթ. ռեգիոնալ քաղաքականության տեսական դրույթներում սկսում են դրվել նաև **կոմուլյատիվ** մոտեցումները, որին և դասվում է աճի բևեռ և կենտրոն հայեցակարգը: Ըստ այս մոտեցումների, նախ և առաջ, մեծապես կարևորվում է պետական կառավարման և ռեգիոնալ տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունը երկրի տնտեսական կայուն զարգացման գործընթացում: Տնտեսական քաղաքականության հիմքում դրվում են «զարգացման բևեռները»՝ դոմինանտ արտադրական ճյուղերը կամ ձեռնարկությունները, և «աճի կենտրոնները»՝ արտադրությունների կենտրոնացման վայրերը, որոնք, ըստ էության ազգային տնտեսության տարածքային և գործառութային բևեռներ են, և որոնց զարգացումն էլ հանգեցնում է երկրի ողջ տնտեսության հորիզոնական և ուղղահայաց զարգացմանը: Կոմուլյատիվ մոտեցումների վրա հենվող ռեգիոնալ քաղաքականությունը առաջարկում է.

- մասնագիտացման բազիսային արտադրությունների կամ ճյուղերի՝ «զարգացման բևեռների» ընտրություն և զարգացման խթանում,
- «աճի կենտրոնների» ընտրություն և զարգացման խթանում,
- տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխումներ:

Ներկայումս լայն տարածում ունեն **մրցակցային առավելությունների** մոտեցումները: Հիմքում ընկած է մրցակցությունը և տեխնիկական առաջընթացների գերակայությունը: Երկրները և ռեգիոնները պետք է առավելագույնս օգտագործեն իրենց արտադրական, ինտելեկտուալ, բնական և այլ առավելություններն երկրի զարգացման գործընթացում: Երկրի ներուժային առավելությունների օգտագործման համար տարբերակում են չորս գործոններ՝ ռեսուրսային գործոն, ձեռնարկությունների ռազմավարություն, պահանջարկ, սպասարկող և օժանդակ ճյուղեր: Ռեգիոնալ քաղաքականության հիմքում կարևորվում է.

- բարենպաստ ներդրումային կլիմայի ստեղծումը,
- գիտատար, ինովացիոն արտադրությունների զարգացման խթանումը,
- լրիվ և հավաստի ինֆորմացիոն հասանելիությամբ շուկայի ձևավորումը:

Այս տեսական մոտեցումների և ռեգիոնալ քաղաքականության պատմական փորձի ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրակացության, որ բոլոր այս մոտեցումներն էլ ճիշտ են, իսկ ռեգիոնալ քաղաքականության պատմության անհաջողություններն, ըստ էության, պատճառ են հասարակության զարգացման օրենքների և օրինաչափությունների չընդհանրացման և միայն նրա որոշակի կողմերի դիտարկման:

Ընդհանրացնելով հասարակության զարգացման օրենքներն ու օրինաչափություններն ու ռեգիոնալ զարգացման տեսական դրույթները՝ եզրակացնում ենք, որ ռեգիոնալ զարգացման համար հարկավոր է ստորև թվարկվող խնդիրների լուծում, և որոնք էլ պետք է դրվեն երկրի պետական կառավարման և ռեգիոնալ քաղաքականության հիմքում [50, էջ 325-326]:

- Երկրում տնտեսության զարգացման համար մրցակցային դաշտի և ներդրումային կլիմայի ստեղծում:
- Գերակա արտադրությունների կամ ճյուղերի՝ «զարգացման բևեռների» ընտրություն և զարգացման խթանում:
- Արտահանման ուղղվածությամբ արտադրությունների ստեղծում:
- Գերակա և արտահանվող արտադրությունների զարգացման խթանման և երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերաձևավորման և բարելավման միջոցառումների իրականացում:
- Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման խթանում:
- Կլաստերների ստեղծում՝ որպես ճյուղային մրցակցային առավելության խթանում:
- Գիտատար, ինովացիոն արտադրությունների զարգացման խթանում:
- «Աճի կենտրոնների» տարբերակում և դրանց զարգացման խթանում: Մրցակցային առավելությամբ և տարածաշրջանային նշանակության «աճի կենտրոնների» զարգացման խթանմամբ կլուծվեն երկրի մրցունակության և համաչափ զարգացման խնդիրները: Մրցակցային «աճի կենտրոններում» նպատակահարմար է արտադրության նորագույն ուղղությունների խթանում, հների՝ սահմանափակում (արտադրական դիֆուզիա), ճգնաժամային և թույլ զարգացած տարածաշրջանային կամ

տեղական նշանակության «աճի կենտրոններում»՝ արտադրության նոր և ավանդական ուղղությունների խթանում:

- Ազատ տնտեսական գոտիների, տեխնոպարկերի ստեղծում՝ որպես տարածքային և ճյուղային մրցակցային առավելության խթանում:
- Ենթակառուցվածքի՝ որպես միասնական և ժամանակակից ստանդարտներին համարժեք հորիզոնական կապերի զարգացում:
- Արտադրական համալիրների՝ որպես արտադրության ուղղահայաց կապերի և համալիր տնտեսության զարգացում:


Անցումային տնտեսությամբ երկրներում առավել շահավետ է ուշադրությունը կենտրոնացնել տնտեսական քաղաքականության վրա, իսկ սոցիալական հարցերը լուծել տնտեսական զարգացման միջոցով:

Թեպետ հայեցակարգերի սինթեզին, ռեգիոնալ քաղաքականության վերոհիշյալ խնդիրների հիմքում դրված են տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման՝ «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» տեսական դրույթները:

2.2. ՌԵԳԻՈՆԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՍՏ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ

Տարբերում են ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկու տիպ՝ համահամակարգային և սելեկտիվ (նկար 2):



Նկ. 2. Ռեգիոնալ տնտեսական քաղաքականության մոդելները [149]

Համահամակարգային ռեգիոնալ քաղաքականությունը ուղղված է երկրի ռեգիոնալ զարգացման ընդհանուր նախադրյալների ստեղծմանը: Պետական կառավարման մարմինների միջոցառումները չունեն ընտրողական մոտեցում և հավասարապես են ազդում երկրի բոլոր տարածաշրջանների ու տնտեսական գործունեության ոլորտների վրա, ձևավորելով նրանց ինքնուրույն ակտիվության համար տնտեսական, կազմակերպչական, իրավական բարենպաստ միջավայր: Սելեկտիվ ռեգիոնալ քաղաքականությունը ակնկալում է պետական կառավարման մարմինների նպատակային աջակցություն ընտրյալ տարածքներին՝ նպատակ ունենալով ապահովել տնտեսական ակտիվության արդյունավետ կամ համաչափ բաշխում:

Սելեկտիվ ռեգիոնալ քաղաքականության օբյեկտի, այսինքն աջակցության ենթակա տարածքների, ընտրությունը կախված է պետության ռեգիոնալ տնտեսական քաղաքականության նպատակներից:

Նպատակներից առաջինն երկրի մրցունակության ապահովումն է, որն ակնկալում է մրցունակ կենտրոնների ստեղծում և դրանց զարգացման արագընթաց տեմպերի ապահովում: Իր հիմքում ունի շուկայական հարաբերությունների առանցքային գործընթացը՝ բևեռացումը և զարգացման տարածքային անհամամասնությունների սրումը:

Նպատակներից երկրորդը՝ տարածքային զարգացման անհամամասնությունների կրճատումն է, որն էլ ակնկալում է ճգնաժամային և թույլ զարգացած շրջաններում կենտրոնների ստեղծում, դրանցում զարգացման խթանում, իսկ առաջատար զարգացած շրջաններում՝ զարգացման սահմանափակումներ: Իր հիմքում ունի պետական աջակցությամբ զարգացման անհամամասնությունների մեղմացումը, որի իրականացման գործընթացները, սակայն, հաճախ հակասում են բնական զարգացման միտումներին: Խնդիրը նրանումն է, որ, ըստ բնական զարգացման միտումների, արտադրությունները ձգտում են զարգացած կենտրոններ, ուր առկա են զարգացման համար նպաստավոր պայմաններ ու նախադրյալներ, այնինչ թույլ զարգացած շրջաններում աշխատանքի արտադրողականությունը ցածր է, կապիտալի փոխհատուցումը՝ վատ, դեպի ուր կապիտալի արհեստական հրապուրումը հանգեցնում է տնտեսական աճի տեմպերի անկման:

Ստացվում է հակամարտություն տնտեսության աճի տեմպերի բարձրացման և տարածքային զարգացման անհամամասնությունների կրճատման գործընթացում: «Այս

հիմնախնդիրը լավ ուսումնասիրված է արևմտյան գրականությունում, որտեղ այն ստացել է «հավասարություն-արդյունավետություն» հակամարտություն անվանումը [42]:

Ըստ պետության առջև դրված նպատակների էլ ձևավորում են ռեգիոնալ քաղաքականության երկու մոդելները՝ **համահարթեցման**, որի դեպքում ընտրողական աջակցությունը տրվում է ճգնաժամային և հիմնախնդրային տարածաշրջաններին և սահմանափակվում զարգացած տարածաշրջանների զարգացումը, և **բևեռացման**, որի դեպքում էլ աջակցություն տրվում է առավել զարգացած տարածաշրջաններին՝ աճի կենտրոններին:

Սելեկտիվ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրությունը բավականին բարդ և հակասական խնդիր է:

Սակայն այսօր, ռեգիոնալ զարգացման հայեցակարգերի տեսական հիմքերի ուսումնասիրությունների, ինչպես նաև հասարակության զարգացման օրենքների ու օրինաչափությունների ընդհանրացումների, տարածքի զարգացման փուլաէվոլյուցիոն զարգացման առանձնահատկությունների ամբողջացման արդյունքում, կարող ենք այս հակասական խնդրին լուծում տալ:

Լուծումն աճի բևեռներ ու կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունն է, որը հնարավորություն է ընձեռում միավորել սելեկտիվ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկու մոդելները: Հայեցակարգը շատ արագ Արևմուտքում վայելել է մեծ հեղինակություն և դեռևս 60-ական թվականներից դրվել եվրոպական գրեթե բոլոր երկրների ռեգիոնալ քաղաքականության հիմքում:

Այս հայեցակարգի վրա կառուցված ռեգիոնալ քաղաքականության առանձնահատկությունը նրանումն է, որ եթե ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընդունված մոտեցումներում կատարվում է ռեգիոնների տարբերակում, տիպաբանում ըստ տարբեր հատկանիշների կամ ինտեգրալ համաթվերի, դրանցից յուրաքանչյուրում բացահայտվում են ռեգիոնալ և ազգային հիմնախնդիրները, մշակվում դրանց հաղթահարման ուղիներ, աջակցության կամ սահմանափակման ծրագրեր, ապա աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի վրա կառուցված տնտեսական քաղաքականությունը երկրի տարածքի զարգացման և տարբերությունների համահարթման խնդրի լուծման համար առաջարկում է ազգային տնտեսության ճյուղային և տարածքային

առավելությունների բացահայտում՝ «զարգացման բևեռների» (տնտեսության առաջատար ճյուղերի և արտադրությունների) և «աճի կենտրոնների» (արտադրության և բնակչության կենտրոնացման օջախների) հիմնավորված տարբերակում և որպես հենակետային սյուներ՝ դրանց զարգացման խթանում և կառուցողական լուծումների իրականացում, որոնք իրենց զարգացմամբ, ավելի ուշ փուլերում արդեն իներցիոն ձևով կարող են նպաստել երկրի ողջ տնտեսական զարգացմանը և տարածքի զարգացման մակարդակների տարբերությունների մեղմացմանը [21, էջ 107]:

Ըստ մեր դիտարկումների, վերոհիշյալ տնտեսական քաղաքականության դեպքում, կարևորվում են հետևյալ առանձնահատկությունները [21, էջ 108].

Առաջին. «աճի կենտրոնների» ընտրության առանձնահատկությունն է: Ելնելով հայեցակարգի բևեռային զարգացման մոտեցումից, մասնագետների մի խումբ հայեցակարգի սկզբունքներում հասկանում է աջակցություն մրցակցային կենտրոններին, իսկ հետամնաց տարածքների զարգացումը ընկալում որպես առաջատարների զարգացման հետագա տարածում: Մասնագետների մի այլ խումբ էլ հայեցակարգի սկզբունքներում հասկանում է հետամնաց շրջաններում աճի կենտրոնների ստեղծում և վերջիններիս զարգացմամբ տարածքի հետամնացության հաղթահարում: Սակայն, հայեցակարգի հետագա կատարելագործման և պատմական գործնական կիրառման արդյունքների վերլուծությունների արդյունքում, այսօր հայեցակարգը միավորում է վերոհիշյալ երկու մոտեցումները և «աճի կենտրոնները» դիտում որպես տարաբնակեցման, տարածական կառուցվածքի հենքեր, որոնք իրենց ազդեցության դաշտում կրնդգրկեն երկրի ողջ տարածքը, անկախ նրանից գտնվում են մրցունակ թե՛ հետամնաց տարածքում և կլուծեն երկրի թե՛ մրցունակության և թե՛ տարածքի հավասարաչափ զարգացման խնդիրները:

Երկրորդ. կարևոր առանձնահատկությունն այն է, որ աջակցություններ տրվում են ոչ թե դրա անհրաժեշտությունը ունեցող ռեգիոններին, այլ առանձին օջախներին՝ կենտրոններին, որոնց վրա հենվում է ռեգիոնի հետագա զարգացումը: «Այս մոդելի կիրառման դեպքում կրճատվում են աջակցության ենթակա տարածքները. իսկ աջակցության կենտրոններ կարող են հանդես գալ ինչպես առանձին բնակավայրերն, այնպես էլ նրա առանձին հատվածները» [91]: Այս հայեցակարգի տեսական դրույթների հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականության դեպքում առավել

հեշտ է կողմնորոշվել ռեգիոնալ ծրագրերի մշտապես աճող համակարգում և ճիշտ ուղղորդել մշտապես սահմանափակ ֆինանսական օգնությունը:

Երրորդ առանձնահատկությունն էլ «աճի կենտրոններում» գործառության խնայարարականությունն են: Զարգացած կենտրոններում նպատակահարմար է, նորամուծության դիֆուզիայի օրենքներին համարժեք, նորագույն ճյուղերի զարգացման խթանումը և հնացած արտադրությունների սահմանափակումները և արտամղումը կիսածայրամաս կամ ծայրամաս, իսկ հիմնախնդրային շրջաններում՝ նոր կամ ավանդական ճյուղերի զարգացումը:

Չորրորդ առանձնահատկությունը դա «զարգացման բևեռների» և «աճի կենտրոնների» մասշտաբային տարբերություններն են: Այսպես, «զարգացման բևեռները» կարող են լինել մասնագիտացման ճյուղերից մինչև տեղական նշանակության արտադրություններ, իսկ «աճի կենտրոնները»՝ միջազգային մրցունակության կենտրոններից մինչև տեղական նշանակության կենտրոններ:

Ըստ էության, **աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ քաղաքականության համար կարևորվում է գործառության հենքի՝ «զարգացման բևեռների» և տարածքային հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծումը և դրանց տարբերակված աջակցությունը:**

Այսպիսով, աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը հնարավորություն է ընձեռում լուծել երկրների համար կենսական նշանակություն ունեցող մրցունակության և տարածքային համաչափ զարգացման խնդիրները և նպատակաուղղված ուղղորդել պետական աջակցությունը:

Այսօր աշխարհի և, հատկապես եվրոպական, շատ երկրների ռեգիոնալ տնտեսական քաղաքականության հիմքում դրված է Ֆր. Պերուի աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը: Այս ուղին են ընտրել նաև ԱՊՀ մի շարք երկրներ:

Պերուի հայեցակարգի տեսական դրույթների վրա կառուցված քաղաքականությունը հաջողությամբ գործում է նաև նրա ձևավորման հայրենիքում՝ Ֆրանսիայում¹:

¹ Տեսական հիմնավորման զարգացման արդյունքում 1946 թ. հրատարակվում է Ֆրանսիայում Գեներալ պլանավորման կոմիսարիատի ստեղծման մասին դեկրետը, իսկ 1947 թ. ընդունվում՝ զարգացման առաջին նախագիծը (1947-1950-1953 թթ.), ապա երկրորդը (1953-1957 թթ.), երրորդը (1957-1961 թթ.), չորրորդը (1962-1965 թթ.), հինգերորդը (1966-1970 թթ.), վեցերորդը (1971-1975 թթ.) և յոթերորդը (1976-1980 թթ.):

Սակայն, 60-70-ական թթ. պետական տնտեսական քաղաքականությունը սկսում է շրջանցել իր սկզբնական տեսական դիրքերը: Դրան, իհարկե, մեծապես նպաստում է ԵՏՀ ստեղծմանը Ֆրանսիայի մասնակցությունը և

Ուսումնասիրելով տարբեր երկրների ռեգիոնալ տնտեսական քաղաքականության առանձնահատկություններն և հասարակության տարածքային կազմակերպման օրենքներն ու օրինաչափությունները հանգում ենք հետևյալ եզրահանգման, որ աճի բևեռ և կենտրոն հայեցակարգը, դրվելով շատ երկրների տնտեսական ռեգիոնալ քաղաքականության հիմքում, ունի իր կիրառման ռեգիոնալ տարբերություններն ու առանձնահատկությունները [49, էջ 224-225]:

I առանձնահատկություն: Դա երկրների մրցունակության ապահովման և տարածքի համաչափ ու համալիր զարգացման խնդիրների լուծման համամասնության տարբերությունն է:

Տնտեսապես զարգացած երկրներում, տարածքի մեծ յուրացվածության պայմաններում, ուր տարածքի զարգացման անհամաչափությունները սուր չեն, առավել առաջնային է մրցունակության ապահովումը: Զարգացող երկրներում, ուր առկա են տարածքի յուրացման խնդիրներ, ծայրահեղ աղքատ շրջաններ և տարածական զարգացման անհամամասնությունները ձեռք են բերում մեծ սրվածություն, հարկավոր է մրցունակության ապահովման տեմպերի մասնակի զոհաբերում ի օգուտ տարածքային անհամամասնության վերացման՝ քաղաքական ճգնաժամերից խուսափելու համար:

II առանձնահատկություն: Դա «զարգացման բևեռների» ընտրության տարբերություններն են: Զարգացած երկրներում մրցունակության ապահովումը և բևեռացման համահարթումը ընթանում է արդյունաբերական և ագրարային շրջանների տնտեսության կառուցվածքային բարեփոխումների, նրանց արդիականացման, նորագույն նորամուծությունների ներդրման, ժամանակակից արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծման արդյունքում: Զարգացած երկրները լինելով համաշխարհային կենտրոններ, ունենալով զարգացման բարձր մակարդակ, էվոլյուցիոն համակարգում զբաղեցնելով ավելի ուշ փուլեր, լինելով ավելի բարդ համակարգեր, ավելի շատ նորամուծությունների կենտրոններ են և երկրների զարգացման գրավականը նորամուծությունների պայքարում, մրցակցությունում ետ չմնալն է:

ավանդական պրոտեկցիոնիզմից (մաքսային քաղաքականության հովանավորական համակարգից) հրաժարումը: Դիրիժիզմի գաղափարները վերստին կարևորվում են Ֆրանսիայի ներկա կառավարության կողմից: Երրորդ հազարամյակի սկզբին, Ռաֆֆարենի կառավարության ժամանակ, սկսում է նոր տնտեսական ռազմավարության մշակումը, որը 2005 թ. հավանության է արժանանում արդեն Դոմինիկ դե Վիլպենի կառավարության օրոք: Նոր տնտեսական ռազմավարությունը ուղղված է համաշխարհային տնտեսությունում ակտիվ գլոբալիզացման պայմաններում երկրի մրցունակ դիրքերի պահպանմանը և ամրապնդմանը: «Աճի բևեռների» փոխարեն ընտրվում են «մրցակցության բևեռներ»: 2007 թ. Ֆրանսիայում գործում էր 71 բևեռ [55]:

Զարգացող երկրներում մրցունակության ապահովումն ակնկալում է ավանդական և նոր ճյուղերի, սովորաբար հումքատար, աշխատատար, էներգատար, մասամբ նաև գիտատար արտադրությունների մասնագիտացում: Նրանցում առկա է տարածքի միասնական սոցիալական և արտադրական ենթակառուցվածքի ստեղծման անհրաժեշտություն:

III առանձնահատկություն: Դա «աճի կենտրոնների» որակական տարբերություններն են: Զարգացած երկրներում որպես կենտրոններ հանդես են գալիս ագլոմերացիաները, ազատ տնտեսական գոտիները, տեխնոպարկերը և տեխնոպոլիսները, մայրաքաղաքներն ու խոշորագույն քաղաքները:

Զարգացող երկրներում տնտեսության զարգացման կենտրոններ են դառնում մայրաքաղաքներն ու խոշոր քաղաքները, արդյունաբերական հանգույցները, SUՀ-երը, որոնք հնարավորություն են ընձեռում համալիրորեն յուրացնել բնական ռեսուրսները, ստեղծել արտադրությունների տեխնոլոգիական շղթաներ ու միասնական ենթակառուցվածք և ազատ տնտեսական գոտիների պարզագույն տեսակները:

IV առանձնահատկություն: Դա երկրների տեղական առանձնահատկություններն են. աշխարհագրական դիրքի, բնառեսուրսային, պատմական, ժողովրդագրական, մշակութային, քաղաքական, կառավարման գործոնների, արտաքին և ներքին զարգացման հնարավորությունների ամբողջությունը, որոնք երկիրը դարձնում են ինքնատիպ ու անկրկնելի:

Այսպիսով, երկրի տնտեսական հաջողությունների ձեռքբերման գործընթացում գործնական կարևորություն ունի ճիշտ ռեգիոնալ տնտեսական քաղաքականության ընտրությունը: Ըստ մեզ, դա այն քաղաքականությունն է, որն իր հիմքում ունի աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը:

Ժամանակի կտրվածքում հայեցակարգը դրսևորել է գործնական կայունություն, պարզապես փոխվել են դրանց ընտրության չափորոշիչներն ու իրականացվող գործառույթները, իսկ զարգացման ընդհանուր սկզբունքներն և սխեմաները մնացել են նույնը:

Կարծում ենք, որ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի հիման վրա կառուցված ռեգիոնալ տնտեսական քաղաքականությունը, գիտական մոտեցման դեպքում, հնարավորություն է ընձեռում գործել հասարակության տարածքային կազմա-

կերպման օրենքներին համարժեք և ապահովել ցանկալի դրական լուծումներ ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում:

ՀՀ «...տնտեսական քաղաքականությունը կրում է օպերատիվ իրավիճակային բնույթ...» [35, էջ 154]: «Անցած տարիների տնտեսական քաղաքականությունը մեծապես հրամցվել է միջազգային կազմակերպությունների կողմից՝ իրականացվող ծրագրերի տրամաբանությամբ» [35, էջ 186]: Այսօր օրակարգային խնդիր է տնտեսական կառավարման և ռեգիոնալ տնտեսական քաղաքականության երկարաժամկետ ռազմավարության մշակումը, որում կընդգրկվեն ռեգիոնալ զարգացման երեք բաղադրիչների՝ մրցակցային դաշտի, տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման բարեփոխումները:

ՀՀ տնտեսական զարգացման գործընթացում այսօր շեշտադրվում են քաղաքականության հետևյալ անկյունաքարային ուղղությունները [38].

- Տնտեսության բոլոր մասնակիցների համար հավասար պայմանների ապահովում. արդյունավետ շուկայի ձևավորում, մրցունակ բիզնեսի զարգացում, ազատ տնտեսական մրցակցության ապահովում, կապիտալ ներդրումների խրախուսում, գործարար միջավայրի բարելավում:
- Արդյունաբերական քաղաքականության իրականացում. տնտեսության կառուցվածքի բարեփոխում, տեխնոլոգիական նորամուծությունների ներմուծման խրախուսում, հեռանկարային արտադրական համալիրների և արտահանելի հատվածի ընդլայնում:
- Գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական ինստիտուտների ստեղծում և զարգացում. գիտական ներուժի նպատակային վերարտադրություն, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի կազմակերպում, մարդկային կապիտալի զարգացում, արդիական տեխնոլոգիաների ներդրման ընդլայնում: Գործընթացի կարևորագույն ելքը բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցումն ու ստեղծվող նոր արժեքի մեջ մարդկային գործոնի դերի մեծացումն է, բարձր մասնագիտացված ու տեխնոլոգիատար վերջնական արդյունքների թողարկման ու արտահանման ծավալների ընդլայնում:
- Համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ընդլայնում և խորացում. արտաքին տնտեսական գործունեության մասով միջազգային չափանիշներին համարժեք որակի ու մակարդակի ձեռքբերում, արտաքին առևտուրն սպասարկող ինստիտուտների և ենթակառուցվածքների պատշաճ գործունեության ապահովում, առևտրի պայմանների դյուրինացում և որպես փոխլրացնող միջոցառում արտաքին առևտրի խրախուսման ու զարգացման միջազգայնորեն ընդունված գործիքների ու սխեմաների տեղայնացում:

**ԳԼՈՒԽ 3. ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ.**

ՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

3.1. «ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ»

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայեցակարգը ենթադրում է ուսումնասիրության երկու ուղղություն՝ աշխարհագրական՝ «աճի կենտրոնների» և գործառույթային՝ «զարգացման բևեռների», որոնք հանդես են գալիս միասնականորեն: Բացահայտենք դրանց առանձնահատկությունները:

«ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ»

Դրանք այն հանգույցներն են, որտեղ կենտրոնանում են «զարգացման բևեռները»: Տարբերում են կենտրոնների չորս հիմնական տեսակներ.

- պատմական
- վարչական
- ինովացիոն (նորարարական)
- սոցիալ-տնտեսական:

Պատմական մոտեցումը կենտրոններ է համարում այս կամ այն տարածաշրջանի պատմական միջուկները, ինովացիոն մոտեցումը՝ նորամուծությունների ծնման վայրերը, վարչական մոտեցումը՝ վարչական միավորների կենտրոնները, սոցիալ-տնտեսական մոտեցումը՝ տնտեսապես զարգացած կենտրոնները: Այս կենտրոնները կարող են համընկնել ի դեմս մեկ կենտրոնի, կամ հանդես գալ առանձին-առանձին:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգում հեղինակները կենտրոններին մոտենում են միայն սոցիալ-տնտեսական մոտեցմամբ: Այդ իսկ պատճառով Պերուի ենթադրությունը, որ կենտրոնների ձևավորման հիմքում արդյունաբերության առաջատար ճյուղերն են, թերի է: Հետինդուստրիալ հասարակության ներկա փուլում կենտրոնաստեղծ ուժ կարող են ունենալ նաև տնտեսության այլ ճյուղեր ևս, մասնավորապես ոչ արտադրական ոլորտի ճյուղերը, կամ վարչական, պատմական, իննովացիոն և այլ գործառույթները: Եվ ոչ բոլոր կենտրոններն են վերածվում «աճի կենտրոնների». միայն նրանք, որոնք ձեռք են բերում հզոր ներուժ, ինքնազարգացման կարողություն, համակարգաստեղծ նշանակություն:

Ըստ մեր եզրահանգումների, «աճի կենտրոնների» ընտրության համար հարկավոր է հաշվի առնել հետևյալ չափորոշիչները և առանձնահատկությունները:

1. «Աճի կենտրոնների» տիպային առանձնահատկությունները և տարբերությունները: Կենտրոնները տարբերվում են.

- բնակչության թվով,
- գործառույթային կառուցվածքով,
- աշխարհագրական դիրքի առանձնահատկություններով,
- ենթակարգության կառուցվածքում գրաված տեղով,
- զարգացման փուլով և զարգացման տեմպերով,
- արտահանման ծավալներով,
- վարչական կարգավիճակով,
- ազդեցության ներուժի հզորությամբ,
- շրջակա տարածքի հետ կապերի տեսակներով,
- և այլն:

2. «Աճի կենտրոնների» հորիզոնական կապերի ենթակարգային մակարդակները:

Կենտրոններում կապերն իրականանում են ենթակարգային երեք մակարդակներով.

1. առաջատար տնտեսական երկրներից ծայրամասային երկրներ (միջհանրապետական կապեր, որոնք որոշում են երկրի տեղը համաշխարհային աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ),
2. բարձր կարգի կենտրոններից ավելի ցածր կարգի կենտրոններ (միջբնակավայրային կապեր),
3. կենտրոնից հարակից տարածքներ:

Առաջին երկու մակարդակներում կարևոր դեր են խաղում կենտրոնաստեղծ (բազային) գործունեության ձևերը: Դրանք որոշում են նրա մասնագիտացումը կամ գործառույթները, որով նրանք մասնակցում են աշխատանքի աշխարհագրական բաժանմանը: Այս դեպքում կենտրոնները հանդես են գալիս որպես «մասնագիտացման կենտրոններ», որոնք ունեն գործառույթային կապերի այլ տարածական բովանդակություն: «Նրանց կապերը գրաֆիկորեն պատկերվում են ճառագայթների ձևով և ընդունակ են տարածվելու շատ հեռու» [68, էջ 86]:

Մասնագիտացման գործառույթները թեպետ ապահովում են հեռավոր կապեր,

սակայն ունեն, առավել կամ պակաս համակարգաստեղծ նշանակություն, որով և մասնակցում են կենտրոնի ներուժի ստեղծման գործընթացին:

Երրորդ՝ կենտրոնի և հարակից տարածքների փոխհարաբերության մակարդակում ձևավորվում է կենտրոնի ազդեցության գոտին: Այս մակարդակում առավելապես գործում են աշխատանքային, մշակութային, ռեկրեացիոն, գյուղատնտեսական հումքի վերամշակման և արտադրական այն կապերը, որոնք ապահովում են տեղական համակարգաստեղծ գործունեություն:

Կենտրոնը զարգանում և գործում է իր շրջակա տարածքի հետ սերտ փոխազդեցության մեջ. սպասարկում է նրա պահանջմունքները, նրանում գտնում իր զարգացման համար ռեսուրսներ: Այս մակարդակում կենտրոնը հանդես է գալիս որպես «կենտրոնական տեղ», որի փոխազդեցությունը արտահայտվում է մոտակա կապերով մինչև որոշակի սահմաններ, որից հետո այն չի գործում:

ՀՀ տարածքի բևեռացված զարգացման իրական պատկերի բացահայտման համար մեր աշխատանքում կարևորվում է երրորդ՝ կենտրոնի և շրջակա տարածքի փոխհարաբերության մակարդակը, ուր որոշվում են առկա կենտրոնների ազդեցության գոտիները և դրանցից դուրս գտնվող թույլ յուրացված ու ճգնաժամային շրջանները:

3. «Աճի կենտրոնի» և շրջակա տարածքի փոխհարաբերության առանձնահատկությունները: Կենտրոնների ազդեցության գոտում գործում է «կենտրոն-ծայրամաս» մոդելը: «Կենտրոն-ծայրամաս» փոխհարաբերությունը պարզագույն երկբևեռում չէ, ըստ որի տարածքը բևեռացվում է կենտրոնի և ծայրամասի: Առավել ժամանակակից մեթոդիկան նախընտրում է տարածքի եռաբաժանման մոդելի՝ կենտրոն-կիսածայրամաս-ծայրամաս, իսկ ըստ որոշ հեղինակների՝ կրեատիվ-ադապտիվ-կոնսերվատիվ, տարբերակը: «Միջին մակարդակի առկայությունը, լինի ադապտիվ, մոտակա ծայրամաս, թե կիսածայրամաս տարբերակը, ունի մեծ կառուցողական նշանակություն» [58, էջ 73]: Կենտրոնական, կիսածայրամասային և ծայրամասային տարածքներին բնորոշ են մի ողջ շարք նախանշաններ ու զարգացման միտումներ (աղյուսակ 2):

4. «Աճի կենտրոնների» ուղղահայաց կապերի ենթակարգային առանձնահատկությունները: Կենտրոնները, ունենալով տարբեր ներուժ և ազդեցության դաշտեր, տարածքում ստեղծում են բազմամակարդակ ենթակարգային կառուցվածք:

5. «Աճի կենտրոնների» փուլաէվոլյուցիոն առանձնահատկությունները: Զարգացման վաղ փուլերում կատարվում են կենտրոնացման գործընթացներ, ուշ փուլերում՝ առավելապես ապակենտրոնացման:

Աղյուսակ 2

Կենտրոնական, կիսաձայրամասային և ձայրամասային տարածքների հիմնական կառուցվածքային բնութագրիչները [58, էջ 74]

Բնութագիր	Կենտրոն	Կիսաձայրամաս	Ծայրամաս
Զարգացման դինամիկա	Ոչ բարձր, սակայն կայուն զարգացման տեմպեր	Դինամիկ, սակայն անկայուն զարգացում	Անկայուն զարգացում իր ելակետային ցածր մակարդակի պայմաններում
Տնտեսական կառուցվածք	Ոչ արտադրական ոլորտի բարձր և աճող բաժին Որոշումների կայացման և նորամուծությունների գործառույթների կոնցենտրացիա (ԳՏԱ-ի զենեքացման գործառույթներ) Կառուցվածքային վերակառուցում և հին ճյուղերի «մաքրում»	Զբաղվածների բարձր բաժին արդյունաբերության մեջ Կատարողական գործառույթների կոնցենտրացիա, կապված ԳՏԱ-ի հետ, կենտրոնից մեծ կախվածության պայմաններում Ժամանակակից ճյուղերի զարգացում առկա տեխնոլոգիաներով («անգլուխ» տնտեսության ձևավորում)	Զբաղվածների բարձր բաժին առաջնային սեկտորի ավանդական ճյուղերում և ծառայությունների ոլորտում Մասնակցություն աշխատանքի աշխարհագրական բաժանմանը ոչ ԳՏԱ-ի ճյուղերի միջոցով Թույլ ներքին ինտեգրացիա և աշխատանքի աշխարհագրական բաժանմանը մասնակցություն սահմանափակ ուղղությամբ
Սոցիալական կառուցվածք	Աշխատատեղերի կառուցվածքի «բյուրոկրատիզացում» (ոչ արտադրական ստորաբաժանումների աճ) Բնակչության սոցիալական կառուցվածքի բևեռացում Բնակչության կողմնորոշում դեպի իրենց սոցիալական կարգավիճակի բարձրացում	Ինդուստրիալ աշխատանքի ավանդական հմտություններով աշխատողների գերակայություն Բնակչության հարաբերական հոմոգեն սոցիալական կազմ Կողմնորոշում դեպի աշխատավարձի բարձրացում սոցիալական հավասարության ամրացման պայմաններում	Ագրարային աշխատանքի ավանդական հմտություններով աշխատողների գերակայություն Հոմոգեն կամ խիստ հակասական սոցիալական կազմ Կողմնորոշում դեպի ավանդական կյանքի արժեքների պահպանում, նրանց սուր հակամարտություն նորերի հետ
Տարածական կառուցվածք	«Տարածվող» ուրբանիզացված շրջան Բնակչության և տնտեսության բարձր տարածական կոնցենտրացիա	Ակտիվ ուրբանիզացում պոլիցենտրիկ կամ ագլոմերացիոն բնույթի Բարձր կամ միջին տարածական կոնցենտրացիա	Տարածքի արագընթաց բեվեռացում, տարբերակներ. • ավանդական սոցիալ-տնտեսական տնտեսածնի պահպանում • աճի բևեռից դուրս ավանդական տնտեսածնի դեգրադացիա • նոր շրջանների օջախային յուրացում
Զարգացման ընդհանուր միտումները, ռեսուրս-օգտագործման բնույթը	Կրեատիվ և ինովացիոն գործառույթների ուժեղացում Կողմնորոշում դեպի զարգացում, առավելագույն ռեսուրսախնայողություն	Ինովացիոն կամ կոնսերվատիվ գործառույթների պարբերական ակտիվացում ադապտիվ մշտական գոյության պայմաններում Կողմնորոշում դեպի աճ, հնարավորության դեպքում ռեսուրսների պահպանում և զարգացում	Կոնսերվատիվության պահպանում, ադապտիվ գործառույթների մասնակի ներդրում Կողմնորոշում դեպի աճ և ռեսուրսների առավելագույն օգտագործում

Այսպիսով, կենտրոնները ունենալով տիպային տարբեր առանձնահատկություններ՝ գործառության կառուցվածք, սոցիալ-տնտեսական ներուժ, արտաքին կապերի բնույթ և այլ հատկանիշներ, ձևավորում են բազմամակարդակ ենթակարգություն և իրենց ներուժին համարժեք ազդեցության գոտիներ՝ կենտրոն-ծայրամաս սկզբունքով, իսկ նրանց փուլաէվոլյուցիոն զարգացման առանձնահատկություններն որոշում են կենտրոնի և շրջակա տարածքի փոխհարաբերության էությունը ու զարգացման միտումները, որոնց իմացությունը կարող է ապահովել գիտականորեն հիմնավորված կառավարում:

«ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԵՎԵՌՆԵՐ»

Տեսության հաջորդ հատվածն ակնկալում է «զարգացման բևեռների» ընտրություն: Բևեռների ընտրությամբ լուծվում է երկու խնդիր.

1. երկրի մրցունակությունը,
2. երկրի համամասնային զարգացումը:

I ուղղությամբ ընտրվում են մրցունակությունն ապահովող բևեռներ՝ տնտեսության մասնագիտացման ճյուղեր:

II ուղղությամբ ընտրվում են բևեռներ.

1. թույլ զարգացած հիմնախնդրային տարածքների յուրացման համար,
2. ճգնաժամային արդյունաբերական շրջանների վերաակտիվացման համար,
3. ագլոմերացիաների և արդյունաբերական հանգույցների գերկուտակման ապա-կենտրոնացման համար:

«Զարգացման բևեռների» ընտրությունը և զարգացումն ընթանում է երկու ձևով.

1. **իներցիոն**՝ ակնկալում է արդեն իսկ պատմականորեն ձևավորված առանցքային ուղղությունների զարգացում,

2. **նոր ռազմավարական ուղղությունների ընտրություն**, որի համար նախապայման կարող է հանդիսանալ կամ նախկին ուղղությունների զարգացման անհնարինությունը (սոցիալ-տնտեսական ճգնաժամի, աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության, ռեսուրսային բազայի սպառման և այլ պատճառներով), կամ էլ նախկինի համեմատ նորի առավել արդյունավետությունը:

Սա հարցի մեկ կողմն է: Մյուս կողմը բևեռների ընտրության չափանիշների հիմնախնդիրն է: Թվացող պարզությանը՝ հիմնախնդիրը բավականին բարդ է:

Սովորաբար բևեռների գործառույթներ կատարում են տնտեսության այնպիսի ճյուղեր և տեսակներ, որոնք ունեն արդյունավետության բարձր մակարդակ և կապիտալի շրջանառության մեծ արագություն: Սակայն ոչ միշտ է այդպես: Երբեմն զարգացման բևեռի գործառույթներ կատարում են համեմատաբար ցածր արդյունավետության մակարդակ և համեմատաբար ոչ բարձր կապիտալ շրջանառության արագություն ունեցող ճյուղերը, որոնք սակայն ապահովում են բարձր զբաղվածության մակարդակ կամ նպաստում այլ ճյուղերի զարգացմանը (օրինակ, ԱՄՆ-ում Մեծ ճգնաժամի տարիներին՝ արտադրական ենթակառուցվածքի զարգացումը) [79, էջ 70]:

Կամ, ոչ միշտ է զարգացման բևեռի գործառույթներ կատարող ճյուղն ունենում ինքնուրույն զարգացում: «Զարգացման բևեռը» կատարելով իր գլխավոր գործառույթը՝ նպաստելով տնտեսության համալիրի մյուս տարրերի ակտիվ զարգացմանը, մինչդեռ ինքը կարող է գտնվել ճահճացման վիճակում:

Նման օրինակները շատ են, և հետևաբար, որպեսզի պարզվի այս կամ այն տարրը կարող է կատարել զարգացման բևեռի գործառույթ թե ոչ, հարկավոր է այլ տնտեսական տարրերի վրա նրա ազդեցության հետևանքների ողջ ամբողջության մանրակրկիտ ուսումնասիրություն:

Այսպիսով, ***բևեռի դեր կարող է կատարել այն ամենը, ինչը կարող է նպաստել սոցիալ-տնտեսական համակարգի այլ տարրերի աճին:***

Վերոհիշյալ ամփոփումից ելնելով «զարգացման բևեռների» ընտրության համար, ըստ մեզ, հարկավոր է հաշվի առնել մի շարք ընդհանուր չափորոշիչներ և առանձնահատկություններ [22, էջ 230]:

1. Բևեռների ճյուղային առանձնահատկությունները և տարբերությունները:
Բևեռները տարբերվում են.

- զարգացման տեմպերով,
- համակարգաստեղծ ուժով, բազմապատկիչի արդյունքի հզորությամբ²,
- զարգացման փուլային և ցիկլային գործընթացում գրաված տեղով,

² Ցանկալի է, որ բևեռների վերարտադրողական ժողտնտեսական կապերի զգալի մասը իրականանա ռեգիոնի, երկրի սահմաններում և ապահովի զգալի բազմապատկիչի արդյունք: Հակառակ դեպքում, երբ արտադրական կապերը գլխավորապես իրականանում են արտոնագիտնալ սահմաններում, ապա բևեռի համակարգաստեղծ ուժի հնարավորությունները հանդես են գալիս սահմանափակորեն, իսկ հիմքերը դառնում ավելի անկայուն: Այստեղ խոսք է գնում տարածքի համալիրության և հարաբերական տնտեսական ինքնուրույնության մասին:

- պահանջվող ծախսերի քանակով և եկամտաբերությամբ,
- տեղաբաշխման առանձնահատկություններով,
- կապիտալի շրջանառության արագությամբ,
- աշխատատարությամբ, հումքատարությամբ, էներգատարությամբ, գիտատարությամբ,
- պահանջարկի ծավալներով,
- էկոլոգիական հիմնախնդիրներով,
- և այլն:

2. Տարածքի յուրացվածության, տնտեսության զարգացվածության աստիճանի և բևեռների տեսակների (առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային գործունեության) դիալեկտիկական կապը: Տարածքի զարգացմանը զուգընթաց տեղի է ունենում առաջատար, խթանող բևեռների տեսակների «հերթափոխություն»:

3. «Աճի կենտրոնի» ենթակարգային մակարդակի և «զարգացման բևեռների» տեսակների կապը: Հիերարխիկ տարբեր մակարդակների համար բևեռների ընտրության չափորոշիչները տարբեր են, որովհետև տարբեր մակարդակներում բևեռները տարբեր խնդիրներ են լուծում:

4. Բևեռների՝ որպես ռեգիոնի «բնություն-բնակչություն-տնտեսություն» և կառավարում ամբողջության բաղկացուցիչ մասի դիրարկումը: Բևեռի ընտրության գործընթացում դրվում է բնակչության կյանքի որակի բարձրացման խնդիրը:

5. Երկրի առկա պոտենցիալների և բևեռների տեսակների կապը: Բևեռների ընտրությունը մեծապես պայմանավորված է առկա ռեսուրսների ու պայմանների ներուժերի ընձեռած հնարավորություններից (բնական, ֆինանսական, գիտամեթոդական, ինֆորմացիոն, կազմակերպչական, կադրային, իրավական և այլն):

6. Բևեռների տեսակների ու ժամանակի գործոնի կապը: Բևեռների ռազմավարական ընտրությունը ներքին և արտաքին գործոնների փոփոխության պայմաններում կարող է փոփոխվել, ընդհուպ մինչև գործունեության դադարեցում: Օրինակ միջոցառումնալ տնտեսական բարեփոխումների, հումքային ռեսուրսների գնային փոփոխությունների, տրանսպորտային արգելքների, թողարկվող արտադրանքի կամ ծառայությունների պահանջարկի նվազման և վերացման արդյունքում:

Այսպիսով, արդիական է տնտեսական զարգացման բևեռների ընտրության և

ակտիվացման մեթոդական ապահովման հիմնախնդիրը: Բևեռների ընտրության յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկավոր են կոնկրետ մոտեցումներ:

3.2 «ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ»

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄՈԴԵԼ

Տեսությունը կարևոր արժեք է ձեռք բերում, երբ այն ստանում է գործնական կիրառություն: Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը կարևորվում է նրանով, որ այն կարող է նախ, տեսական հիմք է ապահովել ռեգիոնալ տնտեսական քաղաքականության համար, որի մասին խոսվել է նախորդ ենթագլխում, և ապա, տեսական հիմք ապահովել ազգային տնտեսության համալիր ու գիտական ուսումնասիրության, տնտեսության ճյուղային և տարածքային հիմնավորված կազմակերպման համար:

Այդ իսկ պատճառով, այս ենթագլխում կարևորվել է աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների, հասարակության զարգացման օրենքների և օրինաչափությունների, «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» առանձնահատկությունների և փուլաէվոլյուցիոն զարգացման հաջորդականությունների ընդհանրացման տեսական հիմքի վրա ուսումնասիրության աշխարհագրական մոդելի մշակումը և տեսությունից գործնական կիրառության անցումը: Մոդելավորումն ակնկալում է ԱՏՀ-երի (աշխարհագրական տեղեկատվական համակարգերի) կիրառում, որը հնարավորություն է ընձեռում ստեղծել տեղեկատվական հզոր բազա, կատարել բարդ հաշվողական վերլուծություններ և որակական գնահատումներ:

Աշխարհագրական ուսումնասիրության մոդելը ընդգրկում է մի քանի հաջորդական փուլեր: Յուրաքանչյուր փուլ ակնկալում է ուսումնասիրության երեք մակարդակ՝ միջազգային, հանրապետական և տեղական: Գլոբալիզացման և ինտեգրացման ներկա դարաշրջանում հիմնավորված է միջազգայինից տեղական մակարդակ ուսումնասիրությունը: Մեր աշխատանքում մանրամասնորեն վերլուծված են առավելապես միջազգային և հանրապետական մակարդակները, որով փորձ է կատարվել ապահովել «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» գիտական և ռազմավարական ընտրություն: Մեր երկրի վերոհիշյալ մակարդակների ուսումնասիրությունների համար նախընտրել ենք 1:200000 մասշտաբի տեղեկատվական մանրամասնությունը: Ուսումնասիրության հաջորդ՝ տեղական մակարդակը ակնկալում է ընտրությունների ճշտման

և հիմնավորման աշխատանքներ և կարիք ունի առավել մանրակրկիտ և մանրամասն ուսումնասիրության, որը բնականաբար, իրավասու է գիտական խմբերի և տարբեր մասնագետների համատեղ աշխատանքին:

Ուսումնասիրության աշխարհագրական մոդելն ընդգրկում է հետևյալ փուլերը.

1 ՓՈԽԼ. ԵՐԿՐԻ ԱՌԿԱ ՆԵՐՈՒԺԻ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Ներառում է ստորև թվարկվող բաղադրիչների տեղեկատվական բազայի ստեղծումը և քարտեզների կազմումը:

1. Բնառեսուրսային ներուժ

- Տարածքային ռեսուրսների ներուժ

Կազմվում է երկրի ռելիեֆի բարձրությունների և թեքությունների համադրումից ռելիեֆի տնտեսական յուրացման արդյունվետության որակական գնահատման քարտեզ: Սա, առկա տեխնոլոգիական զարգացման պայմաններում, այն տարածական հիմքն է, որի վրա իրականացվում կամ հնարավոր է իրականացնել տարաբնակեցում կամ տնտեսական գործունեություն:

- Զրային ռեսուրսների ներուժ
- Կլիմայական ռեսուրսների ներուժ
- Անտառային ռեսուրսների ներուժ
- Ռելիեֆացիոն ներուժ
- Օգտակար հանածոների ներուժ

2. Սոցիալ-տնտեսական ներուժ

- Մակրոաշխարհագրական դիրքի ներուժ
- Տարաբնակեցման ներուժ

Տարաբնակեցման ներուժն արտահայտվում է երկու քարտեզների միջոցով: Մեկը քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության մարդաշատության ներուժի քարտեզն է, մյուսը՝ բնակչության խտության քարտեզը:

- Տրանսպորտային ներուժ
- Արդյունաբերական ներուժ
- Գյուղատնտեսական ներուժ
- Ծառայությունների ոլորտի ներուժ
- Արտահանման ներուժ:

Տեղեկատվական վերոհիշյալ ներուժերի բազայի հիման վրա կատարվում է «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» նախնական ընտրություն:

Սակայն վերջինների հիմնավոր ընտրության համար անհրաժեշտ է առավել ման-րակրկիտ ուսումնասիրություն և անցում ուսումնասիրության հաջորդ՝ մակարդակ-ներ: Ստեղծվում են լոկալ (տեղական) ներուժի առավել մանրակրկիտ տեղեկատվական բազաներ, ինչպիսիք են.

- Մեզո և միկրոաշխարհագրական դիրքի ներուժը
- Մարդկային ներուժը - որոշում է բնակչության կառուցվածքային առանձնա-հատկությունները՝ կրթական, որակավորման, զբաղվածության, աշխատանքային ռե-սուրսների և այլն:

- Արտադրական ներուժը - որոշում է արտադրության կառուցվածքը և ծավալ-ները, արտադրական ֆոնդերի կիրառման մեծությունը և արդյունավետությունը, ար-տադրական ենթակառուցվածքի զարգացվածության մակարդակը և այլն:

- Սոցիալական ենթակառուցվածքի ներուժը - որոշում է կոմունալ սպասարկ-ման մակարդակը, տրանսպորտային մատչելիությունը և այլն:

- Գիտահետազոտական ներուժը
- Ֆինանսական ներուժը
- Ներդրումային ներուժը
- Արտահանման և ներմուծման ներուժը
- Եվ այլն:

Ուսումնասիրության երրորդ, մակարդակում քննարկվում են նաև իրականաց-ման պատրաստակամության ներուժերն.

- Սոցիալ - հոգեբանական պատրաստակամության ներուժը
- Նորմատիվա - իրավական պատրաստակամության ներուժը
- Գիտամեթոդական պատրաստակամության ներուժը:

Մեր ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտել միայն հնարավոր կենտ-րոններն ու ռազմավարական բևեռները, այդ իսկ պատճառով կսահմանափակվենք միայն ներուժերի առաջին խմբով:

II ՓՈՒԼ. «ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱ-ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ:

Նպատակ ունի տարածքային կազմակերպման առանձնահատկություններից ելնելով՝ բացահայտել երկրի առկա և հնարավոր «աճի կենտրոնները»:

Ուսումնասիրության առաջին՝ համաշխարհային մակարդակում, կարևորվում է երկրի մրցակցային առավելություններով տարածքների բացահայտումը, որի համար տեսական մեկնաբանություններ տրված են նախորդ ենթագլուխներում:

Ուսումնասիրության հաջորդ՝ հանրապետական մակարդակում, կարևորվում է առկա՝ ձևավորված, «աճի կենտրոնների» բացահայտումը: Այս մակարդակում նախատեսվում է կենտրոնների ըստ ենթակարգային աստիճանների՝ մայրաքաղաքի, մարզկենտրոնների, տարածաշրջանային կենտրոնների տրանսպորտային մատչելիության ու ազդեցության գոտիների վերլուծական ուսումնասիրություններ:

Տրանսպորտային մատչելիության և ազդեցության գոտիների քարտեզներում արտահայտվում են կենտրոն-ծայրամաս փոխհարաբերության շերտավորումները: Բացահայտվում են առկա ձևավորված կենտրոնների ազդեցության գոտիները և ազդեցության դաշտից դուրս մնացած տարածքները:

Տրանսպորտային մատչելիության քարտեզները կազմվում են ըստ իրական հեռավորության և ժամանակային ծախսերի:

Ըստ ժամանակային ծախսերի տրանսպորտային մատչելիության իզոխրոնները հաշվարկվում են հետևյալ բանաձևով. $T=R/A$, որտեղ

T - ժամանակն է,

R -հեռավորությունը՝ ճանապարհների երկարությամբ,

A -արագությունն՝ ըստ ճանապարհների դասակարգման:

Ազդեցության դաշտի քարտեզներում իզոխրոնները հաշվարկվում են հետևյալ բանաձևով [43, էջ 165], $V=H/P$, որտեղ

V -ազդեցության դաշտն է,

H - կենտրոնի բնակչության թիվն է,

P - իրական հեռավորությունը՝ ճանապարհների երկարությամբ:

Տարաբնակեցման առանձնահատկությունների և «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման գնահատման համար կարևոր է նաև տարաբնակեցման գծային տարրերի՝ ճանապարհների նկատմամբ բնակչության և բնակավայրերի տեղաբաշխման վերլուծական քարտեզների կազմումը: Կազմվում են բնակավայրերի

բաշխումն ըստ ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհներից ունեցած հեռավորության քարտեզները: Ճանապարհային ցանցի վերլուծական գնահատումները կարևորվում են այն պատճառով, որ նախ, դրանք տարաբնակեցման առանձնահատկությունները պայմանավորող կարևոր գործոն են, ապա այն երակներն են, որոնք սնում են կենտրոնները:

Այս բոլոր ուսումնասիրություններից հետո կազմվում է «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման նոր մոդելային տարբերակի քարտեզ:

Առաջադրված կենտրոնների ընտրության հիմնավորման համար անցնում ենք ուսումնասիրության տեղական մակարդակ:

III. ՓՈՒԼ. «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ» ՏԱՐԱԾԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄ:

Նպատակ ունի բացահայտել երկրի տնտեսության կառուցվածքում ձևավորված «զարգացման բևեռները», առաջարկել նոր «զարգացման բևեռներ», և որպես վերջնական արդյունք, առաջարկել տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխումների և տարածքային կազմակերպման նոր տարբերակ:

Ուսումնասիրության առաջին՝ համաշխարհային մակարդակում, կարևորվում է երկրի մրցակցային առավելություններով բևեռների՝ «մրցակցային բևեռների» բացահայտումը: Մրցակցային բևեռների ճյուղային կառուցվածքի բացահայտման համար կարևորվում են վիճակագրական տվյալների մանրակրկիտ վերլուծությունները և բալային գնահատումները, ըստ որոնց ընդհանրացման՝ տարբերակվում են երկրի համար մասնագիտացման, զարգացման բարձր տեմպեր ունեցող, հեռանկարային և ոչ հեռանկարային զարգացման բևեռները:

Ուսումնասիրության հաջորդ՝ հանրապետական մակարդակում, կարևորվում է աճի կենտրոններում «զարգացման բևեռների» բացահայտումը: Կենտրոններում բևեռների տարածքային և գործառույթային կազմակերպման առանձնահատկությունները վերլուծվում են իրավիճակային գնահատման երեք քարտեզների միջոցով:

1. «Աճի կենտրոնների» տնտեսական ներուժի քարտեզ: Տնտեսական ներուժի արտահայտման համար կան տարբեր ցուցանիշներ: Մենք ընտրել ենք արտադրության բոլոր ճյուղերի արտադրանքի գումարային արժեքը:

2. «Աճի կենտրոնների» տնտեսության ճյուղային կառուցվածքի գնահատման քարտեզ:

3. «Աճի կենտրոնների» արդյունաբերության ճյուղային կառուցվածքի գնահատման քարտեզ:

2-րդ և 3-րդ գործառության լատուցվածքի քարտեզներում սխեմաները կառուցվում են ըստ տեղայնացման համաթվերի: Տեղայնացման համաթվերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝ [36, էջ 211-212]

$$I=L/K, \text{ որտեղ}$$

L - կենտրոնի բաժինն է երկրում ըստ ճյուղային ցուցանիշի,

K - կենտրոնի բաժինը ըստ բազային ցուցանիշի:

Կենտրոնի բաժինը երկրում ըստ ճյուղային ցուցանիշի՝

$$L=a/A, \text{ որտեղ}$$

a - կենտրոնի ճյուղային ցուցանիշն է (մեր դեպքում՝ արտադրանքի արժեքը կամ ճյուղում զբաղվածների թիվը),

A - նույն ճյուղային ցուցանիշը երկրի համար:

Կենտրոնի բաժինը ըստ բազային ցուցանիշի՝

$$K=b/B, \text{ որտեղ}$$

b - կենտրոնի բազային ցուցանիշն է (մեր դեպքում՝ արտադրության բոլոր ճյուղերի արտադրանքի գումարային արժեքը կամ ճյուղում զբաղվածների ընդհանուր թիվը),

B - երկրի բազային ցուցանիշը:

Տեղայնացման համաթվերը կարող են տատանվել 0-ից (երբ կենտրոնում բացակայում է) մինչև անսահմանություն (երբ ճյուղը առկա է միայն այդ կենտրոնում): Համաթվերը համեմատվում են իրենց բացարձակ թվերով:

Այս փուլում վերլուծվում են տնտեսական ներուժի, ճյուղային կառուցվածքի և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները:

Երրորդ՝ տեղական մակարդակի ուսումնասիրություններով կատարվում է նոր բևեռների հիմնավորում:

Սակայն, «զարգացման բևեռների» բարեփոխումների, ճյուղային կառուցվածքի և տարածքային կազմակերպման հիմնավորված վերակառուցման ուղիների տարբերակման համար կարևոր է նաև արտահանման և ներմուծման ճյուղային կառուցվածքի և տարածքային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտումը:

Համաշխարհային մակարդակում բացահայտվում են երկրի արտահանման և ներմուծման ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները, որոնք վերլուծվում են վիճակագրական տվյալների մանրակրկիտ վերլուծությունների և բալային գնահատումների արդյունքում:

Հանրապետական մակարդակում բացահայտվում ենք «աճի կենտրոնների» արտահանման և ներմուծման տարածագործառնության կազմակերպման առանձնահատկությունները, որոնք վերլուծվում են իրավիճակային գնահատման երեք քարտեզների միջոցով:

1. «Աճի կենտրոնների» արտահանման ներուժի քարտեզ: Արտահանման ցուցանիշ է ընտրվել արտահանվող արտադրանքի արժեքը:
2. «Աճի կենտրոնների» արտահանման ճյուղային կառուցվածքի գնահատման քարտեզ:
3. «Աճի կենտրոնների» արդյունաբերական արտադրանքի արտահանման ճյուղային կառուցվածքի գնահատման քարտեզ:

2-րդ և 3-րդ քարտեզներում արտահանման ճյուղային կառուցվածքն ևս արտահայտվում է ըստ տեղայնացման համաթվերի: Արտահանման համաթվերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով [36, էջ 211-212].

$$I_u = L_u / K_u, \text{ որտեղ}$$

L_u - կենտրոնի արտահանման բաժինն է երկրում ըստ ճյուղային ցուցանիշի,

K_u - կենտրոնի արտահանման բաժինն ըստ բազային ցուցանիշի:

Կենտրոնի արտահանման բաժինը երկրում ըստ ճյուղային ցուցանիշի՝

$$L_u = a / A, \text{ որտեղ}$$

a - կենտրոնի ճյուղային ցուցանիշն է (մեր դեպքում՝ արտահանվող արտադրանքի արժեքը),

A - նույն ճյուղային ցուցանիշը երկրի համար:

Կենտրոնի արտահանման բաժինը երկրում ըստ բազային ցուցանիշի՝

$$K_u = b / B, \text{ որտեղ}$$

b - կենտրոնի բազային ցուցանիշն է (մեր դեպքում՝ արտադրության բոլոր ճյուղերի արտահանվող արտադրանքի գումարային արժեքը),

B - երկրի բազային ցուցանիշը:

Կարելի է «աճի կենտրոնների» արդյունաբերության ճյուղային կառուցվածքի և արտահանման ճյուղային կառուցվածքի՝ ըստ տեղայնացման համաթվերի, գնահատման քարտեզների սինթեզմամբ ստանալ միասնական քարտեզ, կատարել արժեքավոր վերլուծություններ:

Տեղական մակարդակում հիմնավորվում է արդեն իսկ առկա և հեռանկարային «զարգացման բևեռների» տարածագործառնության կազմակերպման նպատակահարմարությունը՝ հիմք ունենալով տեղային առավել մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքները:

IV. ՓՈՒԼ- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ:

Վերոհիշյալ փուլային աշխատանքներից հետո, երկրի ներուժերի հնարավորությունների, «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» տարածագործառնության կազմակերպման մանրակրկիտ վերլուծությունից հետո արվում են եզրակացություններ հետևյալ ուղղություններով.

- Բացահայտվում են զարգացած, թույլ զարգացած և ճգնաժամային տարածքները:
- Հիմնավորվում են առկա «աճի կենտրոնները» և ընտրվում նոր «աճի կենտրոններ»:

Նոր կենտրոնների ընտրությունը կարող է լուծել երկու խնդիր [79, էջ 66-73].

Առաջին՝ ճգնաժամային տարածքի զարգացման խթանում: Այս դեպքում կամ ստեղծվում է բոլորովին նոր կենտրոն՝ առավել հարմար աշխարհագրական դիրքով և ռեսուրսային պոտենցիալով, կամ էլ առկա բնակավայրերից տարբերակվում է որևէ մեկը որպես կենտրոն, ուր և նախատեսվում են ներդրումները:

Երկրորդ՝ գերկենտրոնացած տարածքի ապակենտրոնացում: Այս դեպքում էլ ստեղծվում են կենտրոններ՝ երկրի գերզարգացած կենտրոնների միգրացիոն և կապիտալ հոսքերի կլանման նկատառումով:

- Բացահայտվում են տնտեսության զարգացման առկա ձևավորված բևեռները, պարզվում է նրանց գործառնության արդյունավետությունը (արդյոք դրանք ունեն ինքնազարգացման մեծ ներուժ, թե իրենց ակտիվացման համար պահանջում են զգալի ռեսուրսներ և միջոցներ):

- Բացահայտվում են առկա ճյուղերից և գործունեության ձևերից ռազմավարական հեռանկարում «զարգացման բևեռները»:

- Բացահայտվում են առկա ճյուղերից և գործունեության ձևերից ռազմավարական հեռանկարում անհեռանկարային ճյուղերը:

- Անհրաժեշտության դեպքում ընտրվում և հիմնավորվում են նոր բևեռներ: Նոր բևեռների ընտրությունը կանխորոշվում է նախ և առաջ սեփական սոցիալ-տնտեսական ներուժերի հնարավորություններով:

**ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԵԳԻՈՆԱԼ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ԸՍՏ ԱՃԻ ԲԵՎԵՌՆԵՐ ԵՎ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ**

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի տեսական սկզբունքների հիման վրա իրականացվող ռեգիոնալ զարգացումն ակնկալում է գործառույթային հենքի՝ «զարգացման բևեռների» և տարածական հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծում և դրանց աջակցություն: ՀՀ «զարգացման բևեռների», «աճի կենտրոնների» բացահայտման ուսումնասիրություններն իրականացվել են մշակված մոդելի համաձայն:

**4.1. ՀՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

1 փուլ. երկրի ներուժի բազայի ստեղծում: Ներառում է տեղեկատվական բազայի ստեղծումը և քարտեզների կազմումը:


Աշխարհագրական դիրք. ՀՀ տարածքը 29.8 հազ. կմ² է: Զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան փոքր մասը: Սահմանակից է Վրաստանին, ԼՂՀ-ին, Ադրբեջանին, Նախիջևանի ԻՀ-ին, Թուրքիային և Իրանին:

ՀՀ գտնվելով Արևմտյան Ասիայի և Արևելյան Եվրոպայի խաչմերուկում, պատմական զարգացման երկարատև ժամանակաշրջանում ունեցել է իր աշխարհագրական դիրքի և՛ նպաստավոր, և՛ ոչ նպաստավոր պայմանների հանրագումարը: Ներկա գնահատմամբ ՀՀ ԱԴ-ի հնարավորությունները սահմանափակ են: Ըստ ՖԱԴ-ի՝ ցամաքային երկիր է, ծովերից բավականին հեռու: Ըստ ՔԱԴ-ի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ ոչ դրացիական հարաբերություններ են, ըստ ՏրԱԴ-ի՝ արտաքին աշխարհի հետ ցամաքային ճանապարհներով կապ ունի միայն Վրաստանով և Իրանով: Իսկ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ երկաթուղային ճանապարհով ՀՀ կարող է արտաքին աշխարհի դուրս գալ միայն Վրաստանի տարածքով և որն էլ անցնում է Աբխազիայի տարածքով, ուր աբխազավրացական սրված հարաբերություններ են, ապա ակնառու են ՀՀ ԱԴ-ի սահմանափակ հնարավորությունները, որոնք էական դժվարություններ են ստեղծում հանրապետության տնտեսության զարգացման համար:


Բնական պայմանների և ռեսուրսների ներուժ.

Ռելիեֆը. ՀՀ-ն տիպիկ լեռնային երկիր է: Նրա միջին բարձրությունը ծովի մա-

կե-րկույթից կազմում է 1837 մ: Ամենացածր վայրերը Մեղրու կիրճն է և Դեբեդ գետի հովիտը՝ 370-390 մ, ամենաբարձր կետը՝ Արագած լեռը՝ 4090 մ: ՀՀ մակերևույթը խիստ կտրտված է լեռնահովիտներով, գետահովիտներով, կիրճերով: Ինչպես մակերևույթի խիստ կտրտվածությունը, այնպես էլ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը բացասական ազդեցություն են թողնում արտադրողական ուժերի տեղաբաշխման վրա (քարտեզներ 1, 2 և աղյուսակներ 3 և 4):



Քարտեզ 1* ՀՀ ռելիեֆը



Քարտեզ 2* ՀՀ ռելիեֆի թեքությունները

Աղյուսակ 3

ՀՀ տարածքի բաշխումն ըստ բացարձակ բարձրության*

Բարձրությունը ծովի մակարդակից (մետր)	Մակերեսը (կմ²)	Տոկոսը	Գնահատական
Մինչև 1000	2920	9.9	շատ լավ
1000-1500	5431	18.3	լավ
1500-2000	9301	31.3	միջին
2000-2500	7291	24.5	վատ
2500-ից բարձր	4800	16.0	շատ վատ
Ընդամենը	29743	100	

Ինչպես երևում է աղյուսակից, հանրապետության տարածքում կա ընդամենը 3 հազ. կմ² տարածք, որը ռելիեֆային առանձնահատկություններից ելնելով, շատ լավ պայմաններ ունի տնտեսական գործունեության համար: Այդ տարածքը հիմնականում համապատասխանում է Արարատյան գոգավորության ցածրադիր վայրերին, որն էլ

* նշանով բոլոր քարտեզներն ու աղյուսակները կազմվել են ԱՏՀ (GIS) կիրառմամբ:

տնտեսական առումով լավ յուրացված է:

Ընդհանրապես, հանրապետությունում արտադրողական ուժերի տեղաբաշխման, բնակչության ապրելակերպի, բնակավայրերի կառուցապատման համար ռելիեֆային լավ և համեմատաբար նպաստավոր պայմաններ ունեն ծովի մակերևույթից մինչև 2000 մ բարձրություն ունեցող վայրերը: Այդպիսի պայմաններ ունեն հանրապետության ողջ տարածքի 60%-ը (մոտ 18 հազ. կմ²) [28, էջ 8]:

Սակայն, հանրապետության ծովի մակերևույթից մինչև 2000 մ բարձրություն ունեցող վայրերը բարձրության տեսանկյունից արտադրողական ուժերի տեղաբաշխման համար լինելով նպաստավոր, առանձնանում են մակերևույթի մեծ մասի խիստ կտրրուկածությամբ և մեծ թեքություններով, որոնք լրացուցիչ դժվարություններ են ստեղծում (քարտեզ 2, աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՀՀ տարածքի բաշխումն ըստ թեքության*

Թեքություններ	Մակերեսը (կմ ²)	Տոկոսը	Գնահատական
Մինչև 6°	10409	35	շատ լավ
6-16°	10409	35	լավ
16-30°	7436	25	միջին
30°-ից բարձր	1489	5	վատ
Ընդամենը	29743	100	-


Առավել նպաստավոր տարածքներ են մինչև 6° թեքություն ունեցող վայրերը: Հանրապետությունում այդպիսի վայրերը կազմում են ամբողջ ցամաքային տարածքի 35%-ը: 6-16° թեքության վայրերը, ընդհանուր առմամբ, համարվում են բարենպաստ տարածքներ, սակայն արտադրողական ուժերի տեղաբաշխման և զարգացման համար պահանջում են լրացուցիչ ծախսեր և միջոցառումներ: Կազմում են ՀՀ տարածքի 35%-ը: Չնայած այդպիսի դժվարություններին և խոշոր ծախսերին, Հայաստանի սակավահողության պայմաններում, էապես կարևոր է միջին թեքության հողատարածքների յուրացումը:

16-30° թեքություն ունեցող վայրերը անբարենպաստ են տնտեսական գործունեության համար: Շինարարությունն ու տրանսպորտային աշխատանքները պահանջում են մեծ ծախսեր: Դրանք կարևոր արտադրարարներ ու խոտհարքեր են: Առանձին դեպքերում հարավահայաց թեքություններն օգտագործում են այգեգործության և պտղաբուծության համար: Կազմում են հանրապետության տարածքի մոտ 25%-ը:

30° թեքություն ունեցող վայրերի նշանակությունը արտադրողական ուժերի տե-

դաբաշխման համար ծայրահեղ սահմանափակ է: Հազվադեպ դեպքերում հնարավոր է պտղաբուծություն, կամ մանր եղջերավոր անասնապահության համար կարող են լինել արոտավայրեր: Ընդ որում, այդ թեքությամբ տարածքի զգալի մասը լերկ ժայռեր են: Կազմում են ՀՀ տարածքի մոտ 5%-ը [28, էջ 8-10]:

ՀՀ ռելիեֆի բարձրության և թեքության որակական գնահատականների սինթեզումից, ԱՏՀ-ի կիրառմամբ, ստացել ենք ռելիեֆի տնտեսական յուրացման որակական գնահատման քարտեզը (քարտեզ 3):



Քարտեզ 3* Հայաստանի ռելիեֆի տնտեսական յուրացման որակական գնահատում

Քարտեզում տարբերակվել են ռելիեֆի տնտեսական յուրացման նպաստավորության հինգ աստիճան (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

*ՀՀ տարածքի բաշխումն ըստ տնտեսական յուրացման նպաստավորության**

	Մակերեսը (կմ ²)	Տոկոսը	Գնահատական
մինչև 1000 մ բարձրություն և մինչև 6 ⁰ թեքություն	1976	7	շատ լավ
մինչև 1500 մ բարձրություն և 6-16 ⁰ թեքություն	4416	15	լավ
մինչև 2000 մ բարձրություն և 16-30 ⁰ թեքություն	11180	38	միջին
մինչև 2500 մ բարձրություն և 30 ⁰ -ից բարձր թեքություն	7599	25	վատ
2500 մ-ից բարձր բարձրություն և 30 ⁰ -ից բարձր թեքություն	4569	15	շատ վատ

Ակնհայտ է դառնում, որ հանրապետության տնտեսական յուրացման համար նըպաստավոր տարածքները սահմանափակ են, տարածականորեն ցրված ու մասնատված, և հասարակական կյանքի տարածքային կազմակերպման համար ներկայացնում են բարդ ու բազմազան անիզոտրոպ միջավայր:

Կլիմայական պայմաններ: ՀՀ կլիման խիստ ցամաքային է, բնութագրվում է ամառվա և ձմեռվա ջերմաստիճանների մեծ տատանումներով, մթնոլորտային տեղումների սակավությամբ, արևափայլի երկար տևողությամբ, գարնանային ցրտահարություններով, լեռնային շրջաններում ուժեղ քամիներով: Լեռնային ռելիեֆի հետևանքով կլիմայական բազմազանությունը զգալի է: Կլիմայական գոտիները արտահայտված են ուղղաձիգ գոտիականությամբ: Բնական պայմանների բազմազանությունը հատկապես ուղղակիորեն ազդում է գյուղատնտեսության վրա, որոշելով նրա ճյուղային կառուցվածքն ու տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունները:

Ջրային ռեսուրսներ: Հայաստանը, ընդհանուր առմամբ, աշխարհի սակավաջուր երկրների թվին է պատկանում, չնայած ներկա դրությամբ բնակչությունն ապահովված է ջրով:

ՀՀ ջրային ռեսուրսների համակարգում առանձնահատուկ կարևոր դեր ունեն գետերը: ՀՀ տարածքում կա 1700 գետ և գետակ, որոնց մեծ մասը սակայն, փոքր ու սակավաջուր են: Այստեղ մինչև 100 կմ երկարություն ունեցող գետերի թիվը հասնում է 380-ի, իսկ 100 կմ-ից ավելի երկարություն ունեցող գետերն ընդամենը 6 են [29, էջ 89]:

ՀՀ ջրային ռեսուրսների համակարգում պատկառելի տեղ են զբաղեցնում նաև լճերը: ՀՀ-ում հաշվվում է 120 լիճ, սակայն մի մասը ամռան ամիսներին, հատկապես չո-

րային տարիներին, ցամաքում են: Առանձնահատուկ նշանակություն ունի Սևանա լիճը: Զրամբարները 80 են, որոնց ընդհանուր ծավալը կազմում է ավելի քան 1 մլրդ. մ³:

Հանրապետության տարածքում կան նաև ստորերկրյա և հանքային ջրերի զգալի պաշարներ: Ստորերկրյա ջրերով հարուստ է Արարատյան դաշտը, Շիրակի, Լոռու սարահարթերի, Սևանի ավազանի, Սիսիանի տարածաշրջանի ընդերքը:

Ռելիեֆային ռեսուրսներ: ՀՀ ունի բնական և մարդածին ռելիեֆային բազմա-տեսակ ռեսուրսներ: Բնական ռելիեֆային ռեսուրսներից գործնական նշանակություն ունեն հանքային բուժիչ ջրի բազմազան աղբյուրները (Ջերմուկի, Արզնու, Հանքավանի, Դիլիջանի, Իջևանի, Բջնու, Արարատի և այլն), տորֆի որոշ պաշարները (Լոռու մարզում, Սևանի ավազանում), ջրավազանները, անտառները, ալպյան մարգագետին-ները, ձնածածկ լանջերը, հրաբխային կոները, որոնցից շատերի խառնարաններում կան զուլալ ջուր ունեցող լճեր, գետերի անդնդախոր կիրճերն ու գեղատեսիլ հովիտները, բնական հուշարձանները, քարանձավները, հատուկ պահպանվող տա-րածքները և այլն: Մարդածին ռելիեֆային ռեսուրսներից մեծ հետաքրքրություն են ներկայացնում պատմաճարտարապետական կոթողները, բերդավանները, եկեղեցա-կան համալիրները, նորոգյա հուշարձանները, թանգարանները, բնակավայրերը և այլն:

Օգտակար հանածոներ: ՀՀ տարածքում կան օգտակար հանածոների զգալի պաշարներ, որոնց ռացիոնալ օգտագործումը խոշոր դեր կարող է խաղալ երկրի տնտեսության վերականգնման և հետագա զարգացման համար: Հանրապետության վառելիքային ռեսուրսներն առայժմ շատ աննշան են և չունեն տնտեսական նշանակություն: Մետաղային օգտակար հանածոներից հատկապես կարևորվում են գունավոր և հազվադեպ, թանկարժեք ու նաև սև մետաղների պաշարները: Սև մետաղներից գործնական նշանակություն կարող են ունենալ հատկապես երկաթի հանքաքարի պաշարները, իսկ մանգանի և քրոմի պաշարների օգտագործումը նպա-տակահարմար կլինի միայն այն ժամանակ, երբ հանրապետության երկաթի հանքա-քարի բազայի վրա կազմակերպվի սև մետաղաձուլություն:

ՀՀ-ում օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են 400-ը, այդ թվում՝ 22 մետաղական: Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և

ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում բացի հիմնական մետաղներից բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, քիսմութ և այլն: ... Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից, ՀՀ տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ [150]:

2015 թ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է 503 թույլտվություն, այդ թվում՝ մետաղական օգտակար հանածոների 27, ոչ մետաղական օգտակար հանածոների 450, հանքային ջրերի 26 թույլտվություն: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների 88 թույլտվություն, այդ թվում՝ մետաղական երևակումների 63, ոչ մետաղական երևակումների 25 թույլտվություն: Տրված է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն 2 և նավթի ու գազի հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 3 իրավունք [150]:

Ոչ մետաղային հանքային ռեսուրսներից ՀՀ-ում առավել լայնորեն տարածված են շինանյութերը: Այստեղ հայտնաբերված են գիտությանը հայտնի համարյա բոլոր քարատեսակները: Շինանյութերից առավել մեծ ժողովրդատնտեսական նշանակություն ունի 14 տեսակը, որոնցից հաշվվում է 451 հանքավայր: Շինանյութերի ռեսուրսների 28-32%-ը պատկանում է հրաբխային տուֆերին: Ռեսուրսների մեծությամբ երկրորդ և երրորդ տեղերը կիսում են բազալտային խմբի ապարները և պեմզաները, չորրորդ տեղում կրաքարերն են, հինգերորդ տեղում՝ մարմարները [2, էջ 54]:

Ըստ Ա. Ավագյանի, ՀՀ տարածքում առանձնացվել են «197 ռեսուրսային շրջաններ, որոնցից 19-ը՝ շատ հարուստ, 18-ը՝ հարուստ, 16-ը՝ միջին հարստության, 41-ը՝ փոքր հարստության և 103-ը՝ աղքատ: Շրջանացման հիմքում դրված են մետաղային ռեսուրսների, շինանյութերի և հանքային ջրերի ռեսուրսային գործակիցները: ...Ռեսուրսների հիմնական մասը բաժին է ընկնում շատ հարուստ խմբին՝ 64.94%-ը: Շատ հարուստ խմբի մեջ մտնող ամենախոշոր շրջաններն են *Քաջարան-Լեռնաձորը, Կապան-Շահումյանը, Սյրեփանավան-Արմանիսը, Արարատը և Սվարանցը, ապա Լիճքավազ-Տաշտուն, Թալիշ-Շամիրամը, Սոթքը, Թեղուրը, Արգել-Նուռնուսը և այլն*» [2, էջ

124-125]:

Սոցիալ-փնտեսական ներուժ:


Վարչատարածքային կառուցվածք: 1995 թ. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով նախկին վարչական 37 շրջանների փոխարեն հանրապետության տարածքը բաժանվեց 11 մարզերի, այդ թվում Երևան քաղաքը՝ մարզի կարգավիճակով: Նախկին 21 հանրապետական, 6 շրջանային և 31 քաղաքատիպ ավանների փոխարեն այսօր ՀՀ տարածքում գոյություն ունեն 49 քաղաքային համայնքներ, 942 գյուղական բնակավայրերի փոխարեն՝ 866 գյուղական համայնքներ և 953 գյուղեր: Վարչական նոր բաժանումից մինչ այսօր անցել է կարճ ժամանակահատված տարաբնակեցման համակարգում էական տեղաշարժեր տեղի ունենալու համար, սակայն նոր բաժանումը տարաբնակեցման մեջ ձևավորել է «աճի կենտրոնների» նոր համակարգ, որոնցում ընթացող տեղաշարժերն ու փոփոխություններն ավելի ակնառու կլինեն ավելի երկար ժամանակահատվածի կտրվածքում: Նախկին «աճի կենտրոններից» շատերը դեռևս իներցիոն շարժընթացով պահպանում են իրենց կենտրոնական դիրքերը:

Տարաբնակեցում: Մինչև 1920-ական թվականները ՀՀ այժմյան տարածքում կար 4 քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ (Գյումրի), Գավառ և Գորիս: Հայաստանի քաղաքային բնակչության թվաքանակը 1913 թ. եղել է 90 հազ. մարդ, որը կազմել է ամբողջ բնակչության 9%-ը [28, էջ 88], 1989 թ.՝ համապատասխանաբար 2230 հազ. մարդ, 68%, 2015 թ.՝ 1907.0 հազ. մարդ, 63.6% [13]: ՀՀ խոշորագույն քաղաքը մայրաքաղաք Երևանն է՝ 1073.7 հազ. բնակչությամբ (2015 թ.), ուր կենտրոնացած է հանրապետության ամբողջ բնակչության 35.8%-ը, քաղաքային բնակչության 56.3%-ը:

ՀՀ տարաբնակեցման զարգացման մակարդակը համապատասխանում է Զիբսի տարաբնակեցման զարգացման 3-րդ և Ֆրիդմանի կենտրոն-ծայրամաս փոխհարաբերության 2-րդ փուլերին, ըստ որոնց տարաբնակեցման համակարգում ձևավորվում են ագլոմերացիոն գործընթացներ և դիտվում է մի քանի քաղաքների, սովորաբար մայրաքաղաքի, անհամեմատ գերակայություն մյուս բնակավայրերի նկատմամբ: Դա են փաստում ՀՀ բնակավայրերի բնակչության թվաքանակի ուսումնասիրությունները, որոնց հիման վրա կազմվել են քարտեզներ (քարտեզներ 4, 5):

Բնակչության խտությունը և տեղաբաշխումը: ՀՀ բնակչության միջին խտու-

թյունը 2015 թ. տարեսկզբին կազմել է շուրջ 101 մարդ/կմ²: Սակայն բնական պայմանների, պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով պայմանավորված բնակչության խտության բաշխումը խիստ անհամաչափ է: ՀՀ բնակչության կեսից ավելին (մոտ 55%) տեղաբաշխված են ծովի մակերևույթից մինչև 1000 մ




Քարտեզ 4* ՀՀ տարաբնակեցումը

բարձրության համեմատաբար նպաստավոր պայմաններ ունեցող վայրերում, որոնք կազմում են հանրապետության տարածքի ընդամենը 10.5%-ը: Առավել խիտ է բնակեցված Արարատյան դաշտը, որտեղ բնակչության խտությունը ավելի քան 3.5 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը՝ 450 մարդ/կմ² (ներառյալ Երևան

քաղաքը): Համեմատաբար բարձր խտություններ ունեն Արմավիրի, Կոտայքի, Արարատի, Շիրակի, միջինից շատ ցածր խտություններ՝ Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզերը:

Տրանսպորտ: ՀՀ տարաբնակեցման տարածքային կառուցվածքի առանձնահատկությունների բացահայտման գործընթացում կարևոր է նաև հիմնականախքի գծային



Քարտեզ 5* ՀՀ բնակավայրերը

տարրերի՝ ճանապարհային ցանցի (երկաթուղային և ավտոմոբիլային) վերլուծությունը:

ՀՀ երկաթուղու շահագործվող երկարությունը 850.1 կմ է, այդ թվում ընդհանուր

օգտագործմանը՝ 703.2 կմ (2015 թ.) [13]: Ցանցի խտությունը նոսր է՝ 28.5 կմ/1000 կմ² և ունի պարզ կառուցվածք: ՀՀ զգալի տարածքներ դուրս են մնում երկաթուղային հաղորդակցությունից: Այս առումով չնչին է երկաթուղային հաղորդակցության դերը տարաբնակեցման համակարգի ձևավորման գործում: Վերջին տարիներին նոր երկաթուղիներ չեն կառուցվել:

ՀՀ լեռնային մակերևույթի պայմաններում առանձնահատուկ կարևորություն ունեն ավտոճանապարհները: Ավտոմոբիլային ճանապարհների շահագործվող երկարությունը 100367.5 կմ է, այդ թվում ընդհանուր օգտագործմանը՝ 7570 կմ, որից միջպետական նշանակության՝ 1803 կմ, հանրապետական նշանակության՝ 1966 կմ, տեղական նշանակության՝ 3801 կմ: Ավտոմոբիլային ճանապարհների միջին խտությունը՝ 348.6 կմ/ 1000 կմ² է (2015 թ.) [13]: Հանրապետության տարածքում ավտոմոբիլային ճանապարհային ցանցի խտությունը ունի անհամամասնային բաշխում: Վերջինիս ապահովվածության աստիճանը բարձր է Երևանում, ցածր՝ Կապանի, Գավառի, Իջևանի, Եղեգնաձորի լեռնային տարածաշրջաններում:

Տնտեսություն: «Աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեն տնտեսության զարգացման և ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները: Հայաստանը իր տնտեսական զարգացմամբ զբաղեցնում է միջին-ցածր հորիզոնականներ: Ազատ տնտեսական շուկայի ստեղծմամբ՝ հետխորհրդային Հայաստանում, տնտեսության ձևավորված կառուցվածքը կազմալուծվել է: Ներկայումս տնտեսական կառուցվածքում առաջատար դիրքում է ծառայությունների ոլորտը՝ 46.4% (2015 թ.), ապա գյուղատնտեսությունը՝ 17.3%, նոր միայն արդյունաբերությունը՝ 16.2%, շինարարությունը՝ 9.5% [13]:

ՀՀ-ն այսօր շարունակում է հանդես գալ բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր, բայց ոչ նախկին բովանդակությամբ, ճյուղային կառուցվածքով ու ներքին արտադրական, տեխնոլոգիական կապերով: Այժմ հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունի մշակող արդյունաբերությունը՝ 62.5%, էլեկտրականության և գազի մատակարարումը՝ 19.5%, հանքագործական արդյունաբերությունը՝ 16.4% (2015 թ.) [13]:

Մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքում բացարձակ գերակայություն ունեն սննդամթերքի և հիմնային մետաղների արտադրությունները: Միջին տեղ է

զբաղեցնում այլ ոչ հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մնացած արտադրությունները չեն գերազանցում 4%-ի սահմանագիծը:

Գյուղատնտեսությունը ներկայանում է ՀՀ-ում բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Հանրապետության տիպիկ լեռնային, բարդ, խիստ կտրտված մակերևույթի պատճառով ողջ հողային ֆոնդի միայն 69%-ն է օգտագործվում գյուղատնտեսական արտադրության նպատակներով: Գյուղատնտեսական արտադրության համար պիտանի հողատարածքների օգտագործումն էլ կապված է զգալի դժվարությունների՝ մակերևույթի թեքությունների, կտրտվածության, քարքարոտության, ուղղաձիգ գոտիականության, ոռոգման անհրաժեշտության և այլ պատճառների հետ: Տնտեսավարման նոր պայմաններում մշակովի հողատարածությունները մասնատվել են ավելի քան 1.2 մլն հողակտորների [9, էջ 7]:

ՀՀ բուսաբուծությանը բաժին է ընկնում գյուղատնտեսական ամբողջ համախառն արտադրանքի շուրջ 60.5%-ը (2015 թ.) [13]: Ենթաճյուղերն են հացահատիկային, տեխնիկական մշակաբույսերի, կարտոֆիլի ու բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությունը, այգեգործությունը: Անասնապահության ենթաճյուղերն են խոշոր և մանր եղջերավոր անասնապահությունը, խոզաբուծությունը, ծիաբուծությունը, թռչնաբուծությունը, շերմապահությունը, մեղվաբուծությունը:

Արտաքին տնտեսական կապեր: Ներկայումս արմատապես փոխվել են ՀՀ կապերի ծավալները, բնույթն ու ձևերը: Ապրանքաշրջանառությունում այսօր ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Արտահանումը խիստ ռեսուրսաինտենսիվ է և մի քանի ոլորտներում կենտրոնացած: Արտահանման առաջատարներն են հանքահումքային մըթերքի, ոչ թանկարժեք մետաղների և իրերի, թանկարժեք քարերի և մետաղների, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը: Թեև արտահանումն իրականացվում է աշխարհի մոտ 90 երկրների հետ, սակայն արտահանման կեսից ավելին իրականացվում է ընդամենը 5 երկրների հետ [14, էջ 54]:

Հայաստանի ներմուծումը արտահանման համեմատ բավականին բազմազան է և ունի առավել լայն աշխարհագրություն: 2015 թ. ներմուծումն իրականացվել է 160-ից ավելի երկրներից, սակայն առավել խոշոր գործընկեր երկիրը Ռուսաստանն է, որն ապահովում է Հայաստանի ընդհանուր ներմուծման մեկ չորրորդը:

Տնտեսական կապերի համակարգում վճռական դեր ունեն ԱՊՀ, Եվրոպական Միության և ասիական երկրները: «2003 թ. Հայաստանն անդամակցում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը: Հայաստանը ԱՊՀ գրեթե բոլոր երկրների, այդ թվում Վրաստանի հետ ունի երկկողմ գործող ազատ առևտրի համաձայնագրեր: Հայաստանն օգտվում է նաև ԱՄՆ-ի, Կանադայի, Ճապոնիայի, Շվեյցարիայի և ԵՄ-ի կողմից տրամադրված արտահանման արտոնյալ GSP ռեժիմից» [14, էջ 55]: Սակայն 2015 թ. հունվարից Հայաստանի Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությունն ակնկալում է ձևավորված տնտեսական կապերի էական փոփոխություններ: Անշուշտ, անդամ երկրների միջև կմեծանան առևտրային հոսքերը, հնարավոր է նաև արտադրական կոոպերացիաների և համագործակցության ընդլայնում, ներդրումների աճ, սակայն մյուս երկրների հետ հնարավոր են միջազգային երկկողմ և բազմակողմ համագործակցության, նաև գործարար և ներդրումային միջավայրի սահմանափակումներ:

ՀՀ բնաաշխարհագրական և սոցիալ-տնտեսական նախադրյալների տեղեկատվական բազայի ստեղծումը, իրավիճակային քարտեզների ստեղծումը, առկա վիճակի որակական գնահատումներն անհրաժեշտ ելակետային այն նախահիմքն են, որոնց հիման վրա կատարվում են մեր հաջորդիվ ուսումնասիրությունները:

4. 2 ՀՀ «ԱՃԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ» ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

II փուլ. «Աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում:


ՀՀ «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրություններն իրականացվում են ըստ մշակված մոդելի:

Ուսումնասիրությունները կատարվում են երեք մակարդակով:

Ուսումնասիրության առաջին՝ համաշխարհային մակարդակում, տարբերակում ենք **ՀՀ մրցակցային առավելություններով տարածքները՝** որպես «աճի կենտրոններ»: Դրանք, ըստ էության, երկրի առավել նպաստավոր և մրցակցային պայմաններ ունեցող այն տարածքներն են, ուր տարածվում են հասարակական, այդ թվում և տնտեսական, զարգացման ալիքները զարգացած երկրներից (տե՛ս էջ 22): Այս

տարածքներում են ձևավորվում հատկապես միջհանրապետական նշանակության «աճի կենտրոնները»:

ՀՀ մրցակցային առավելություններով տարածքներն են. մայրաքաղաքն իր մերձ-քաղաքային գոտով, Արարատյան խտաբնակ տարածաշրջանը, Սևանի ռեկրեացիոն գոտին, արդյունաբերական շրջանները և մերձսահմանային Մեղրու և Այրումի, Բավրայի տարածքները (քարտեզ 6):



Քարտեզ 6* ՀՀ մրցակցային առավելություններով տարածքները

Ուսումնասիրության հաջորդ՝ հանրապետական մակարդակում, բացահայտում ենք ՀՀ առկա ձևավորված «աճի կենտրոնները», նրանց ազդեցության դաշտերը և այդ

դաշտերից դուրս մնացած տարածքները: Խնդրի իրականացման համար ուսումնասիրությունները կատարվել են 3 կտրվածքով.

1. մայրաքաղաքի, 2. մարզկենտրոնների, 3. բոլոր քաղաքների


և 2 ուղղությամբ.

1. որոշվել են դրանց մադելիությունը

- ըստ ճանապարհային հեռավորության
- ըստ ծախսած ժամանակի,


2. որոշվել են դրանց ազդեցության գոտիները:

Կենտրոնների ազդեցության չափանիշ ընդունվել է մարդաշատությունը, որն ան- ուղղակիորեն արտացոլում է նաև մյուս գործոնները: Բնակավայրի ազդեցության գո- տու որոշման համար հիմք է ընդունվել Յու. Վ. Մեդվեդկովի և Յու. Բ. Արխպովի առաջարկած բանաձևը: Ուսումնասիրությունները քարտեզագրվել են ԱՏՀ-ի կիրառմամբ (քարտեզներ 7.1 ա, բ, գ, 7.2 ա, բ, գ, 7.3 ա, բ, գ):



Քարտեզ 7.1 ա** ՀՀ բնակավայրերից դեպի մայրաքաղաք տրանսպորտային մադելիությունը (ըստ ավտոմոբիլային ճանապարհների)


* *Նշված քարտեզները ԱՏՀ-երի կիրառմամբ 1: 200000 մասշտաբի վերլուծական քարտեզներ են: Ցուցադրված են փոքրամասշտաբ տարբերակները:



Քարտեզ 7.1 գ** Երևան քաղաքի ազդեցության ներուժը


Տարաբնակեցման ենթակարգության հաջորդ աստիճանում **մարզկենտրոններն են**: Վերջիններս, լինելով վարչական և նաև տարաբնակեցման համակարգերի կենտրոններ, ձեռք են բերել տարածաշրջանային գործառույթներ, հզոր քաղաքաստեղծ հիմք, որոնց արդյունքում կայանում ու զարգանում են: Սրանք վերածվել են նոր ուժային կենտրոնների, որոնք իրենց ազդեցության դաշտն են տարածում ողջ վարչական սահմաններում:

Առավել ցանկալի է մինչև 1 ժամյա տրանսպորտային մատչելիության ազդեցության դաշտի ձևավորումը (քարտեզներ 7.2 ա, բ, գ):



Քարտեզ 7.2 ա** ՀՀ մարզերի բնակավայրերից դեպի մարզկենտրոններ տրանսպորտային մատչելիությունը (ըստ ավտոմոբիլային ճանապարհների)


Քարտեզներում, մարզկենտրոնների ժամանակատարաձական վերլուծության արդյունքում տեսանելի են մեկժամյա տրանսպորտային մատչելիության և ազդեցության դաշտերից դուրս մնացած բնակավայրերը և տարածքները: Հատկապես հիմնախնդրային են Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերի մարզկենտրոնների մատչելիության հարցերը, որոնք առավելապես պահանջում են ոչ թե մարզային սահմանների փոփոխություն, այլ ճանապարհային ցանցի բարելավում, հատկապես Տավուշում՝ Իջևան-Նավուր, իսկ Գեղարքունիքի մարզում՝ Ծովագյուղ-Աղբերք-Ճամբարակ ուղղություններով:



Քարտեզ 7.2 Բ** ՀՀ մարզերի բնակավայրերից դեպի մարզկենտրոններ տրանսպորտային մարզելիությունը (ըստ ծախսած ժամանակի)

Ենթակարգության հաջորդ աստիճանում **տեղական կենտրոններն են**, որոնք ըստ էության ՀՀ մյուս **քաղաքներն են**: Դրանք ունեն մինչև 50 հազ. բնակչություն և մինչև կես ժամյա ազդեցության գոտի (քարտեզներ 7.3 ա, բ, գ):


«ՀՀ գյուղերի շուրջ 65%-ը գտնվում է քաղաքների ազդեցության ոլորտում: Հանրապետության գյուղական բնակչության 60%-ից ավելին ապրում է մայրաքաղաքի, Գյումրու և Վանաձորի մերձակա գյուղերում:...ՀՀ-ի հատկապես սահմանամերձ և հեռավոր տարածաշրջանների գյուղական բնակավայրերի զարգացման համար առանձ



Քարտեզ 7.2 գ ՀՀ մարզկենտրոնների ազդեցության ներուժը**

նակի նշանակություն ունեն հեռավորությունը մարզկենտրոնից և տարածաշրջանային կենտրոններից» [32, էջ 176]:

Վերոհիշյալ քարտեզներում ակնառու կերպով երևում են կենտրոնների թույլ ազդեցության գոտիները և ազդեցության դաշտից դուրս մնացած տարածքները: Սակայն, որպեսզի ճիշտ գնահատենք այդ թույլ ազդեցության գոտիների յուրացման հնարավորությունները, անհրաժեշտություն է առաջացել կատարել բնակավայրերի մատչելիության և ռելիեֆի որակական գնահատման քարտեզների համադրում (քարտեզ 8):



Քարտեզ 7.3 ա ՀՀ բնակավայրերի հեռավորությունը քաղաքներից
(ըստ ավտոմոբիլային ճանապարհների)**

Արդյունքում, երբ մենք տարբերակում ենք նաև յուրացման համար դժվարա-
մատչ տարածքները, հստակեցվում են քաղաք-կենտրոնների թույլ ազդեցության այն
գոտիները, որոնք ունեն յուրացման ու նոր կենտրոնների ձևավորման անհրաժեշտու-
թյուն: Այդպիսի տարածքներ են **Շիրակի մարզի հյուսիսային և հարավային, Արագա-
ծոտնի և Արմավիրի արևմտյան, Արարատի հարավարևելյան, Գեղարքունիքի
արևելյան, Տավուշի կենտրոնական և հարավային, Վայոց ձորի և Սյունիքի լեռնա-
յին շրջանները:**



Քարտեզ 7.3 Բ ՀՀ բնակավայրերի հեռավորությունը քաղաքներից (ըստ ծախսված ժամանակի)**

Վերոհիշյալ գոտիներում նոր կենտրոնները կարող են ընտրվել և հիմնավորվել տեղական մանրակրկիտ հետազոտությունների արդյունքում (տեղական մակարդակ): Այդպիսիք կարող են լինել **Աշոցքը, Բավրան, Գառնին, Ելփինը** և այլն:

Վերոհիշյալ քարտեզների ուսումնասիրությունից հանգում ենք հետևյալ եզրահանգումների՝


1. Երևանը, Գյումրին, Վանաձորը ՀՀ տարաբնակեցման համակարգում հանրապետական նշանակության կենտրոններ են ազդեցության հզոր դաշտերով:



Քարտեզ 7.3 գ** Քաղաքների ազդեցության ներուժը

2. Աշտարակը, Հրազդանը, Արմավիրը և Արտաշատը մարզային կենտրոններ են ազդեցության ձևավորված դաշտերով, սակայն կենտրոնական ավելի քիչ գործառույթներով, քանի որ գտնվում են Երևանի ազդեցության դաշտում:

3. Իջևանը, Կապանը, Եղեգնաձորը և Գավառը ևս մարզային կենտրոններ են, սակայն լեռնային ռելիեֆի, իսկ Գեղարքունիքի մարզում նաև Սևանա լճի առկայության պայմաններում նրանց ազդեցության դաշտերը ունեն գծային ձգվածություն և ոչ լիարժեք ընդգրկում: Այս 4 մարզերում համակարգաստեղծ գործընթացներն առավել ինտենսիվությամբ ընթանում են շրջանային և տեղական տարածքային մակարդակներում [27, էջ 137]:



Քարտեզ 8** ՀՀ բնակավայրերի հեռավորությունը քաղաքներից
(Տնտեսական յուրացման պայմանները)

Այդ իսկ պատճառով մարզային այս կենտրոնների ազդեցության դաշտերը համեմատաբար փոքր են, իսկ տարաբնակեցման համակարգում շոշափելի է վերոհիշյալ մարզերի նաև մյուս քաղաք-կենտրոնների նշանակությունը:

4. Նախկին շրջանային կենտրոնները տարածաշրջանային կենտրոններ են: Քանի որ տասնյակ տարիներ շարունակ ՀՀ վարչատարածքային նախկին բաժանման հիմնական միավորները եղել են շրջանները, ուր այդ երկարատև ժամանակահատվածում ձևավորվել են սոցիալ-տնտեսական ընդհանրություններ, արտադրական և սոցիալա-

կան ենթակառուցվածքների միասնական ցանց, իսկ շրջկենտրոնների մեծ մասն ունեն շրջանների նկատմամբ կենտրոնական և տրանսպորտաաշխարհագրական բարենպաստ դիրք և ձևավորված համակարգաստեղծ կապեր, նոր վարչատարածքային բաժանման պայմաններում կենտրոններն իներցիոն ձևով շարունակում են մնալ տարածաշրջանային կենտրոններ:

5. Նախկին շրջանային կենտրոններից միայն Նաիրիի, Բաղրամյանի ու Արագածի շրջանների կենտրոններն ունեն թույլ համակարգաստեղծ գործընթացներ: Դրանք ունեն իրենց բացատրությունները: Բաղրամյանն որպես առանձին շրջան ձևավորվել է 1983 թ., իսկ մինչ այդ եղել է Արմավիրի (Հոկտեմբերյան) շրջանի, Նաիրին ձևավորվել է 1972 թ. և եղել է Աշտարակի շրջանի, իսկ Արագածը ձևավորվել է 1972 թ. և եղել է Ապարանի շրջանի սահմաններում: Այս շրջանների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վերջիններս իրականում հանդիսանում են հարակից շրջանների ենթաշրջաններ: Բաղրամյանի տարածաշրջանը գտնվում է ոչ գլխավոր մայրուղու վրա և Երևանի հետ անմիջական կապ չունի: Նաիրիի տարածաշրջանը գտնվում է Երևանից դուրս եկող երկու գլխավոր մայրուղիների միջև, միջանցիկ ճանապարհի վրա, այսպես ասած, միջսեպային հատվածում, որի դեպքում, նրա կապը միջնորդվում է գլխավոր մայրուղուն մոտ կենտրոնով: Արագածի տարածաշրջանը նույնպես երկու մայրուղիների միջսեպային տարբերակ է:

Թեև Մասիսի շրջանը ևս ձևավորվել է ուշ՝ 1969 թ. և գտնվել է Էջմիածնի շրջանում, սակայն վերջինս կայացած տարածաշրջան է, իսկ Մասիս կենտրոնը կարևոր տրանսպորտային հանգույց, ուղղակիորեն գտնվում է Երևանի ճառագայթային գլխավոր մայրուղիներից մեկի և նաև՝ երկաթուղու հանգույցում:

Թույլ համակարգաստեղծ գործընթացներ ունեն Ախուրյանի և Գուգարքի տարածաշրջանային կենտրոնները, որոնք առավելապես գտնվում են համապատասխանաբար Գյումրու և Վանաձորի ազդեցության դաշտում:

6. Մյուս քաղաքները հանդես են գալիս որպես տեղական կենտրոններ:

7. Ամենաստորին աստիճանում գյուղական համայնքներն ու բնակավայրերն են, որոնք թվով կազմում են համապատասխանաբար 866 և 953:

ՀՀ տարաբնակեցման և «աճի կենտրոնների» կառուցվածքային տեղաշարժերը և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները կարելի է բացահայտել

քաղաքների կարգերի փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքում և կատարել մի շարք եզրահանգումներ:

Ակնհայտ է Երևան քաղաքի, ըստ բնակչության թվի, բացարձակ գերակայությունը մյուս քաղաքների նկատմամբ: Նմանատիպ պատկեր սովորաբար բնորոշ է զարգացող երկրներին: ՀՀ երկրորդ և երրորդ քաղաքները՝ Գյումրին (117.7 հազ. մարդ, 2015 թ.) և Վանաձորը (82.2 հազ. մարդ), համարվում են միջին և մեծ քաղաքներ: Ըստ էության հանրապետությունում բացակայում են խոշոր՝ 250-500 հազ., խոշորագույն՝ 500 հազ-ից 1000000 բնակչությամբ բնակավայրերը, որը խոսում է խիստ բևեռացման մասին: Այդ մասին է վկայում նաև, վիճակագրական տվյալների համաձայն կազմված, ՀՀ քաղաքների՝ ըստ բնակչության թվի, դասակարգման աղյուսակը (հավելված 1):

Աղյուսակ 6

ՀՀ քաղաքներն ըստ մարդաշատության, 2015 թ.[11]

Բնակավայրի մեծությունը (մարդ)	Քանակը	Քաղաքային բնակչ. տեսակարար կշիռը, %	Բնակավայրի մեծությունը (մարդ)	Քանակը	Քաղաքային բնակչ. Տեսակարար կշիռը, %
Մինչև 5 000	11	1.6	50 001-100 000	1	4.3
5 001-20 000	30	20.9	100 001-250 000	1	6.2
20 001-50 000	12	10.7	1 000 000-ից ավել	1	56.3

Քաղաքների կարգերի փոփոխության աղյուսակի (հավելված 2) վերլուծությունից էլ ակնհայտ է դառնում, որ 1959-2004 թթ. ՀՀ քաղաքների ենթակարգությունում առաջին երեք քաղաքները անփոփոխ են մնացել, մինչդեռ ավելի ցածր կարգերում դիտվել են տեղաշարժեր: ՀՀ տարաբնակեցման ենթակարգությունում իրենց տեղը զգալի բարձրացրել են **Հրազդանը, Չարենցավանը, Արտաշատը, Գավառը, Աբովյանը, Մասիսը**: Սրանց մեծ մասն Երևանյան տարաբնակեցման համակարգում գտնվող քաղաքներ են, որոնք զարգացել են Երևանի ազդեցությամբ՝ վերամշակող արդյունաբերության բազայի վրա: Միևնույն ժամանակ, քաղաքների ենթակարգությունում իրենց դիրքերը զիջել են **Քաջարանը, Ալավերդին, Դիլիջանը, Արթիկը, Սյրեփանավանը, Սպիտակը**: Սրանք կամ լեռնահանքային արդյունաբերության, կամ էլ առողջարանային, կամ էլ նախկին շրջանային կենտրոններ են [27, էջ 146-148]:

Առավել արժեքավոր են նոր վարչատարածքային բաժանման և անցումային տնտեսության ազատ շուկայական հարաբերությունների պայմաններում կենտրոնների

կարգերի փոփոխությունների ուսումնասիրությունները (հավելված 3): Թեպետ հանրապետությունում դիտվող բնակավայրերի բնակչության թվաքանակի նվազման կամ շատ դանդաղ աճի ընդհանուր միտումներին, 2005-2016 թթ. ընթացքում ՀՀ քաղաքների ենթակարգության շարքում առաջատար դիրքերը շարունակում են պահպանել **մայրաքաղաքը, Գյումրին, Վանաձորը և Վաղարշապատը**: Մյուս քաղաքների ենթակարգությունն ընդհանուր գծերով պահպանվել է, **բացառությամբ Իջևանի, Դիլիջանի, Մասիսի, Աբովյանի, Բյուրեղավանի, Արարատի, Եղեգնաձորի և Մարտունիի**, որոնք կարգային առաջընթաց, և **Հրազդանի, Գավառի, Սևանի, Ճամբարակի, Աշտարակի, Սյրեփանավանի, Վեդիի, Քաջարանի, Տաշիրի**, որոնք կարգային անկում են գրանցել: **Թումանյան, Ծաղկաձոր, Շամլուղ, Դաստակերտ** քաղաքային բնակավայրերում կարգային անկում տեղի է ունեցել Այրումի քաղաքի կարգավիճակ ստանալու պատճառով:

Տարաբնակեցման և «աճի կենտրոնների» տարածքային կազմակերպման առանձնահատկություններից է, որ Երևանի և Գյումրու տարածաշրջանային տարաբնակեցման համակարգերին բնորոշ է հանգուցաշառավղային տարածքային կառուցվածքի տիպը (կենտրոնամետ դիստորսիա), երբ բնակավայրերի զգալի մասը կենտրոնացած է տարածաշրջանի կենտրոնի շուրջը՝ նրանից դուրս եկող ճանապարհային առանցքների երկայնքով: Մյուս մարզերին բնորոշ է տարաբնակեցման տարածքային կառուցվածքի առանցքային տիպը՝ գլխավոր մայրուղու երկայնքով (ուղղանկյուն դիստորսիա):

ՀՀ տարաբնակեցման տարածքային կառուցվածքի առանձնահատկությունները բացահայտում են նաև ճանապարհների նկատմամբ տարաբնակեցման ցանցի բաշխվածության ուսումնասիրությունները: ՀՀ բոլոր բնակավայրերը միացած են հանրապետության ճանապարհային միասնական ցանցին: Այլ խնդիր է ճանապարհների բարեկարգության ու որակական հիմնախնդիրներն ու մեծ հեռավորությունները կենտրոններից և գլխավոր մայրուղիներից: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ գյուղական համայնքների 24.6%-ը մայրուղուն և այլ համայնքներին միացնող ճանապարհների տեսակետից ունի շատ վատ, 31.7%-ը վատ, 35.1%-ը միջին, 8.2%-ը լավ, 0%-ը գերազանց վիճակ [5, էջ 79, 32, էջ 179]: Ըստ բնակչության թվաքանակի ճանապարհային ապահովվածության լավ և միջին վիճակի առավել բարձր ցուցանիշ ունեն 3501-5000 մարդ ունեցող գյուղական համայնքները (76.3%): ՀՀ 116 գյուղական

համայնքներում ճանապարհներն անանցանելի են ծմռան ամիսներին, որոնք առավել մեծ թիվ են կազմում Արագածոտնի (26 համայնք), Գեղարքունիքի (23 համայնք), Սյունիքի (19 համայնք) և Շիրակի (19 համայնք) մարզերում: Հանրապետության ներհամայնքային ճանապարհների վիճակը նույնպես բավարար գնահատել չի կարելի: Գյուղական 279 համայնքի ներքին ճանապարհներն ընդհանրապես պինդ ծածկույթ չունեն, 421 համայնքում ճանապարհները հիմնականում ծածկույթ չունեն և միայն 12 համայնքում բոլոր ճանապարհներն ասֆալտապատ են: ՀՀ գյուղական համայնքների մոտ 30%-ի տարածքով չեն անցնում միջհամայնքային կամ ներհանրապետական հասարակական տրանսպորտի միջոցներ [5, էջ 80, 32, էջ 179-180]:

Վերոհիշյալ վերլուծությունից ակնհայտորեն երևում է, որ առկա է ճանապարհային ցանցի բարելավման խնդիր: Առաջնային խնդիր է ճանապարհային ավելի խիտ ցանցի ստեղծումը, լեռնային ոլորապտույտ ճանապարհների փոխարեն բարձր լեռնաշղթա-

ները հատող թունելների կառուցմամբ ճանապարհային հեռավորության կրճատումը, անվտանգության մեծացումը, ճանապարհային ցանցի որակի բարելավումը, որի ուղղությամբ լուրջ աշխատանքներ են պահանջվում:

Այսպիսով, այս ենթագլխում, տարաբնակեցման և «աճի կենտրոնների» բազմակողմանի վերլուծությունների հիման վրա բացահայտվել են ՀՀ տարաբնակեցման համակարգի առկա կենտրոնները և դրանց ենթակարգային կառուցվածքը, տարբերակվել առկա կենտրոնների ազդեցության դաշտերը և դրանցից դուրս գտնվող տարածքները, որոնցում արդեն տեղական մանրակրկիտ հետազոտությունների արդյունքում կարող են ընտրվել և հիմնավորվել նոր կենտրոններ:

4.3 ՀՀ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԵՎԵՌՆԵՐԻ» ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

III. փուլ. «Զարգացման բևեռների» գործառութափարածքային կազմակերպման առանձնահատկությունների բացահայտում:

Խորհրդային Միության փլուզումից և անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի տնտեսությունը, ի թիվս նախկին ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնող մյուս հանրապետությունների, հայտնվել է նոր մարտահրավերների առջև: Երկրում առաջնային կա-

րևորություն է ստացել միջազգային տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացների մեջ արդյունավետ ներառվելու հիմնախնդիրը:

Օգտվելով Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) [142, էջ 108-109] ու Վերակառուցման և Զարգացման համաշխարհային բանկի (ՎԶՀԲ) [144] աշխարհին և Հայաստանին նվիրված զեկույցներից լուսաբանենք ՀՀ տնտեսական մրցունակության գնահատման վարկանիշային մի շարք ցուցանիշներ և որոշենք ՀՀ տեղը համաշխարհային տնտեսության մեջ:

- ՀՀ ՀՆԱ-ը 2011 թ. կազմել է 10.1 մլրդ. դոլար՝ համաշխարհային ամբողջ համախառն արտադրանքի 0.02%-ը, 2014 թ.՝ 11.644 մլրդ. դոլար, 0.015% [144]:

- ՀՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ը 2011 թ. կազմել է 3.417 դոլար, 2014 թ.՝ 3.874 դոլար [144]:


- ՀՀ համաշխարհային մրցունակության ինդեքսը 2011-2012թ. 142 երկրների շարքում կազմել է 3.9 միավոր՝ զբաղեցնելով 92 հորիզոնականը, 2014-2015 թ. 144 երկրների շարքում կազմել է 4.01 միավոր՝ զբաղեցնելով 85 հորիզոնականը [142]:

- Բիզնեսի իրականացման դյուրինության ինդեքսով Հայաստանը 2011-2012 թ. 185 երկրների շարքում զբաղեցրել է 32 հորիզոնականը, 2014-2015 թ. 189 երկրների շարքում՝ 35-րդ հորիզոնականը [108]:

Ընդհանուր առմամբ, երկրների, և այդ թվում Հայաստանի, մրցունակության համաշխարհային ցուցանիշի փոփոխություններն ուղիղ համեմատական կապի մեջ չեն տնտեսական աճի ցուցանիշի հետ: Այն պարզապես արտահայտում է դիտարկվող երկրի մրցունակության վարկանիշն աշխարհի բոլոր երկրների շարքում: Ցուցանիշի փոփոխության պատճառները բազմաթիվ են, ինչպիսիք են օրինակ, մրցակից երկրների թիվի փոփոխությունը, մրցակից երկրների տնտեսական աճի տարբերությունները և այլն:

ՀՀ տնտեսական աճի շարժընթացի ուսումնասիրությունից երևում է (նկար 3), որ անցումային փուլի առաջին դժվարին տասնամյակից հետո՝ 2001-2008 թթ. ընկած ժամանակահատվածում, Հայաստանի տնտեսությունն անընդմեջ աճել է: Ըստ էության, այդ ժամանակահատվածում, Հայաստանը ունեցել է տնտեսական զարգացման կայուն բարձր ցուցանիշներ՝ միջինը 12.6%: Սակայն, 2008 թ. իրավիճակը փոխվել է: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության արդյունում

Հայաստանում տրնտեսական աճի տեմպերը նվազել են կազմելով 6.9%: 2009 թ. արձանագրվել է երկրի նվազագույն տնտեսական աճը՝ -14,1%: Արդեն 2010 թ. տնտեսությունն սկսել է վերականգնվել՝ ապահովելով 2.2%, 2011 թ.՝ 4.7%, 2012 թ.՝ 7.2% տնտեսական աճ: Սակայն 2014 թ. վերստին նվազել է՝ կազմելով 3.5% [13]:



Նկ. 3 Տնտեսական աճի դինամիկան ՀՀ-ում (%) [13]

Մինչճգնաժամային փուլում տնտեսության աննախադեպ աճը բացատրվում էր արտերկրից մասնավոր դրամական փոխանցումների ծավալների և օտարերկրյա ուղղակի ներդրումների անընդհատ աճով: 2008 թ. միջազգային ֆինանսական ճգնաժամի հետևանքով, երբ կտրուկ կրճատվեցին արտաքին մասնավոր տրանսֆերտների ու օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները, Հայաստանի տնտեսությունն անկում ապրեց: Փաստորեն Հայաստանի տնտեսությունը, անցումային երկրների շարքում, արտաքին ազդակների և շոկերի նկատմամբ ամենազգայուններից մեկն է, ինչը մեծապես պայմանավորված է երկրի արտաքին ֆինանսավորումից կախվածության և տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկություններով [33]:

Ըստ ՎՀՀԲ տվյալների, ՀՀ տնտեսական աճին նպաստող գործոններից են աշխատուժի շուկայի կանոնակարգումը, հանցագործությունների ու ահաբեկչության ցածր մակարդակը և այլն, իսկ խոչընդոտող գործոնները են կոռուպցիան, կառավարական բյուրոկրատիան, տնտեսության ստվերայնությունը, մենաշնորհությունը, հարկային օրենքները, ենթակառուցվածքների ոչ պատշաճ վիճակը և այլն:


Վերոհիշյալ գործոնների բարելավման միջոցառումներն անկասկած կարևոր են Հայաստանի տնտեսական մրցակցային միջավայրի բարելավման համար, սակայն այս-օր ոչ պակաս առաջնային խնդիր է **տնտեսության կառուցվածքային փոփոխությունը**, ռազմավարական ուղղությունների գիտական հիմնավորված

ընտրությունը, դրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծումը: Ռազմավարական գերակա ճյուղերը կլինեն այն հենասյուները, որոնց վրա կկառուցվի Հայաստանի ազգային տնտեսությունն և բազմապատկիչի արդյունքի հիման վրա կապահովվի տնտեսության ամբողջականություն և համալիրություն, և դրանով իսկ կայուն և քիչ խոցելի տնտեսության ստեղծում: Օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի տարբեր հանգամանքներով պայմանավորված Հայաստանը դեռևս չի ստեղծել նոր իրավիճակին համապատասխան տնտեսության կառուցվածքի հիմքեր, թեև կան ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ծրագրեր [17], ըստ որի ՀՀ կառավարությունը հայտարարել է գիտելիքահենք տնտեսություն կառուցելու իր երկարաժամկետ ռազմավարական նպատակի մասին:

Մինչխորհրդային Հայաստանը ինդուստրիալ երկիր էր: Արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1970-1990 թթ. կազմել է 56-68%: 1988 թ. տվյալներով ՀՀ-ում գործում էր ԽՍՀՄ-ում լայն ճանաչում ունեցող արդյունաբերական 713 ձեռնարկություն: Կազմելով ԽՍՀՄ միասնական տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ օղակը, «տեղի և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից ներմուծվող հումքատեսակների բազայի վրա ստեղծվել էր ծանր արդյունաբերության շատ ճյուղեր՝ էլեկտրաէներգետիկ, լեռնահանքային արդյունաբերություն, գունավոր մետաղաձուլություն, քիմիական արդյունաբերություն, բազմաճյուղ մեքենաշինություն, շինանյութերի և փայտամշակման արդյունաբերություն: Այդ տարիներին բարձր զարգացման են հասել նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը: Հանրապետության արդյունաբերական արտադրանքն արտահանվում էր աշխարհի 80 երկրներ» [28, էջ 111-112]:

Ազատ տնտեսական շուկայի ստեղծմամբ, հետխորհրդային Հայաստանում տընտեսության ձևավորված կառուցվածքը կազմալուծվեց: Անցումային փուլում երկիրն ապաարդյունականացվեց: Գերակայող դիրքում հայտնվեց գյուղատնտեսությունը, որի տեսակարար կշիռը գլխավորապես ավելանում էր ի հաշիվ արդյունաբերության: Գյուղատնտեսությունը իր առավելագույն տեսակարար կշիռն ունեցել է 1993 թ.՝ կազմելով 51.4%, որից հետո շարունակաբար նվազել է մինչ 2008 թ., ապա կրկին որոշակիորեն ավելացել՝ 2015 թ. կազմելով 17.3%: ՀՀ տնտեսության կառուցվածքում այսօր շարունակական աճ է գրանցվում ծառայությունների ոլորտի մասնաբաժնում (նկար 4):

Ներկայումս տնտեսական կառուցվածքում առաջատար դիրքում է ծառայությունների ոլորտը՝ 46.4% (2015 թ.), ապա գյուղատնտեսությունը՝ 17.3%, արդյունաբերությունը՝ 16.2%, շինարարությունը՝ 9.5%:




Նկ. 4 ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքը և դինամիկան, (%) [13]


Ակնհայտ է, և դա միանշանակորեն ընդունում են բոլորը, որ Հայաստանի առկա տնտեսության կառուցվածքը ներկայացնում է «ոչ հաջողված» սցենար [34]: Տնտեսական կառուցվածքում ցածր արտադրողականությամբ ոլորտների գերակայության պատճառով երկիրը հայտնվել է մրցունակության ոչ նպաստավոր պայմաններում: Նկատի ունենալով Հայաստանի տեղը կենտրոն-ծայրամաս համակարգում, նրա գործառույթներն աշխատանքի աշխարհագրական բաժանման մեջ, կարող ենք հիմնավորել, որ մեր երկրի համար մրցունակություն ապահովող ոլորտը պետք է լինի արդյունաբերությունը (լեռնահանքային արդյունաբերությունը, որում մեծ շահագրգռվածություն ունեն կենտրոնական զարգացած երկրները՝ ծայրամասն ու կիսածայրամասը դիտելով որպես հումքի մատակարարներ, և մշակող արդյունաբերությունը, որի զարգացման նախադրյալներն առկա են ՀՀ-ում):

Հայաստանում համախառն կապիտալի կուտակման և տնտեսության ճյուղային կառուցվածքի ձևավորման վրա էական ազդեցություն ունեն օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ): Թեպետ օտարերկրյա ներդրումների մեծ մասնաբաժինը կապի-տալի կուտակման մեջ նպաստավոր է, սակայն այն միաժամանակ կարող է մեծացնել տնտեսության կախվածությունը արտաքին աղբյուրներից՝ չնպաստելով կապիտալի կուտակման սեփական աղբյուրների զարգացմանը: 2015 թ. ՀՀ ՕՈՒՆ-ի ծավալը կազմել է 71778.5 մլն. դրամ [13]:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալների և ըստ տնտեսության ոլորտներում դրանց մասնաբաժինների շարժընթացը արտահայտում են ստորև ներկայացվող գծագրերում (նկար 5, 6):



Նկ. 5 ՀՀ օտարերկրյա ընդհանուր և ուղղակի ներդրումների դինամիկան [13]



Նկ. 6 Օտարերկրյա ուղղակի ներդրումների կառուցվածքն ըստ ոլորտների [13]

Ինչպես երևում է գծագրերից, մեր երկրում գրանցվել է ներդրումների տպավորիչ աճ: 2003 թ. ՕՈՒՆ-ի գերիշխող մասնաբաժին ունեցել են հանքարդյունաբերության, ապա՝ սննդի ու խմիչքի արտադրության, 2014 թ-ին՝ գազա-, ջրա-, էներգամատակարարման, սննդի և խմիչքների արտադրության ու հանքարդյունաբերության ոլորտները: Ենթակառուցվածքներում զգալի ներդրումներ կատարվել են 2008 թ., որից հետո նվազել են: Չնայած զգալի ներդրումներին, Հայաստանը իր ընդհանուր ենթակառուցվածքների որակի մրցունակությամբ դեռևս ոչ բավարար դիրքերում է: Ներդրումներն աննշան են եղել վերամշակող արդյունաբերության մյուս ճյուղերում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամերի արդյունքում արձանագրված տնտեսական խոցելի անկումները վկայում են ՀՀ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտության մասին: Կարևորելով խնդրի լուծման


հրատապությունը՝ կառավարությունը մշակել է արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն: Իրականացվող արդյունաբերական քաղաքականության հիմքում ընկած է արտահանման ներուժ ունեցող հեռանկարային ճյուղերի, հատկապես վերամշակող արդյունաբերության, զարգացման աջակցման միջոցով տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումը: Որոշակի աշխատանքներ արդեն արվել են: Ներդրումների արդյունքում ընդլայնվել են մրցունակ արտադրությունները, ստեղծվել են ազատ տնտեսական գոտիներ, մշակվել ու իրականացվում են միջհանրապետական ճանապարհների կառուցման ծրագրեր և այլն, սակայն տնտեսական բարեփոխումները կրում են իրավիճակային բնույթ և չունեն տեսական հիմնավորում, որի առկայությունը գործընթացը կդարձնի առավել արդյունավետ:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի արդյունաբերությունը կազմալուծվեց բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների արդյունքում, ինչպիսիք էին ԽՍՀՄ միասնական տնտեսական համակարգի փլուզումը, ձեռնարկությունների միջև տնտեսական կապերի խզումը, տրանսպորտային շրջափակումները, պետական ձեռնարկությունների ոչ արդյունավետ մասնավորեցումը, էներգետիկ ճգնաժամը և այլն: Հաջորդիվ տարիներին նրա մասնաբաժինը տնտեսության կառուցվածքում կայուն կերպով նվազել է մինչև 2009 թ., որից հետո արդյունաբերության արտադրանքի մասնաբաժինն որոշակիորեն ավելացել է 2015 թ. կազմելով 16.2% (հավելված 4):


Հայաստանի Հանրապետությունն այսօր շարունակում է հանդես գալ բազմաճյուղ արդյունաբերական ներուժ ունեցող երկիր, բայց ոչ նախկին բովանդակությամբ, ճյուղային կառուցվածքով ու ներքին արտադրական, տեխնոլոգիական կապերով: Էապես փոխվել է ճյուղային կառուցվածքը և դրանց հարաբերակցությունը: Նախկինում առաջինը մեքենաշինությունն էր (մետաղամշակման հետ միասին), որի ավելի քան 180 ձեռնարկություններ տալիս էին հանրապետության ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեկ երրորդը: Երկրորդ տեղում էր թեթև արդյունաբերությունը (135 ձեռնարկություն, համախառն արտադրանքի 24%): Դրան հաջորդում էր սննդի արդյունաբերությունը (139 ձեռնարկություն, ՀՆԱ-ի 18%): Մեծ էր նաև քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղաձուլության, շինանյութերի արդյունաբերության և էլեկտրա-էներգետիկայի բաժինը [7 էջ 152]:

Այժմ հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունի վերամշակող արդյունաբերությունը 62.5% (հանքագործական արդյունաբերությունը՝ 16.4%) (2015 թ.) (նկար 7):




Նկ. 7 Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության բաժինների, % [13]

Հանքագործական արդյունաբերության կառուցվածքում բացարձակ գերակշռությամբ առանձնանում է մետաղական հանքաքարի արդյունահանումը (նկար 8):




Նկ. 8 Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, (%) [13]


Էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում առաջատար դերը պատկանում է ԶԷԿ-երին, որոնք տալիս են էլեկտրաէներգիայի արտադրության 42.4%-ը: ԱԷԿ-ը՝ արտադրում է 31.8%-ը, ՀԷԿ-երը՝ 25.7%-ը, հողմայինը՝ 0.1%-ը (նկար 9, 10, 11):



Նկ. 9 Էլեկտրաէներգիայի արտադրությունը, 2014 [13]




Նկ.10 Էլեկտրակայանների հզորությունը, 2014 թ., հազ. կՎտ [13]



Նկ. 11 Էլեկտրաէներգիայի արտադրությունը [13]

Մշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն սննդամթերքի ու խմիչքների արտադրությունը, որոնց բաժին է ընկնում մշակող արդյունաբերության ՀՆԱ-ի 46.6%-ը (2015 թ.), հիմնային մետաղների արտադրությունը՝ 18.2%: Սրանք միասին տալիս են մշակող արդյունաբերության 64.8%-ը (նկար 12):



Նկ. 12 Վերամշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը, 2014, [13]

Առաջնային կարևորություն է ներկայացնում ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքում «գարգացման բևեռների» տարբերակումը: Խնդրի լուծման

համար դիտարկվել են վերամշակող արդյունաբերության վիճակագրական հետևյալ ցուցանիշները (հավելվածներ 5-7).

- ճյուղային կառուցվածքը, 2014 թ.,
- ճյուղային կառուցվածքի շարժընթացը, 2003-2014 թթ.,
- արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսներն ըստ տնտեսական գործունեության ճյուղերի, նախորդ տարվա նկատմամբ, 2014 թ.,
- արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսների շարժընթացը, 2003-2014 թթ.,
- արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2014 թ.,
- արդյունաբերական արտադրանքի ծավալների շարժընթացը, 2003-2014 թթ.:

Մշակող արդյունաբերության 2014 թ. ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունից (հավելվածներ 8, 9) ակնհայտորեն երևում է, որ բացարձակ գերակայություն ունեն սննդամթերքի, խմիչքների և հիմնային մետաղների արտադրությունները: Միջին տեղ են զբաղեցնում ծխախոտի, ռետինե և պլաստմասսե նյութերի, թղթի, այլ ոչ մետաղական հանքային, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները և պոլիգրաֆիական գործունեությունը: Մնացած արտադրությունները չեն գերազանցում 1 %-ի սահմանագիծը:

Ճյուղային կառուցվածքի 2003-2014 թթ. շարժընթացի ուսումնասիրությունից (հավելված 10, 11) բացահայտվում է, որ 12 տարվա կտրվածքում, թեպետ մասնաբաժինների կորի որոշակի խտտորումներին, իրենց գերակայող դիրքերը պահպանում են սննդամթերքի, խմիչքների և հիմնային մետաղների արտադրությունները: Նկատվում է ծխախոտային արտադրատեսակների մասնաբաժնի թռիչքային աճ վերջին երկու տարիներին, այլ ոչ հանքային արտադրատեսակների արտադրության սրընթաց աճ մինչև 2008 թ., և մասնակի անկում ճգնաժամի տարիներից հետո: Աճի դրական միտումներով առանձնացել են նաև կաշի-կոշկեղենի, թղթի և թղթե արտադրատեսակների, ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների արտադրությունները: Բավականին արագ ասպարեզ են մտել համակարգիչների, օպտիկական սարքավորանքի և դեղագործական արտադրությունները: Մասնաբաժինների կտրուկ նվազում գրանցել են կահույքի, քիմիական նյութերի, ավելի մեղմ անկում՝

մանածագործական, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, պոլիգրաֆիական գործունեության, էլեկտրական սարքավորանքի, մեքենաների և այլ սարքավորանքների արտադրությունները:

Մշակող արդյունաբերության արդյունաբերական արտադրանքի 2014 թ. ֆիզիկական ծավալի ինդեքսների (ըստ տնտեսական գործունեության ճյուղերի, նախորդ տարվա նկատմամբ, %) ուսումնասիրությունից (հավելված 12) պարզորոշ երևում է, որ 2014 թ. աճի առավել մեծ տեմպեր ցուցաբերել են ծխախոտային արտադրատեսակների՝ 136.5%, թղթի և թղթե արտադրատեսակների՝ 132.4%, բնափայտի և փայտե արտադրատեսակների՝ 124.6%, ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների՝ 123.1%, հա-գուստի՝ 116.1%, հիմնային մետաղների՝ 110.3%, դեղագործական արտադրանքի՝ 110%, սննդամթերքի՝ 108.4%, քիմիական նյութերի՝ 105.5% արտադրությունները: Իրենց ֆիզիկական ծավալի ինդեքսներով հատկապես ետ են մնացել ոսկերչական արտադրատեսակների՝ 54.8%, մեքենաների և սարքավորանքի՝ 82.6%, պատրաստի մետաղե արտադրատեսակների՝ 89.2%, արտադրությունները:

Մշակող արդյունաբերության արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսների 2003-2014 թթ. շարժընթացի ուսումնասիրությունից (հավելված 13) պարզվում է, որ այդ տարիներին արտադրություններից ոչ մեկը ինդեքսների կայուն աճի տեմպեր չի ապահովել: Մշտապես 100%-ից բարձր ինդեքսներ ապահովել են միայն սննդամթերքի՝ միջինը 108.7%, ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների՝ 124.3%, հիմնային մետաղների՝ 110.8 %, ծխախոտային արտադրատեսակների՝ 118% արտադրությունները:

Ոչ պակաս կարևոր է նաև 2014 թ-ի արդյունաբերական արտադրանքի ծավալների ըստ տնտեսական գործունեության տեսակների քննարկումը (հավելված 14, 15): Վիճակագրական այս տվյալների ուսումնասիրությունից էլ պարզվում է, որ առավելագույն արժեքներ ունեն սննդամթերքի, խմիչքների և հիմնային մետաղների, ապա՝ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունները:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների շարժընթացը 2003-2014 թթ. (հավելված 16, 17) ցույց է տալիս, որ ծավալի մշտական աճ ապահովել են սննդամթերքի, խմիչքների, հիմնային մետաղների, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների, հագուստի, ծխախոտի արտա-

դրությունները: Նվազման միտումներ գրանցել են, մասնավորապես 2009 թ. ճգնաժամից հետո, մանածագործական, մեքենաների և սարքավորանքի՝ չներառված ուրիշ խմբավորումներում, արտադրությունները:

Կարևոր հանգամանք է նաև ճգնաժամերի նկատմամբ արդյունաբերության ճյուղերի կայունության աստիճանի պարզումը: Դիտարկելով 2009 թ. ճգնաժամի ժամանակ ճյուղերի աճի անկման փոփոխությունները բացահայտվել են առավել կայուն և առավել խոցելի ճյուղերը (աղյուսակներ 7, 8):

ՀՀ արդյունաբերության ճգնաժամերի և արտաքին ազդակների հանդեպ առավել կայուն ճյուղերն են լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետաղաձուլությունը:

Աղյուսակ 7

2009 թ. ճգնաժամի ժամանակ առավել կայուն աճ գրանցած վերամշակող արդյունաբերության ճյուղերը (%) [հավելված 6]

մեքենայական հանքաքարի արդյունահանում	110
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	117.6
ռետին և պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն	116.7
հիմնային մեքենաների արտադրություն	120.9

Աղյուսակ 8

2009 թ. ճգնաժամի ժամանակ առավել մեծ անկում գրանցած վերամշակող արդյունաբերության ճյուղերը (%) [հավելված 6]

հանքագործական արդյունաբերության և բաց հանքերի շահագործման այլ ճյուղեր	85.7
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	49.3
հագուստի արտադրություն	89
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	45.5
էլեկտրական սարքավորանքի արտադրություն	73.9
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	65.9
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	55.1
այլ ոչ մեքենայական հանքային արտադրատեսակների արտադրություն	75.7

Այսպիսով, ՀՀ վերամշակող արդյունաբերության կառուցվածքում «զարգացման բևեռների» տարբերակման ու բացահայտման համար կատարվել է արտադրությունների բալային գնահատում՝ հենվելով վիճակագրական տվյալների վերոհիշյալ 7 ցուցանիշների վրա: Ընտրվել է հինգ բալանոց համակարգը: Բալային գնահատման սահմանային եզրույթների որոշման համար հիմք են ծառայել ցուցանիշների նվազագույն և առավելագույն տվյալները, դրանց տարբերության մեծությունը, ցուցանիշների դրսևորման առանձնահատկությունները (աղյուսակ 9):

ՀՀ վերամշակող արդյունաբերության բալային գնահատման սանդղակ

Ցուցանիշներ	Որակական գնահատում բալերով				
	1	2	3	4	5
1. Արտադրանքի արտադրության մասնաբաժինն ամբողջ արդյունաբերության մեջ (2014 թ., %)	10%-ից բարձր	5-10%	3-5%	1-3%	0-1%
2. Արտադրանքի արտադրության մասնաբաժնի դինամիկան (2003-2014 թթ., միջին, %)	10%-ից բարձր	5-10%	3-5%	1-3%	0-1%
3. Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսները նախորդ տարվա նկատմամբ (2014 թ., %)	125%-ից բարձր	100-125%	75-100%	50-75%	50-0%
4. Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսների դինամիկան (2003-2014 թթ., միջինը, %)	125%-ից բարձր	100-125%	75-100%	50-75%	50-0%
5. Արտադրանքի ծավալները (ընթացիկ գներով, 2014 թ., մլն դրամ)	50 000-ից բարձր	25 000-50 000	10 000-25 000	5 000-10 000	0 - 5 000
6. Արտադրանքի ծավալների դինամիկան (2003-2014 թթ., միջինը, մլն դրամ)	50 000-ից բարձր	25 000-50 000	10 000-25 000	5 000-10 000	0 - 5 000
7. Արտադրանքի ծավալների դինամիկան (2009-2011 թթ., միջինը, մլն դրամ)	5 000-ից բարձր	3 000-5 000	1 000-3 000	0-1 000	0-ից ցածր

Հիմք ընդունելով մշակված բալային գնահատման սանդղակը՝ վերամշակող արդյունաբերության յուրաքանչյուր արտադրության համար հաշվարկվել են բալային գնահատումների հանրագումարային, ապա միջինացված համաթվերը, ըստ որոնց էլ տարբերակվել են առաջատար արտադրությունները (հավելված 18):

Ստորև տրված է հանրագումարի միջինացված համաթվերի համակարգված տարբերակը, ուր հստակորեն երևում են առաջատար արտադրությունները (աղյուսակ 10):

Վերամշակող արդյունաբերության բալային գնահատման ինտեգրալ համաթվերն ըստ տնտեսական գործունեության տեսակների


Վերամշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքը	Գումար	Համաթիվ
սննդամթերքի արտադրություն	9	1.3
հիմնային մեքանիզմների արտադրություն	9	1.3
խմիչքների արտադրություն	10	1.4
այլ ոչ մեքանիզմական հանքային արտադրարտեսակների արտադրություն	13	1.9
ծխախոտային արտադրարտեսակների արտադրություն	15	2.1
ռետինե և պլաստմասսե արտադրարտեսակների արտադրություն	18	2.6
թղթի և թղթե արտադրարտեսակների արտադրություն	23	3.3
պարփրաստի մեքանիզմ արտադրարտեսակների արտադրություն	23	3.3
պոլիգրաֆիկական գործունեություն	24	3.4
ոսկերչական արտադրարտեսակների արտադրություն	24	3.4
քիմիական նյութերի և քիմիական արտադրարտեսակների արտադրություն	25	3.6
հագուստի արտադրություն	26	3.7
քնափայտի մշակում և փայտե արտադրարտեսակների արտադրություն	26	3.7
էլեկտրական սարքավորանքի արտադրություն	26	3.7
դեղագործական արտադրանքի արտադրություն	27	3.9

կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	28	4.0
համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն	28	4.0
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	29	4.1
կահույքի արտադրություն	29	4.1
մանածագործական արտադրատեսակների արտադրություն	30	4.3


Ներկայումս ՀՀ արդյունաբերության ռազմավարական ոլորտներ են ընտրված **սննդարդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը, հանքահումքային և մետաղագործական, քիմիական, բիոտեխնոլոգիական և դեղագործական, մեքենաշինական, սարքաշինական և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, ոսկերչությունը և ակնագործությունը, շինանյութերի արտադրությունը:**

«Զարգացման բևեռների» տարբերակման գործում էապես կարևոր է նաև տնտեսական կապերի և արտաքին առևտրի առանձնահատկությունների բացահայտումը:

Եթե Խորհրդային Հայաստանը բարձր զարգացած ինդուստրիալ և մեքենայացված գյուղատնտեսություն ունեցող հանրապետություն էր և արտաքին ապրանքաշրջանառության մեջ արտահանումն արժեքային արտահայտմամբ մեծ չափով գերազանցում էր ներմուծմանը, ապա ներկայումս Հայաստանը թույլ զարգացած ինդուստրիալ երկիր է և արմատապես փոխվել են նրա արտաքին կապերի ծավալները, բնույթն ու ձևերը: Ապրանքաշրջանառությունում այսօր ներմուծումը գերազանցում է արտահանմանը:




Նկ. 13 ՀՀ արտահանումը և ներմուծումը [ըստ հավելված 19-ի]




Նկ. 14 ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը, 2014 թ. (%) [ըստ հավելված 20-ի]

Փոփոխություններ են գրանցվել նաև արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքում և ծավալներում: Այսպես, եթե նախկինում արտահանման արտադրատեսակների մեջ հատկապես գերակշռում էին մեքենաշինության (շուրջ 25%), թեթև արդյունաբերության, սննդի, քիմիական արդյունաբերության, գունավոր մետաղաձուլության արտադրատեսակները, իսկ ներմուծման արտադրանքի մեջ գերակշռում էին հումքատեսակները և կիսաֆաբրիկատները, ապա ներկայումս արտահանման առաջատարներն են լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետաղաձուլությունը, սննդի արդյունաբերությունը, իսկ ներմուծման կառուցվածքում հումքատեսակներին գումարվել են նաև բարձր արժեքներ ունեցող մեքենաշինական արտադրատեսակները: Ինչպես երևում է նկար 14-ից, ներմուծումը, բացի արտահանման երեք գերակա ոլորտներից, ամենուր գերազանցում է արտահանմանը:

Ստորև ներկայացված են նաև 2008-2014 թթ. արտահանման և ներմուծման կառուցվածքների դինամիկ շարժընթացները (նկար 15, 16):



Նկ. 15 ՀՀ արտահանման կառուցվածքը, 2008 -2014 թթ. (%) [ըստ հավելված 20-ի]



Նկ. 16 ՀՀ ներմուծման կառուցվածքը, 2008 -2014 թթ., (%) [ըստ հավելված 20-ի]

«Զարգացման բևեռների» տարբերակման նպատակով բալային գնահատման են ենթարկվել նաև արդյունաբերական արտադրատեսակների արտահանման տեսակարար կշիռները:

Աղյուսակ 11

Արդյունաբերական արտադրատեսակների արտահանման տեսակարար կշռի բալային գնահատման սանդղակ (%)

	1 /շար լավ	2/լավ	3/բավարար	4/վար	5/շար վար
Արտահանման տեսակարար կշիռը	25-ից բարձր	15-25	5-15	1-5	0-1

**Արդյունաբերական արտադրարտեսականների արտահանման տեսակարար
կշռի բալային գնահատման համաթվերը [ըստ հավելված 20-ի]**

Արտադրարտեսակ	Բալ	Արտադրարտեսակ	Բալ
Հանքահումքային մթերք	1	Քիմիական արտադրության ապրանքներ	5
Պատրաստի սննդի արտադրանք	2	Պլաստմասսա, կաուչուկ, ռետին	5
Թանկարժեք քարեր և մետաղներ	2	Կաշի և դրանից իրեր	5
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր	2	Թուղթ և թղթյա իրեր	5
Մանածագործական իրեր	4	Կոշկեղեն, հովանոցներ, գլխարկ	5
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	4	Տրանսպորտային միջոցներ	5
Մեքենաներ և սարքավորումներ	4	Ընդամենը փայտ և փայտյա իրեր	5
Ընդամենը սարքեր և ապարարներ	4	Տարբեր արդյունաբերական ապրանքներ	5

Ինչպես ակնհայտորեն երևում է վերը բերված աղյուսակներից արտահանման առաջատարներն են հանքահումքային մթերքի, ոչ թանկարժեք մետաղների և իրերի, թանկարժեք քարերի և մետաղների, պատրաստի սննդի արտադրանքի արտահանումը, որոնք կազմում են արդյունաբերական ողջ արտահանման 83.2%-ը, 2014 թ. դրությամբ:

Այսպիսով, Հայաստանի արտահանումը շարունակում է մնալ խիստ ռեսուրսաին-տենսիվ և մի քանի ոլորտներում կենտրոնացած: Այժմ տնտեսական քաղաքականության համար կարևոր խնդիր է արտահանման դիվերսիֆիկացիայի խթանումը: «Վեր-ջերս Հայաստանի կողմից մշակված արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը նպատակ ունի ուժեղացնել մրցունակությունը և մեծացնել արտահանման կարողությունները թիրախային ոլորտներում: Ակնկալվում է, որ նախատեսված միջոցառումների արդյունքում արտահանման կենտրոնացման աստիճանն էապես կնվազի» [8, էջ 27]:

Խնդրի լուծման, տնտեսության թիրախային ոլորտներում և ճյուղերում մրցունակության և արտահանման մեծացման համար, հատկապես կարևոր է **ներդրումային դաշտի** ստեղծումը և ներդրումների տարբերակված, հիմնավորված ընտրությունը:

Ներդրումների տեսանկյունից սփյուռք ունեցող երկրները ունեն որոշակի առավելություններ, քանի որ սփյուռքը ներդրումների կարևորագույն աղբյուր է հայրենի երկրների համար: Համաձայն փորձագետների գնահատականների՝ Հայաստանում օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալի մեջ սփյուռքահայերի կողմից կատարված ներդրումները կազմում են շուրջ 50 %:

Ներդրումների միջոցով պետք է լուծվեն նաև ՀՀ արդյունաբերության տեխնոլոգիական վերազինման հարցերը ևս, քանի որ առաջավոր տեխնոլոգիաները մրցակցային առավելությունների ձեռք բերման կարևոր նախապայման են: Ըստ Ա. Սարգսյանի

«հիմնական ֆոնդերի մաշվածքը բնութագրող ցուցանիշները «անցել են ռուբիկոնը» և այն էլ մի քանի անգամ»: Ըստ նրա, «Հայաստանի տեխնոլոգիական անկումը չպետք է վերագրել միայն հետխորհրդային ճգնաժամին: Իրականում տեխնոլոգիական անկումը սկսվել էր շատ ավելի շուտ՝ դեռ խորհրդային տարիներին» [34, էջ 66]: Նման նյութատեխնիկական հիմք ունեցող արտադրություններում և ձեռնարկություններում պահանջվում են արմատական և զանգվածային ներդրումներ:

Վերջին տարիներին Հայաստանն ունեցել է ներդրումների միջին կատարողական և մեծ հաջողությամբ մրցակցել ենթակառուցվածքներում և ռեսուրսափնտենսիվ ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում:

Ոչ պակաս կարևոր խնդիր է ներդրումների ոլորտների հիմնավորված ընտրությունը: Բոլորին է հայտնի, հատկապես անցումային տնտեսությամբ, ազգային տնտեսություններ օտարերկրյա կապիտալի և ընկերությունների թափանցման և՛ դրական, և՛ բացասական ապակառուցողական ազդեցությունները: Այդ իսկ պատճառով հարկավոր է հնարավորինս առավելագույնի հասցնել դրական և նվազագույնի՝ բացասական արդյունքները: Ըստ Շվեցովի, շրջակա սոցիալ-տնտեսական միջավայրի վրա առավել դրական ազդեցություն ունենում են այն ոլորտները (ձեռնարկությունները, ճյուղերը), որոնք բացի հարկերի տեսքով ֆինանսական վճարումներից ու լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումից, օգտագործում են սպասարկող և մատակարարող տեղական ձեռնարկությունների և ֆիրմաների արտադրանքն ու ծառայությունները: Այսինքն, ներգրավվում են տվյալ սոցիալ-տնտեսական միջավայրի մեջ և բազմապատկման կապերով նպաստում տարածքի և տնտեսության զարգացմանը: Ըստ նրա, այդ «զարգացման բևեռների» դրական ազդեցությունն էլ ավելի նշանակալի է, եթե դրանք ունեն արտահանման ուղղություն: Դրանք իրենց զարգացմամբ անուղղակիորեն նպաստում են նաև տեղական՝ բազմապատկման կապերով նրա հետ կապված, ձեռնարկությունների զարգացմանը և արտահանման մեծացմանը [99, էջ 44-45]:

Մասնագետների կարծիքով բազմապատկիչի արդյունքով և զարգացման տարածման առավելագույն ներուժով օժտված են տնտեսության «առաջընթաց» ճյուղերը, ինչպիսին մեր երկրի համար կարող է հանդիսանալ մեքենաշինությունը, մասնավորապես ավտոմոբիլաշինությունը և էլեկտրոտեխնիկական սարքաշինությունը, որոնք կօգտագործեն նաև տեղական կիսաֆաբրիկատներ և հանդես կգան որպես հզոր «զարգացման բևեռներ»:

Առավել «հեշտ ներգրավվող», սակայն զարգացման տարածման նվազագույն ներուժով «զարգացման բևեռներ» են հանդիսանում օտարերկրյա արտադատեսականների փաթեթավորման, լցավորման, արտաքին ձևավորման ձեռնարկությունները: Սրանց զարգացման տարածման ուղղակի արդյունքը աննշան է: Հիմնական խթանիչներ են՝ զբաղվածության մեծացումը, հարկերը, ենթակառուցվածքի զարգացման ներդրումները:

Ազգային տնտեսություններ օտարերկրյա կապիտալի և ընկերությունների թափանցման բացասական ազդեցություն և վտանգ ներկայացնող «զարգացման բևեռներ» են երկրի ռեսուրսները «արտահանող» ձեռնարկությունները, որոնք չեն ներգրավվում ազգային տնտեսության մեջ, այլ արտահանում են հումքային ռեսուրսները, կամ էկոլոգիապես խիստ վտանգավոր առաջնային վերամշակված կամ հարստացված հումքը, ինչպես դա տեղի է ունենում երրորդ աշխարհի երկրների հետ:

Հայաստանում 2008-2014 թթ. ուղղակի ներդրումների պատկերը երևում է հավելված 21-ում ներկայացված աղյուսակից: Տվյալների վերլուծությունից բացահայտվում է, որ արդյունաբերության ոլորտում ներդրումների տեսակարար կշիռը շատ ցածր է: 2011 թ. դիտվել է ներդրումների ավելացում՝ կազմելով 31.1%, որից 19.3% ներդրվել է հիմնային մետաղների արտադրության, 5.4%-ը լեռնահանքային արդյունաբերության, 5.5%-ը սննդի արդյունաբերության, հատկապես խմիչքների արտադրության մեջ՝ 4.1%-ը: Արդյունաբերության մյուս ենթաճյուղերում ներդրումները կազմել են ընդամենը 0.9%: Ներդրումների նույն միտումները շարունակվել են նաև հաջորդ տարիներին: Իսկ եթե նկատի ունենանք նաև, որ լեռնահանքային արդյունաբերության և հիմնային մետաղների արտադրության բազմապատկիչի արդյունքն ավարտվում է հումքի շահագործմամբ, վերամշակմամբ ու արտահանմամբ, ու դրանց հիմքի վրա չեն ստեղծվում արտադրության տնտեսապես առավել շահավետ վերին հարկերը, ապա պետությունը լուրջ մտահոգության խնդիր ունի այս ճյուղերի բացասական ազդեցության «զարգացման բևեռների» վերածվելու հարցում:

Ներդրման շահավետությունից ելնելով ՄԱԿ-ի արդյունաբերության զարգացման կազմակերպության մասնագետները վերամշակող արդյունաբերության ճյուղերը բաժանում են երեք խմբի:

I -առավել արտոնյալ: Այս խումբը ընդգրկում է բարձր տեխնոլոգիաներ և բարձրորակ աշխատուժ պահանջող հավաքման ճյուղերը, ինչպիսիք են մեքենաշինական ու էլեկտրոնիկական ճյուղերը:

II -չափավոր արդյունյալ: Ընդգրկում է թեթև արդյունաբերության ճյուղերը, որտեղ օգտագործվում է շատ աշխատուժ, իսկ ներդրումներն արագ փոխհատուցվում են:

III -նվազ արդյունյալ: Ընդգրկում է տեղական հումքի արդյունահանման և վերամշակման ճյուղերը, որտեղ օգտագործվում է տեղական աշխատուժը:

Հաջորդիվ հաշվել ենք ներդրումների **ազդեցության ինդեքսները**¹ արտադրանքի ավելացված հավելածի և ներդրումների հարաբերության միջոցով, որոշելով ներդրումների մեկ դոլարին համարժեք արտադրության հավելածը՝ հազ. դրամ արժեքայնությամբ (հավելված 22): Ներդրումներն առավել արդյունավետ ազդեցություն են ունեցել ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության բնագավառում: Աղյուսակում տեղ գտած բացասական գործակիցները վկայում են ենթաճյուղում հետագա ներդրումների անհրաժեշտության մասին:

Ըստ հեղինակավոր «Ֆորբս» ամսագրի 2011 թ. աշխարհի տասը վատագույն տընտեսություն ունեցող երկրների ցուցակում Հայաստանը զբաղեցրել է երկրորդ վատագույն հորիզոնականը Մադագասկարից հետո: Վատագույն տասնյակը ընտրվել է 117 երկրներից՝ հաշվի առնելով երեք տարվա ընթացքում երկրի համախառն ներքին արդյունքի աճը և գնաճը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ինդեքսը, արտաքին պարտքը և ներմուծման արտահանման հարաբերակցությունը: Այս ցուցակում 2010 թ. Համեմատությամբ զգալի փոփոխություններ են տեղի ունեցել: Եթե նախկինում ընդգրկված էին հիմնականում աֆրիկյան պետություններ, ապա 2011 թ. ցուցակում տեղ են գտել նաև Ուկրաինան, Ղրղզստանը, Իրանը: Տնտեսությունների անկման հիմնական պատճառները հետազոտության հեղինակները համարում են ոչ միայն տնտեսական ճգնաժամը, այլ նաև սխալ կառավարումն ու կոռուպցիան [147]:

Այժմ դիտարկենք ՀՀ արդյունաբերության յուրաքանչյուր ենթաճյուղի, որպես «զարգացման բևեռի», վիճակն ու զարգացման հնարավորությունները [հավելված 23]:

ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետաղաձուլությունը թերևս ամենահին, խոր և ամուր արմատներ ունեցող ենթաճյուղն է: «Ընդգրկում է պղնձի հումքի արդյունահանումը, հարստացումն ու ծուլումը, մոլիբդենի հումքի արդյունահանումը, հարստացումը, բազմամետաղների հումքի (կապարի, ցինկի և այլն) արդյունահանումը և հարստացումը, ոսկու արդյունահանումն ու կորզումը հարստացուցիչ ֆաբրիկայում: Մինչև 1990-ական թվականների սկզբները հանրապետությունում արտադրվում էր նաև մետաղային ալյումին: Սակայն այդ արտադրությունը դադարեցված է, բայց ներմուծվող պատրաստի ալյումինից արտադրվում է գլանվածք» [28, էջ 125]:

Լեռնահանքային արդյունաբերության և գունավոր մետաղաձուլության հեռանկարային զարգացման հնարավորությունները թերևս ամենախոստումնալիցն են, նախ այն պատճառով, որ հանրապետությունը հարուստ է մետաղային հանքաքարերի զգալի պաշարներով, ապա, լրացուցիչ ուսումնասիրությունների և նորագույն տեխնոլոգիաների ներդրման արդյունքում հնարավոր է արդյունահանվող հումքի համալիր օգտագործում (հանքաքարերում հայտնաբերված բոլոր օգտակար տարրերի և դրանց հնարավորինս առավելագույն կորզում, ինչը դեռևս անմխիթար վիճակում է [3, էջ 373-380]): Արդյունաբերության այս ենթաճյուղերը օժտված են բազմապատկիչի արդյունքի հզոր ներուժով և հիմք են հանդիսանում արդյունաբերական հանգույցների, ՏԱՀ-երի ստեղծման համար:

Հանրապետությունում առկա են նաև սև մետաղաձուլության զարգացման նախապայմաններ՝ տեղի բարձրորակ երկաթի հանքաքարի (Սվարանցի, Կապուտանի, Հրազդանի) բազայի վրա: Այսօր սև մետաղաձուլությունը ներկայանում է, այսպես կոչված, «փոքր մետաղաձուլությամբ», մեքենաշինական խոշոր ձեռնարկություններում ստեղծվել են ձուլման արտադրամասեր, որտեղ ներմուծվող թուջից վերաձուլման եղանակով արտադրվում են մետաղե իրեր [28, էջ 130]:

Սև և գունավոր մետաղաձուլության զարգացումը լավ նախապայման կարող է հանդիսանալ ճշգրիտ մեքենաշինության զարգացման համար: Իսկ սև մետաղների հանքաքարում հանդես եկող «հարակից ցրված և հազվագյուտ տարրերի, ինչպիսիք են արծաթը, սելենը, տելուրը, գերմանիումը և ինդիումը» [3] կորզման արդյունքում էլ, հնարավոր կլինի էլեկտրատեխնիկական մեքենաշինության զարգացման համար ապահովել տեղական հումքային բազա:

Մետաղաձուլությունը սակայն էներգատար և վառելիքատար արտադրություն է, իսկ Հայաստանը սեփական էներգառեսուրսներով հարուստ չէ: Վառելիքային ռեսուրսները բացակայում են, ջրաէներգետիկ պաշարները սահմանափակ են: Լեռնահանքային արդյունաբերությունը սպառում է արդյունաբերությունում սպառվող էլեկտրաէներգիայի (1244 մլն ԿՎտ 2014 թ.) 31.6%-ը [13]: Այնուհանդերձ, կառուցված ջրային, ջերմային և ատոմային էլեկտրակայանների շնորհիվ Հայաստանը ապահովված է սեփական արտադրության էլեկտրաէներգիայով: Իսկ ինչ վերաբերում է վառելիքի ներկրմանը, ապա էներգետիկ անվտանգության նկատառումներից ելնելով ՀՀ-ն ընդարձակել է բնական գազի ներկրման աշխարհագրությունը: Ռուսաստանից Հայաստան հասնող գազամուղից բացի այսօր մենք ունենք նաև Իրանից՝ ավելի հզոր գազամուղ (տարեկան 2,8 մլրդ մ³):

Լեռնահանքային արդյունաբերությունը և մետաղաձուլությունը, այսպիսով, ՀՀ համար կարևոր «զարգացման բևեռներ» են:

Ինչ վերաբերում է ոչ մետաղական օգտակար հանածոներին, ապա դրանցից շատերը նույնքան արժեքավոր են, որքան մետաղական օգտակար հանածոները: «Նկատենք, որ պղնձի հանքաքարի մեկ տոննայից կորզվում է առավելագույնը՝ 7-10 կգ պղինձ, մոլիբդենի հանքաքարից՝ 0.5 կգ մոլիբդեն, ոսկու հանքաքարից՝ 4-6, բացառիկ դեպքերում 12-13 գ ոսկի, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոների հանքաքարերը օգտագործվում են ամբողջությամբ, առանց թափոնների և իրենց արժեքով բազմապատիկ անգամ գերազանցում են բոլոր տեսակի մետաղական օգտակար հանածոներից ստացած արժեքներին» [3, էջ 380]:

Վերոհիշյալ ենթաճյուղերի առանցքային խնդիրներից է բնապահպանական անվտանգությունը: Առաջնային լուծման անհրաժեշտություն ունի հատկապես Ալավերդու պղնձաձուլարանի ծծմբական գազերի արտանետման հիմնախնդիրը:

Էներգետիկան ՀՀ-ում ևս զարգացած ենթաճյուղ է: Այն տալիս է արդյունաբերական արտադրանքի 17.9%-ը (2014 թ.) [13]: 1988 թ. հանրապետությունում արտադրվող 15.3 մլրդ կՎտ/ժ էլեկտրաէներգիայի փոխարեն վերջին տարիներին այն տատանվում է 7.5 մլրդ կՎտ/ժ սահմաններում: 2014 թ. արտադրվել է 7750.0 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Արտադրության այս չափերը լրիվ բավարարում են հանրապետության պահանջները, քանի որ նախկին հզոր արդյունաբերությունը, որն էլեկտրաէներգիայի ամենախոշոր սպառողն էր, այժմ գոյություն չունի, կամ էլ գործում են ոչ լրիվ հզորությամբ: Արտահանում է նաև էլեկտրաէներգիա Վրաստան՝ 1236 մլն կՎտ/ժ (2014 թ.) [13]: Այժմ հայկական էներգացանցը Մեղրու կիրճով միացած է նաև Իրանի էլեկտրացանցին:

Սա այն առաջնային ենթաճյուղերից է, որի հիմքի վրա կարելի է զարգացնել արդյունաբերության մյուս բոլոր ենթաճյուղերը: Այդ իսկ պատճառով այս ոլորտի վերականգնման և վերակառուցման ուղղությամբ մեծ ներդրումներ են արվում: Վերանորոգվել է ատոմային էլեկտրակայանը, կառուցվել Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկը:

Մեքենաշինությունը մինչ անկախացումը արդյունաբերության արտադրանքի ծավալով և աշխատողների թվաքանակով զբաղեցնում էր առաջին տեղը՝ ավելի քան 32%: Այսօր այս ենթաճյուղը «հատվածաբար դեռևս պահպանում է խորհրդային ժառանգությունից եկող ներուժը (ի դեմս ժամանակին մշակված առաջադեմ տեխնոլոգիաների և դրանց տիրապետող փորձառու մասնագետների), այսօր այն կարիք ունի էական արդիականացման» [17]: Նրա մասնաբաժինն արդյունաբերության ամբողջ արտադրանքի

ծավալում շարունակաբար նվազել է կազմելով 2005 թ. 4.1%, 2014 թ.՝ 1.6% [13]: Նախկինում հանրապետությունը բնութագրվում էր զարգացած բազմաճյուղ, մասնավորապես ճշգրիտ մեքենաշինությամբ: Այսօր, քանի որ փոխվել է շուկան, վերացել արտադրական նախկին կապերը, իսկ հանրապետությունն էլ չունի մեքենաշինության զարգացման համար անհրաժեշտ հումքային բազա և խոշոր սև մետաղաձուլություն, մյուս կողմից էլ ունի աշխատանքային ռեսուրսներ և բարձրորակ ինժեներատեխնիկական անձնակազմ (թեպետ արդեն գրանցվում է գիտաշխատողների և տեխնիկական աշխատողների միջին բարձր տարիք) առավել նպատակահարմար է զարգացնել մեքենաշինության աշխատատար, քիչ նյութատար, գիտատար ենթաճյուղերը և իրականացնել ճյուղային կառուցվածքի բարեփոխումներ:

Մեքենաշինությունը ներկայումս ներկայանում է հետևյալ ճյուղային կառուցվածքով. մետաղահատ հաստոցաշինական, էլեկտրատեխնիկական, գործիքասարքաշինական, ռադիոտեխնիկական, տրանսպորտային: 2009 թ. համեմատ 2014 թ. դիտվել է միայն հետևյալ մեքենաշինական արտադրատեսակների ծավալի աճ. լուսավորման լարեր՝ 1141 կմ, մալուխներ՝ 60 տ և ալմաստից գործիքներ՝ 148 կգ, ավտոմոբիլային մարտկոցներ՝ 39135 հատ [13]: Հայաստանում հիմք է դրվել ժամանակակից համակարգիչների արտադրությանը: Զարգացման ներկա փուլում մեքենաշինությունը առանձնանում է մեծ «դանդաղկոտությամբ»:

Ելնելով հանրապետությունում մեքենաշինական արդյունաբերության ձևավորված առկա ներուժից, երկրում ճյուղի զարգացման հնարավորություններից և շուկայում առկա մեծ պահանջարկից, նպատակահարմար է հանրապետությունում զարգացման գերակա բևեռ մեքենաշինության ընդունումը, մասնավորապես գիտատար արտադրությունները, որոնք էկոլոգիապես մաքուր են (փոքր Հայաստանի համար ոչ պակաս կարևոր խնդիր է), քիչ նյութատար (փոքրանում է կախվածությունը դրսից), ներկայացնում են արտադրության վերին հարկեր և ապահովում տնտեսության զարգացման համալիրություն, աշխատատար են (լուծում է աշխատատեղերի խնդիրը): Այդպիսիք են էլեկտրոնային հաշվիչ տեխնիկայի, համակարգչային տեխնիկայի, հեռուստահեռարձակման, ռադիոտեխնիկայի, էլեկտրոնիկայի, միկրոէլեկտրոնիկայի, բժշկական սարքավորումների և այլ գիտատար, ոչ նյութատար արտադրատեսակների արտադրությունները [34, էջ 71]: Այնինչ, ենթաճյուղի զարգացմանը խթանող ներդրումները (ՕՌԻՆ) անկախացումից հետո եղել են սահմանափակ՝ 2000 թ. ի վեր տատանվելով 0.01-0.1% սահմաններում:

Քիմիական արդյունաբերությունը ժամանակակից համաշխարհային արդյունաբերության առավել արագ զարգացող և բարդ կառուցվածք ունեցող ճյուղերից մեկն է: Այս ճյուղի կարևոր առանձնահատկություններից է դրա հումքային բազայի և արտադրանքի տեսականու բազմազանությունը: Էկոլոգիապես վտանգավոր արտադրություններ են և մեծապես կարևոր է անթափոն արտադրության կազմակերպման հիմնախնդրի լուծումը:

ՀՀ-ում այս ենթաճյուղի, հատկապես «մեծ քիմիայի» զարգացման համար լայն հնարավորություններ չկան, քանի որ այս ճյուղի համար անհրաժեշտ հումքային ռեսուրսները մեզ մոտ սահմանափակ են: Չունենք նաև համապատասխան վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, քաղցրահամ ջրի ու անտառային խոշոր ռեսուրսներ, որոնք նույնպես շատ կարևոր են այդ ճյուղի զարգացման համար [28, էջ 131]:

Այնուհանդերձ, դեռևս Խորհրդային տարիներից, ՀՀ-ում ստեղծվել է քիմիական բազմաճյուղ արդյունաբերություն: Այսօր քիմիական արդյունաբերությանը բաժին է ընկնում ողջ վերամշակող արդյունաբերության արտադրանքի 4.7%-ը:

Հանրապետությունում քիմիական արդյունաբերության զարգացմանը նպաստող ներկայիս նախապայմաններն են. բարձրորակ կրաքարի (սինթետիկ կաուչուկի արտադրության համար), կերակրի աղի, գունավոր տուֆաքարի պաշարները (լաքերի, ներկերի արտադրության համար), պղնձածուխության գործընթացում անջատվող ծծմբային գազերն ու առաջացող թափոնները (ծծմբաթթվի ու պղնձարջասպի արտադրության համար), էլեկտրաէներգիայով ապահովվածությունը:

Այսօր հանրապետությունում ձևավորվել են քիմիական արդյունաբերության հետևյալ ենթաճյուղերը. սինթետիկ կաուչուկի արտադրություն, պոլիմերային նյութերի և պլաստմասսաների արտադրություն, ազոտային պարարտանյութերի, ցիանամիդի, ցիանալի, ծծմբաթթվի ու պղնձարջասպի, ավտոդողերի ու ռետինատեխնիկական իրերի, լաքերի, ներկերի, լվացքանյութերի, կենցաղային քիմիայի այլ նյութերի արտադրություններ, համեմատաբար նոր են սինթետիկ թելերի և սինթետիկ կորունդի (ալմաստի փոխարինող) արտադրությունները: Սինթետիկ կորունդը Նոր Հաճնի ճշգրիտ տեխնիկական քարերի «Շողակն» գործարանում հղկվելուց և մշակվելուց հետո ստանում է ադամանդի տեսք ունեցող արտադրանք: Հանրապետության քիմիական արդյունաբերության ամենաերիտասարդ ճյուղերից էր քիմիական ռեակտիվների արտադրությունը, որն այժմ չի գործում:

Հայաստանում նոր ձևավորված, սակայն ամենաարագ տեմպերով զարգացող ենթաճյուղերից է դեղագործությունը: Նրա արտադրանքի 57%-ը արտահանվում է: Ենթա-

ճյուղի գլխավոր խնդիրներից է ՊԱԳ (GMP) հավաստագրի բացակայությունը: Ենթաճյուղն ունի զարգացման մեծ ներուժ և հեռանկարներ:

Շինանյութերի արդյունաբերությունը Հայաստանի ամենաբազմազան բազա ունեցող ճյուղն է: «Հանրապետության տարածքում հայտնաբերված են գիտությանը հայտնի բոլոր քարատեսակները» [28, էջ 141]: Այստեղ առկա են հրաբխային ծագում ունեցող բազմազան ապարների, ինչպես նաև նստվածքային փոխակերպված ապարների հսկայական պաշարներ, որոնք հզոր բազա են շինանյութերի բազմաճյուղ արդյունաբերության զարգացման համար: Տալիս է արդյունաբերական արտադրանքի 4.8%-ը, արտահանում՝ 6.3%-ը: Ենթաճյուղի հիմնական խնդիրներն են տրանսպորտային հաղորդակցության թանկությունը և առևտրի ռեգիոնալ մակարդակում սահմանափակությունը:

Հանրապետությունում ձևավորվել է շինանյութերի արդյունաբերության հետևյալ արտադրությունները՝ բնական քարանյութերից՝ մարմարից, գրանիտից, տուֆից, բազալտից, տրավերտինից, երեսպատման սալերի արտադրություն, բնական լցանյութերի արտադրություն (ծակոտկեն լցանյութեր), կապակցող նյութերի արտադրություն (ցեմենտ, գաջ, կիր): «Մինչև 2008 թ. էական արտահանում էր գրանցվում ցեմենտի ոլորտում, որը սակայն դադարեցվեց 2009 թ.» պայմանավորված Վրաստանում նոր գործարանի կառուցմամբ և Հայաստանում էներգակիրների թանկացմամբ» [17, էջ 20]:

Շինանյութերի արդյունաբերությունը հանրապետության համար «զարգացման բևեռ» ներկայացնող ճյուղերից է:

Սննդի արդյունաբերությունը Հայաստանում լեռնահանքային արդյունաբերությունից և գունավոր մետալուրգիայից հետո երկրորդ ճյուղն է, որը և՛ արտադրանքի, և՛ արտահանման կշիռներով պատկառելի տեղ է զբաղեցնում ամբողջ արդյունաբերության մասնաբաժիններում: Սննդի արդյունաբերությունը ներկայանում է հետևյալ ենթաճյուղերով. ալրադաջային, հացաբուլկեղենի, հրուշակեղենի և մակարոնեղենի, գինու, կոնյակի, օղու և սպիրտի, գարեջրի և ոչ ալկոհոլային խմիչքների, պահածոների, մսի, երշիկեղենի, կաթնամթերքների, պանրի, կենդանական և բուսական յուղի, շաքարի, ծխախոտի արտադրություններով: Համային և որակական բարձր հատկանիշների շնորհիվ, սննդի արդյունաբերությունում արտահանման զգալի ներուժ ունեն ոգելից և ոչ ոգելից խմիչքները, ներառյալ հանքային և խմելու ջուրը, պտղի, բանջարեղենի մշակված ու պահածոյացված արտադրանքը, ծխախոտը, կաթնամթերքը և մսամթերքը: Հեռանկարային զարգացման մեծ ներուժ ունեցող ճյուղ է:

Ճյուղը կարևոր դերակատարություն ունի գյուղատնտեսության զարգացման խնդրում: Օրինակ կոնյակագործությունը մթերելով Հայաստանի խաղողի բերքի մոտ 60%-ը խաղողագործության ոլորտում ապահովում է ավելի քան 8000-10000 աշխատատեղ: Իսկ սննդի արդյունաբերությունում աշխատում է շուրջ 21343 մարդ: Ճյուղի զարգացմամբ աշխատատեղերի լուծման խնդիրը կարող է տնտեսական ճգնաժամի հաղթահարման դեղահաբ լինել, ինչպես օրինակ ԱՄՆ տնտեսական ճգնաժամը հաղթահարեց ճանապարհաշինության մեջ զանգվածային աշխատատեղերի ստեղծմամբ: Սննդի արդյունաբերության հիմնական խնդիրը պատշաճ որակի ապահովումն է: Ճյուղը պետական ուշադրության կենտրոնում է և ուղղակի ներդրումները միջին հաշվով 2008-2014 թվականներին կազմել են ողջ ուղղակի ներդրումների 3.5%-ը:

Թեթև արդյունաբերությունը թողարկելով հիմնականում լայն սպառման արտադրանք, լինելով աշխատատար և անցումային տնտեսությամբ երկրներում զարգացած երկրների ներդրումային շահագրգռվածությամբ ոլորտ, ՀՀ-ում ունի զարգացման մեծ հեռանկար: Ներկայումս զարգացման մակարդակով չի առանձնանում: Նրա արտադրանքի տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերական համախառն արտադրանքում 1% է (2014 թ.), իսկ արտահանման կշիռը՝ 3.6%: Վերջին տարիներին աչքի է ընկել զարգացման բարձր տեմպերով: Նախկինում ՀՀ թեթև արդյունաբերության թողարկվող արտադրանքի ծավալով զիջում էր միայն մեքենաշինությանը: Նրա տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալում մինչև 1990-ական թվականների սկիզբը կազմել է 23-24.5%:

Այսօր ճյուղը ներկայանում է բրդյա գործվածքների, մետաքսյա գործվածքների արտադրություններով, գորգագործությամբ, տրիկոտաժելենի և գուլպեղենի, կարի, կաշվե կոշիկի արտադրություններով: Խորհրդային տարիներին թեթև արդյունաբերությունում առաջատար տեղը պատկանում էր տեքստիլ արդյունաբերությանը: Առաջատարն է կարի արտադրությունը, որին և պատկանում է թեթև արդյունաբերության արտահանման ծավալի գերակշիռ մասը: Զարգացման մեծ հեռանկարներ ունեցող ենթաճյուղերն են մետաքսյա և բրդյա գործվածքների արտադրությունները, որոնց համար առկա են տեղական բնական հումքի ապահովման հնարավորություններ, գորգագործությունը, կարի և կոշիկի արտադրությունները: Տեղական արտադրության թելերի (մետաքսյա, բրդյա, սինթետիկ), գործվածքների վրա կառուցված կարի արտադրությունը, և տեղական կաշվի (բնական և արհեստական) հումքի վրա կառուցված կոշկեղենի արտադրությունը կապահովեն զարգացման համալիրություն և արտաքին գործոնների հանդեպ առավել

մեծ անվտանգության: Ներդրումներն աննշան են և միջին հաշվով 2008-2014 թվականներին կազմել է 0.1%:

ՀՀ ավանդական և զարգացման մեծ հեռանկարներ ունեցող ճյուղերից **են ակնագործությունը և ոսկերչությունը**՝ արտահանման մեծ էական մասնաբաժնով: Թեպետ ենթաճյուղը վերջին տարիներին արձանագրել է նշանակալի անկում, պայմանավորված ճգնաժամային տարիներին դրամի արժևորմամբ, և համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքում պահանջարկի անկմամբ, այնուհանդերձ այն ունի մեծ հեռանկարներ: Ադամանդագործության հիմնական խնդիրները կապված են Ռուսաստանից հումքի մատակարարման հետ: Այդ ուղղությամբ «ներկայումս աշխատանքներ են տարվում ՌԴ կառավարության և «Ալրոսա» ընկերության հետ՝ հումքային ադամանդների մատակարարումն ապահովելու նպատակով» [17, էջ 17]: Ենթաճյուղը պետական աջակցության ներքո է և միջոցներ են ձեռնարկվում սփյուռքից և այլ աղբյուրներից ներդրումների ներգրավման համար:

Ինչպես գիտենք, «զարգացման բևեռներ», թեպետ, առավելապես հանդես են գալիս արդյունաբերության ճյուղերը, սակայն այդ դերը կարող են կատարել նաև տնտեսության այլ ճյուղեր ևս: ՀՀ համար ոչ արդյունաբերական բնույթի «զարգացման բևեռներ» կարող են դառնալ զբոսաշրջությունը, գիտությունը, կրթությունը, առողջապահությունը, հեռահաղորդակցությունը:

Զբոսաշրջություն: Հայաստանը թեպետ համաշխարհային զբոսաշրջային մրցակցային վարկանիշներով զբաղեցնում է միջին և ցածր հորիզոնականներ, սակայն աչքի է ընկնում զարգացման կայուն դրական միտումներով: Այսօր զբոսաշրջությունը պատռոնապես հայտարարված է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: Այն իր զարգացման տեմպերով և արդյունքներով հանրապետության առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Այդ են վկայում ոլորտում վերջին տարիներին արձանագրված վիճակագրական խոսուն ցուցանիշները:

2001 թվականից ի վեր Հայաստան կատարված միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 20-25%: 2014 թվականին Հայաստան է այցելել 1203746 զբոսաշրջիկ, արձանագրելով 10,3% աճ [18]:

ՀՆԱ-ում զբոսաշրջության բացարձակ ուղղակի արժեքը կազմել է՝ 0.2 մլրդ. դոլար, տեսակարար կշիռը՝ 2.1%, ամբողջ արժեքը՝ 0.8 մլրդ. դոլար, տեսակարար կշիռը՝ 8%, ներդրումները՝ 0.1 մլրդ. դոլար, ողջ ներդրումներում տեսակարար կշիռը՝ 2.8% (2011 թ.):

Հայաստանի զբոսաշրջության զարգացմանը նպաստող նախապայմաններն են՝

[25, էջ 474].

- Ավելի քան 4000 տարվա հարուստ պատմությունը, անցյալի հարուստ պատմամշակութային ժառանգությամբ (գրականություն, երգարվեստ, պարարվեստ, կիրառական արվեստներ, պատմության և մշակույթի կոթողներ, համաշխարհային, հանրապետական և տեղական նշանակության ավելի քան 24000 պատմամշակութային հուշարձաններ): Պատմամշակութային և բնության հուշարձաններից երեքը համաշխարհային մշակույթի գանձերի ՅՈՒՆԵՍԿՕ-ի (UNESCO) ցուցակում են.

1. *Հաղպատ և Սանահին վանական համալիրները,*

2. *Գեղարդավանքն ու Ազատ գետի հովիտը,*

3. *Էջմիածինը և Զվարթնոց տաճարը:*

- Ինքնատիպ և հրաշալի բնությունը ու բնության հուշարձանները, լանդշաֆտների բազմազանությունը: Ներկայումս Հայաստանում գործում են 3 պետական արգելոցներ, (Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու), 26 պետական արգելավայրեր և 4 ազգային պարկեր («Սևան»-ի, «Դիլիջան»-ի, «Արփի»-ի և «Արևիկ»-ի): Կան ավելի քան 260 բնության հուշարձաններ:

- Առողջարանային ռեսուրսները՝ հանքային աղբյուրները և անտառները (Ջերմուկ, Արզնի, Դիլիջան, Ծաղկաձոր, Հանքավան, Աղվերան, Արզական, Բջնի, Ստեփանավան և այլն):

- Էքստրեմալ զբոսաշրջության զարգացման ռեսուրսները՝ ներառյալ արշավները, լեռնամագլցումը, լեռնարշավները, վինդսերֆինգը և այլն:

- Ձմեռային զբոսաշրջության զարգացման ռեսուրսները: Ներկայումս գործում են երկու ձմեռային զբոսաշրջության կենտրոններ՝ Ծաղկաձորը և Ջերմուկը: Նախատեսվում է միջազգային չափանիշներին համապատասխան ձմեռային զբոսաշրջության կենտրոն դարձնել նաև Արագած լեռը:

- Քաղաքային մշակույթը, պահպանված գյուղական մշակույթը, ավանդույթները, ազգային խոհանոցը, ինքնատիպ կենսակերպը, պահպանված արհեստները, ֆոլկլորը:

Հայաստանի զբոսաշրջային ներուժից և առանձնահատկություններից ելնելով մեր երկրի համար առանձնացնում և հեռանկարային ենք համարում զբոսաշրջության հետևյալ ձևերը.

- *պատմամշակութային և ճանաչողական զբոսաշրջություն*

- *Էկոտուրիզմ*

- *ագրոտուրիզմ*

- էքսպորեմալ և սպորտային զբոսաշրջություն
- առողջարանային և ռեկրեացիոն զբոսաշրջություն
- գործարար զբոսաշրջություն
- կրոնական զբոսաշրջություն (ուխտագնացություն):

Հայաստանում զբոսաշրջության ոլորտի զարգացման գործում առկա են մի շարք խոչընդոտներ, ինչպիսիք են քիչ մրցունակությունը, պակաս մատչելիությունը, վատ ենթակառուցվածքները, արտահայտված սեզոնայնությունը, ծառայությունների ցածր որակը, զբոսաշրջային մեծ ծախսերը, ոչ այնքան բարենպաստ գործարար և ներդրումային դաշտը, հուսալի որակական և քանակական հետազոտության պակասը, մշակութային ժառանգության անմխիթար վիճակը, դրանց պահպանման ու վերականգնման խնդիրները և այլն:

Զբոսաշրջությունը ՀՀ համար մեծ հեռանկարներ և բազմապատկիչի արդյունքի մեծ ներուժ ունեցող «զարգացման բևեռ» է:

Գիտություն և կրթություն: Վերջին ճգնաժամից հետո զգալի ցնցումներ են ապրել: 2009-2014 թթ. ընթացքում նվազել է գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների թիվը՝ 83-ից 66, դրանցում աշխատողների քանակը՝ 6926-ից 5627, գիտական աստիճան ունեցողների քանակը, գիտությունների դոկտորների քանակը՝ 546-ից 497, թեկնածուների քանակը՝ 1939-ից 1579, ասպիրանտների քանակը՝ 1393-ից 1223, գիտատեխնիկական աշխատանքների ծավալը ավելացել է աննշան՝ 9422.1 մլն. դրամից՝ 11520.7 [13]: Ներդրումները այդ տարիներին կազմել է 99.6 մլն դրամ [13], ողջ ներդրումների 0.08% (2014 թ.):

Կրթությունը կարող է «զարգացման բևեռ» հանդիսանալ հատկապես տարածաշրջանում: Հայաստանում գործում են 62 բարձրագույն ուսումնական հաստատություններ: Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսում են ստանում 79.6 հազարից ավելի ուսանողներ [13]: Օտարազգի ուսանողների քանակը ուսումնասիրվող ժամանակահատվածում ավելացել է՝ 3089-ից դառնալով 3647, այդ թվում Ռուսաստանի Դաշնությունից՝ 1050, Վրաստանից՝ 922, Հնդկաստանից՝ 851, Իրանից՝ 225, Սիրիայից՝ 223 ուսանող (2014 թ) [13]: Ներդրումներն աննշան են՝ ողջ ներդրումների 0.002%-ը, միայն 2009 թվականին, որից հետո ներդրումներ չեն կատարվել:

Առողջապահություն: Կարող է տեխնիկապես վերազինման, մասնագետների որակավորման բարձրացման, արտասահմանյան առաջավոր փորձի կիրառման պայմաններում վերածվել «զարգացման բևեռի»: Ներդրումներն աննշան են, 2009 թ-ին՝ 0.08%,

որից հետո ներդրումներ չեն կատարվել:

Այսպիսով, հենվելով վիճակագրական բազմաբնույթ տվյալների, գիտական ուսումնասիրությունների վրա, ուսումնասիրելով տնտեսության աճի, ճյուղային կառուցվածքի, ՀՆԱ-ի, արտադրանքի ծավալի, ֆիզիկական ինդեքսների, արտահանման ծավալների, ներդրումների կառուցվածքի, ծավալների տեսակարար կշիռների և բազմաթիվ այլ ցուցանիշների դինամիկան և մասնաբաժինները, ՀՀ-ի համար առանձնացրել ենք «զարգացման բևեռների» հետևյալ խմբերը.

1. Ձևավորված ավանդական բևեռներ

- գունավոր մետալուրգիա՝ հիմնային մետաղների արտադրություն
- շինանյութերի արդյունաբերություն՝ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- սննդի արդյունաբերություն՝ հատկապես խմիչքների արտադրություն

2. Ռազմավարական, ձևավորվող և արագընթաց տեմպեր ունեցող բևեռներ

- պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- քիմիական արդյունաբերություն՝ ռետինե և պլաստմասսե արտադրատեսակների արտադրություն
- ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- զբոսաշրջություն

3. Նոր ձևավորվող բևեռներ

- մանածագործական արտադրատեսակների արտադրություն
- հագուստի արտադրություն
- կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրություն
- դեղագործական արտադրանքի արտադրություն
- քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն
- էլեկտրական սարքավորանքի արտադրություն
- համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն
- ոսկերչական արտադրատեսակների արտադրություն և ականագործություն

4. Տեղական նշանակության բևեռներ

- պոլիգրաֆիական գործունեություն
- թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն
- բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն
- կահույքի արտադրություն

5. Հեռանկարային, սեփական սոցիալ-տնտեսական ներուժ ունեցող բևեռներ

- ճշգրիտ մեքենաշինության և էլեկտրոնային արտադրություններ
- ավտոմոբիլաշինություն
- կրթություն
- գիտություն
- առողջապահություն
- առևտուր
- հեռահաղորդակցություն

4.4 ՀՀ ՏԱՐԱԾԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IV. փուլ. Եզրակացությունների և ընդհանրացումների կադարում:

Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրույքների հիման վրա մշակված ուսումնասիրության մոդելի համաձայն, աշխատանքի նախորդ բաժիններում լուծել ենք հետևյալ խնդիրները.

1. կազմվել է ՀՀ ներուժային հնարավորությունների ամբողջական պատկերը,
2. առանձնացվել են ՀՀ «աճի կենտրոնները» և մրցակցային առավելություններով տարածքները,
3. ընտրվել են երկրի համար մրցունակ «զարգացման բևեռներ»:

Թեպետ սրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին լուծում է կարևոր խնդիրներ, սակայն որակական նոր արժեք են ստանում միասնական ուսումնասիրության դեպքում, որն և դրված է մեր աշխատանքի հիմքում և քննարկվող հայեցակարգի հիմնադրույթներում: Այս ենթագլխում նպատակ ունենք վերոհիշյալ երեք խնդիրների լուծումների միասնական դաշտում բացահայտել առկա «աճի կենտրոններն» իրենց «զարգացման բևեռներով» և առաջարկել ու հիմնավորել նոր «աճի կենտրոններ» իրենց «զարգացման բևեռներով»:

Համաշխարհային մակարդակում մրցունակության ապահովման համար կարևորվում է երկրի զարգացման մրցակցային առավելությունների ընտրությունը, որը վերաբերում է և՛ մրցակցային առավելություններով տարածքների՝ որպես «աճի կենտրոնների», և՛ մրցունակ արտադրությունների՝ որպես «զարգացման բևեռների» ընտրությանը և որպես վերջնական արդյունք՝ դրանց սինթեզին: Այս մակարդակում դրանց սինթեզի արդյունքում ձևավորվում են մրցունակ գործառույթային կենտրոններ՝

ինչպիսիք են՝ մայրաքաղաքը, ագլոմերացիաները, տնտեսության ժամանակակից ճյուղերի առկայությամբ բազմագործառության խոշոր կենտրոնները, լեռնահանքային արդյունաբերական, կուրորտային, գիտական կենտրոնները, նավահանգիստները, տեխնոպոլիսներն ու տեխնոպարկերը, ազատ տնտեսական գոտիները (ԱՏԳ): Այդ կենտրոններն իրենց զարգացման հաջորդական փուլերում, գործառության տեսանկյունից վերածվում են արդյունաբերական հանգույցների, արդյունաբերական շրջանների, ՏԱՀ-երի, տնտեսական յուրացված գոտիների, իսկ տարաբնակեցման տեսանկյունից՝ ագլոմերացիաների, մեգալոպոլիսների:

Հասարակության զարգացման ժամանակակից փուլում որպես մրցունակ գործառության կենտրոններ կարևորվում են ԱՏԳ-երը: Դրանք ազգային տարածքի հատվածներ են, որոնց բնորոշ է ապրանքների ներմուծման և արտահանման արտոնյալ ռեժիմ, բարենպաստ ներդրումային միջավայր, և որոնք նպաստում են երկրի տնտեսական զարգացման մակարդակի բարձրացմանը, համաշխարհային շուկայի հետ կապերի սերտացմանը, այս կամ այն տարածքի և տնտեսության ճյուղի արագ զարգացմանը:

ԱՏԳ-եր այսօր ստեղծվում են նաև անցումային տնտեսությամբ երկրներում: Այս երկրներում հատկապես մեծ տարածում ունեն արտադրաարտահանման ուղղվածության գոտիները, իսկ ներգրավվող կապիտալի կառուցվածքում գերակայում է օտարերկրյա մասնավոր կապիտալը, ի տարբերություն զարգացած երկրների, որում գերակայում է հիմնականում ազգային մասնավոր կապիտալը: Զարգացող երկրներում սովորաբար առավելությունը տրվում է նյութական արտադրության ծանր և նոր արդյունաբերության ճյուղերին:

Այսօր ՀՀ գիտակցում և ընդունում է ԱՏԳ-երի կարևորությունը: Ընդունել է «օտարերկրյա ներդրումների մասին» և «Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքները:

ՀՀ տարածքում ձևավորված մրցունակ առավելություններով «աճի կենտրոններն» են իրենց «զարգացման բևեռներով» (քարտեզ 9).



Քարտեզ 9* ՀՀ «աճի կենտրոնները»

- **Մայրաքաղաքը՝** բազմագործառության կենտրոն - Երևան
- **Բազմագործառության խոշոր քաղաքները** - Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Վաղարշապատ
- **Լեռնահանքային արդյունաբերության կենտրոնները** - Ալավերդի, Ախթալա, Կապան, Քաջարան, Ագարակ, Սոթք, Մեղրաձոր, Լիճքվազ, Արարատ
- **Բարենպաստ ԱԴ-ով կենտրոնները** - Մասիս, Մեղրի
- **Կուրորդային կենտրոնները** - Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան, Իջևան
- **ԱՏԳ-ը** - «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքի գյուղատնտեսական ուղղվածության առևտրային տնտեսական գոտին, Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ և Մարս գործարանի տարածքի տեխնոպարկը, Գյումրու տեխնոպարկը:

ՀՀ-ում ԱՏԳ-երը ձևավորման փուլում են: «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքի գյուղատնտեսական ուղղվածության առևտրային տնտեսական գոտում գործելու է գյուղմթերքների տեսակավորման, փաթեթավորման, պահեստավորման և բեռնափոխադրման լոգիստիկ կենտրոն [15]:

Մյուս ԱՏԳ-ին՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ և Մարս գործարանի տարածքի տեխնոպարկը, կունենա բարձր և նորարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում [145]:

Երրորդ ԱՏԳ-ու՝ Գյումրու տեխնոպարկի ստեղծումը պետք է իրականանա երկու ուղղությամբ՝ գիտակրթական և ինովացիոն կենտրոնի և բիզնես կենտրոնի ստեղծումով: Տեխնոպարկում կներառվեն զբոսաշրջության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ճարտարագիտության (կառուցապատման և շինարարական ժամանակակից տեխնոլոգիաների), նորձևության և տեքստիլ արդյունաբերության, ոսկեգործության արհեստագործության և արվեստի ոլորտները [16]:

Նպատակահարմար է՝

- ՀՀ-ում բարենպաստ աշխարհագրական դիրք ունեցող տարածքներում ստեղծել առևտրային ազատ տնտեսական գոտիներ: Այդպիսիք կարող են կլինեն **Մասիսը** (որպես երկաթուղային խոշոր հանգույց կարող է մասնագիտանալ բեռների տեղափոխման, պահպանման, մշակման և արտահանման ուղղությամբ), **Մեղրին**, **Քազրափաշենը**, **Ախուրիկը**, **Քավրան** (գտնվելով բարենպաստ ԱԴ-ում, սահմանային և ճանապարհային հանգուցակետերում, կարող են օղակ հանդիսանալ Իրանի, Թուրքիայի, Մերձավոր Արևելքի և Ռուսաստանի միջև):

- ՀՀ արդյունաբերական շրջաններում ստեղծել տնտեսական զարգացման մեծ ներուժ ունեցող արդյունաբերաարտահանման գոտիներ: Այդպիսիք կարող են լինել **Նոր Հաճնում** ադամանդագործության բորսայի կառուցումը, **Ալավերդիում**՝ գունավոր մետալուրգիայի բազայի վրա մեքենաշինության և քիմիական արդյունաբերության, **Հրազդանում և Չարենցավանում**՝ մեքենաշինական, թեթև արդյունաբերության որոշ ճյուղերի ստեղծումը և այլն:

- Մայրաքաղաքի շրջակայքում և խոշոր քաղաքներում ստեղծել տեխնոպարկեր, քանի որ այս գոտում է կենտրոնացած հանրապետության հիմնական գիտատեխնիկական ներուժը: Այդպիսին կարող են լինել **Աշտարակի** տեխնոպարկը (տեխնոպարկի

ստեղծման ծրագիրը նախորդ տարիներին մշակվել է, սակայն այժմ չի գործում), **Արով-յանի** տեխնոպարկը՝ մեքենաշինական էլեկտրոնային սարքաշինական արտադրությունների զարգացմամբ:

- Արարատյան դաշտում ստեղծել **Մեծամորի, Վաղարշապատի, Արտաշատի**, իսկ Վայոց ձորում՝ **Եղեգնաձորի** ագրոարդյունաբերական համալիրները, սննդի արդյունաբերության արտադրատեսակների, գյուղատնտեսական մեքենաշինության և սարքաշինության զարգացմամբ: Նշված տարածքներում առկա են սննդի մի շարք արտադրատեսակների (մասնավորապես՝ գինու-կոնյակի և պահածոների) համար կլաստերների ստեղծման նախապայմաններ, որոնց ստեղծմամբ կմեծանա շուկայական մրցունակությունը:

- Ռեկրեացիոն ռեսուրսներով հարուստ շրջաններում նպաստել **Սևանի, Մարտունու, Արմավիրի, Զեյթունի, Գորիսի** զբոսաշրջային կենտրոնների ձևավորմանն և զարգացմանը:

- Շիրակի մարզի հյուսիսային և հարավային, Տավուշի՝ կենտրոնական և հարավային, Գեղարքունիքի՝ արևելյան, Արագածոտնի և Արմավիրի՝ արևմտյան, Արարատի՝ հարավարևելյան, Վայոց ձորի՝ հյուսիսային, Զանգեզուրի՝ հյուսիսային հատվածներում կարևորել տեղական կամ տարածաշրջանային կենտրոնների զարգացումը: Այդպիսիք կարող են լինել **Աշոցքը, Քարակերպը, Գառնին, Ելփինը** և այլն:

ՀՀ տնտեսության տարածքային կազմակերպման գործընթացում կարևոր է նաև ենթակառուցվածքներում բարեփոխումների իրականացումը. նոր ճանապարհների կառուցումն և առկա ճանապարհների արդիականացումը:

Նպատակահարմար է՝

- Մերձմայրաքաղաքային գոտու արևելյան և հարավարևելյան թերզարգացած գոտում, **դեպի Սևանի ավազան**, ճանապարհի կառուցումը, որի դեպքում հնարավոր կլինի նպաստել մերձմայրաքաղաքային գոտու և Սևանի արևմտյան տարածաշրջանի արագընթաց զարգացմանը, և երկրորդ՝ այն կունենա ռազմավարական նշանակություն Լեռնային Ղարաբաղի հետ կարճագույն կապի տեսանկյունից: Դեռևս հնում Երևանի և Սևանի ավազանի միջև եղել են Գեղամա լեռները հատող բազմաթիվ ճանապարհներ, որից հատկապես, հիշարժան է Գռասարը շրջանցող Գեղարդ-Սարուխան ճանապարհը: Հին ճանապարհային կապ է եղել նաև Գեղամա լեռների հարավով՝ Վեդի-Ներքին Գետաշեն ուղղությամբ, երկրորդ ճյուղն էլ Արմաղան լեռան հյուսիսային մասով՝ դեպի Ծովասար: Եթե ոչ այս ճանապարհային ուղղությունները, ապա մեկ այլ առավել հարմար տար-

բերակ, կարող է այս քիչ յուրացված տարածքի զարգացման խթան հանդիսանալ: Իսկ քանի որ տարածքում առկա են ռեկրեացիոն ռեսուրսներ, հետևաբար այստեղ ձևավորվող կենտրոնները նպատակահարմար են ունենան զբոսաշրջային մասնագիտացում:

- Թույլ զարգացած տարածքներում ճանապարհային ցանցի բարելավումը և կառուցումը, հատկապես Տավուշում՝ **Իջևան-Նավուր**, իսկ Գեղարքունիքի մարզում՝ **Ծովագյուղ-Աղբերք-Ճամբարակ** ուղղություններով, որոնք կլուծեն բնակավայրերի մատչելիության հարցերը:

ՀՀ-ում տնտեսության և տարաբնակեցման տարածագործառության կազմակերպման համար կարևոր նշանակություն կունենա «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի» և «Հայաստանի հարավային երկաթուղի» ներդրումային ծրագրերի իրականացումը:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Կատարված հետազոտության հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը բացատրում է տնտեսության ճյուղային և տարածքային կազմակերպման առանձնահատկությունները: Այն իր հիմքում ունենալով «աճի կենտրոն» և «զարգացման բևեռ» հասկացությունները, ակնկալում է ռեգիոնալ զարգացման տարածական և գործառույթային ուսումնասիրություն և որպես վերջնական արդյունք՝ դրանց սինթեզ: Ըստ իս, հայեցակարգը, համալիր և գիտական հետազոտություն կարող է ապահովել միայն մեր կողմից ընդհանրացված 5 պայմանների դեպքում:

2. «Աճի կենտրոնների» ձևավորման, զարգացման, ազդեցության դաշտի աշխարհագրական ընդարձակման ու ինտենսիվության մեծացման գործընթացում որոշիչ դեր ունի տրանսպորտային և սոցիալ-արտադրական ենթակառուցվածքների միասնական ցանցի ստեղծումը (հորիզոնական կապեր), իսկ «զարգացման բևեռների» բազմապատկիչի արդյունքի մեծացման գործընթացում՝ հումքաէներգետիկ, սպասարկող և օժանդակ արտադրական կապերի ստեղծումը (ուղղահայաց կապեր):

3. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը համահունչ է հասարակության տարածքային կազմակերպման օրենքներին ու օրինաչափություններին: Այն բացահայտում է տարածքի, «աճի կենտրոնների» և «զարգացման բևեռների» փուլաէվոլյուցիոն զարգացման շարժընթացը, հնարավորություն է ընձեռում՝ անել կանխատեսումներ, իրականացնել՝ հիմնավոր կառավարում:

4. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ապահովում է երկրի մրցունակությունն ու տարածքի համաչափ զարգացումը:

5. Երկրների ռեգիոնալ քաղաքականության հիմքում կարող է դրվել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը: Դրա շնորհիվ ռեգիոնալ քաղաքականությունն ընտրում է «օջախային» և ոչ թե ցրված աջակցության ծրագրեր՝ դրանք դարձնելով բևեռներ և կենտրոններ: Վերջիններս զարգացման ավելի հասուն փուլերում, արդեն իսկ ինքնազարգացման ինտեգրացիոն, ապահովում են երկրի տնտեսական զարգացում:

6. Աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի սկզբունքների վրա կառուցվող ռեգիոնալ քաղաքականության համար որոշիչ են գործառույթային («զարգացման բևեռների») և տարածքային («աճի կենտրոնների») հենքերի ստեղծումը և դրանց տարբերակված աջակցությունը:

7. Կախված կենտրոն-ծայրամաս համակարգում երկրների գրաված դիրքից, զարգացման մակարդակից, տեղային առանձնահատկություններից, **աճի բևեռներ և կենտրոններ** հայեցակարգի սկզբունքների վրա կառուցված ռեգիոնալ քաղաքականությունն ունի տարածքային և գործառնության կազմակերպման ակնառու տարբերություններ, որոնք արտահայտվում են մեր կողմից տարբերակված չորս առանձնահատկություններով:

8. Առանձին երկրի ազգային տնտեսության տարածագործառնության ուսումնասիրությունները նպատակահարմար է իրականացնել աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգի դրույթների հիման վրա մշակված մոդելով:

9. ՀՀ տնտեսության տարածքային և գործառնության բարեփոխումների իրականացման համար գիտատեսական հիմք կարող է հանդիսանալ աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը:

10. ՀՀ տնտեսական զարգացման և մրցունակության ապահովման համար կարևոր է տնտեսության մրցակցային դաշտի ստեղծումը, մրցակցային առավելություններով արտադրական հենքի և տարածական ցանցի տարածագործառնության կազմակերպումը:

11. ՀՀ տնտեսության զարգացման գործընթացում, որպես մրցակցային տարածագործառնության միջուկներ, կարևոր դեր կարող են ունենալ ԱՏԳ-երի, տեխնոպարկերի և կլաստերների ստեղծումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախընտրելի է ՀՀ ռեգիոնալ քաղաքականության հիմքում դրվի աճի բևեռներ և կենտրոններ հայեցակարգը՝ հաշվի առնելով տարածքային և գործառնության կազմակերպման ռեգիոնալ առանձնահատկություններն ու տարբերությունները:

2. ՀՀ-ում տնտեսության տարածագործառնության կազմակերպման համար կարևորել *գործառնության հենքի՝ «զարգացման բևեռների» և տարածքային հենքի՝ «աճի կենտրոնների» ստեղծումը և դրանց տարբերակված աջակցությունը:*

3. ՀՀ տնտեսության տարածքային կազմակերպման գործընթացում կարևորել ճանապարհների բարելավումների իրականացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աշխարհագրական գիտությունը Հայաստանում. Ներկան և ապագան, Երևան, 2006, 522 էջ:
2. Ավագյան Ա. Ռ., Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը, ԵՊՀ, 2000, 170 էջ:
3. Ավագյան Հ. Ա., Հայաստանի հանքահումքային ռեսուրսները, օգտագործման արդի վիճակը և արդյունավետության բարձրացման ուղիները, ՀՀ ԳԱԱ, Գիտություն, Երևան, 2004, 393 էջ:
4. Արդյունաբերական քաղաքականություն,
<http://www.mineconomy.am/arm/35/gortsaruyt.html>
5. Դարբինյան Ա., Եղիազարյան Բ. և ուրիշներ, ՀՀ գյուղական համայնքները. տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություն, Երևան, 2007, 415 էջ:
6. Հովսեփյան Վ., Եղիազարյան Մ., Ազգային տնտեսություն, Երևան, 2014, 223 էջ:
7. Հայաստանի Ազգային Ատլաս, հատոր Ա, Երևան, 2007, 229 էջ:
8. Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, կառավարման պրակտիկայի բարելավման օրակարգը, 2011-2012, Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն, Երևան, 2012, 99 էջ,
<http://ev.am/sites/default/files/attachments/pdf/ACR%202011-2012%20arm.pdf>
9. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 4 նոյեմբերի 2010 թվականի N 1476-Ն, ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=63109>
10. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, 22 դեկտեմբերի 2011 թվականի N 1857-Ն «Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=73202>
11. Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2009-2016, ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>
12. «Հայաստանի հարավային երկաթուղի» նախագիծ,
<http://www.mtc.am/edfiles/files/Presentation111.pdf>

13. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2003-2016, ՀՀ ԱՎԾ, <http://armstat.am>
14. Հայաստանի տնտեսական զեկույց, 2014, Եվրասիական ինտեգրացիան և Հայաստանի առևտուրը, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, 2014, 98 էջ, http://www.edrc.am/images/Useful_Publications/aer_2014_arm.pdf.
15. Հայեցակարգ ՀՀ «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ԱՏԳ-ու ստեղծման, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Երևան, 2008, http://www.edrc.am/images/National_Strategies/Industrial/zvartnots_free_zone.pdf
16. Հայեցակարգ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու հայեցակարգին հավանություն տալու մասին, Երևան, 2008, http://www.edrc.am/images/National_Strategies/Industrial/gyumri_texpark.pdf
17. Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության որոշման, Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն, http://www.edrc.am/images/National_Strategies/Comprehensive/strategy_industrial_policy.pdf
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2003-2015 թթ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ, <http://www.armstat.am>
19. «Հյուսիս-հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, <http://www.northsouth.am/>
20. Ղամբարյան Գ., «Աճի բևեռ և կենտրոն» հասկացությունը աշխարհագրական պատկերացմամբ, Վալեսյան Լ. Հ. 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 68-77:
21. Ղամբարյան Գ. Գ., ՀՀ ռեգիոնալ քաղաքականության ընտրության հարցի շուրջ, ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 105-109:
22. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., Երկրների մրցունակության տեսամեթոդական հարցի շուրջ, Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում, գիտաժողովի նյութեր, Եղեգնաձոր, 2015, էջ 222-232:
23. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի կատարելագործումը որպես մրցունակության բարձրացման նախապայման, Տարեգիրք 2013, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, 2014, էջ 252-262:

24. Ղամբարյան Գ., Ավագյան Ա., Տուրիզմը որպես «աճի բևեռների» և «աճի կենտրոնների» զարգացման հենք (ՀՀ օրինակով), ՀՀ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, 2015, էջ 316-318:
25. Ղամբարյան Գ., Հակոբյան Լ., ՀՀ զբոսաշրջության զարգացման առանձնահատկություններն ու միտումները, Տարեգիրք 2012, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, Երևան, 2013, էջ 473-479:
26. Մանասյան Մ., Սայադյան Հ., Հայաստանի աշխարհագրություն, Տիգրան Մեծ, Երևան, 2016, 387 էջ:
27. Մանասյան Մ. Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Երևան, 2005, 395 էջ:
28. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2007, 445 էջ:
29. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության բնական պայմանների ու ռեսուրսների տնտեսաաշխարհագրական գնահատումը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները, Երևան, 2009, 197 էջ:
30. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, 443 էջ:
31. Մխիթարյան Վ. Գ., Հայաստանի աշխարհագրական ատլաս, Երևան, 2015, 72 էջ:
32. Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Երևան, 2013, 412 էջ:
33. Զրբաշյան Ն., Նախա և ետճգնաժամային սոցիալ-տնտեսական զարգացումները Հայաստանում, ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, Տարեգիրք 2012, Երևան, 2013, էջ 342-355:
34. Սարգսյան Ա., Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային բարեփոխումների կոնցեպտուալ մոտեցումները, ՀՀ ԳԱԱ, Գիտություն, Երևան, 2008, 212 էջ:
35. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Զանգակ-97, Երևան, 2014, 550 էջ:
36. Վալեսյան Լ. Հ., Աշխարհագրական կանխատեսում, Մեթոդաբանական հիմունքները, Կիրառական և կառուցողական նշանակությունը, Երևան, 2008, 262 էջ:
37. Վալեսյան Լ. Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Լույս, Երևան, 1988, 173 էջ:

38. Տնտեսական զարգացման քաղաքականություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, <http://www.mineconomy.am/arm/30/gortsaruyt.html>
39. Алаев Э. Б., Региональное планирование в развивающихся странах, М: «Наука», 1973, 216 с.
40. Антипова Е. А., Трансформация роли экономической географии в условиях поляризованного развития мира (по материалам Всемирного банка), 159-162 с., Теория социально-экономической географии: современное состояние и перспективы развития: Материалы Международной научной конференции, Ростов-на-Дону, 4-8 мая, 2010, 481 с.
41. Арманд А. Д., Самоорганизация и саморегулирование географических систем, Отв. Ред. В. О. Таргульян, М.: «Наука», 1988, 264 с.
42. Артоболевский С. С., Полюса роста важны, но это не панацея. В плане Минрегион-развития акценты можно расставить иначе. Российское экспертное обозрение, № 1 (13), 2005, <http://www.bossmag.ru/archiv/2008/boss-06-2008-g/sergey-artobolevskiy-polyusa-rosta-vazhnyi-no-e-to-ne-panatseya.html>
43. Архипов Ю. Р., Блажко Н. И., Григорьев С. В., Заботин Я. И., Трафимов А. М., Хузеев Р. Г., Математические методы в географии, Из-во Казанского университета, 1976, 352 с.
44. Байнев В. Ф., Пелих С. А., Экономика региона, Минск, ИВЦ Минфина, 2007, 252 с.
45. Валесян Л. А., Производственно-территориальный комплекс Армянской ССР, Изд. «Айастан», Ереван, 1970, 375 с.
46. Вальтер Кристаллер и его теория центральных мест, http://www.erudition.ru/referat/printref/id.27990_1.html
47. Ван дер Вее Г., История мировой экономики 1945-1990 (пер с фр.), М.: «Наука» 1994, 413 с.
48. Гаврилов И. А., Региональная экономика и управление, М.: ЮНИТИ-ДАНА, 2002, 239 с.
49. Гамбарян Г., Айриянц А., Теория «полюсов и центров роста» и региональная политика; «Modern problems of geography» proceedigs of the conference: Dedicated to the 80th Anniversary Since the Foundation of Vakhushti Bagrationi Institute of Geography: collected papers new series N 5 (84), Tbilisi, 2013, p. 223-226.
50. Гамбарян Г. Г., Айриянц А. А., Теоретические основы региональной экономической

политики; «Modern problems of geography and anthropology» proceedings of International Conference: Dedicated to the 140th Anniversary of Academician Alexandre Javakhishvili, Tbilisi, 2015, p. 324-327.

51. Гамбарян Г. Г., Законы и закономерности территориальной организации общества (ТОО), «Modern problems of geography and anthropology» proceedings of International Conference: Dedicated to the 140th Anniversary of Academician Alexandre Javakhishvili, Tbilisi, 2015, p. 331-334.
52. Географический энциклопедический словарь. Понятие и термины, Гл. ред. Трешников А. Ф., Ред. кол Алаев Э. Б., Алимбиев П. М., Воронов А. Г. и др., М.: Сов. энциклопедия, 1988, 432 с.
53. Геттнер А., География, ее история, сущность и методы, М.- Л., 1929, 208 с.
54. Голубчик М. М., Евдокимо С. П., Максимов Г. Н., Носонов А. М. Теория и методология географической науки, М., 2005, 342 с.
55. Государственный дирижизм во Франции: история и современность, <http://economic-review.ru/publications/gosudarstvennyi-dirizhizm-vo-francii-istoriya-i-sovremennost/>
56. Гохман В. М., Ильин П. М., Липец Ю. Г., Значение фокусов роста в региональном развитии, Изв. АН СССР, Сер. геогр., 6, 1979, с. 33-44.
57. Гранберг А. Г., Основы региональной экономики, М.: ГУ ВШЮ, 2000, 495 с.
58. Грицай О. В., Иоффе Г. В., Трейвиш А. И., Центр и периферия в региональном развитии, М., 1991, 168 с.
59. Зубаревич Н. В., Регионы России: неравенство, кризис, модернизация, Независимый институт социальной политики, М., 2010, 160 с.
60. Качан Е. П., Региональная экономика, Теории и концепции региональной экономики, Тернополь, ТНЭУ, 2008, 800 с., http://uchebnikonline.ru/rps/regionalna_ekonomika_-_kachan_yep/teoriyi_kontseptsiiyi_regionalnoyi_ekonomiki.htm#462
61. Кластерная политика во Франции, <http://andshestopalov.livejournal.com/13757.html>
62. Клемешев А., Люейер П., Федоров Г., Управление региональным развитием: Государственное регулирование экономики, основы региональной политики и социально-экономическое развитие Калининградской области, Калининград-Борнхольм, 1999, 251 с.
63. Колосовский Н. Н., Теория экономического районирования, М., 1969, 335 с.
64. Кондратьев Н. Д., Большие циклы конъюнктуры, Вопр. Конъюнктуры, т. 1, вып. 1,

М., 1925, с. 28-79.

65. Кузнецова О. В., Экономическое развитие регионов: теоретические и практические аспекты государственного регулирования, М.: Эдиториал УРСС, 2002, 309 с.
66. Кузнецова О. В., Основы региональной политики, МГУ, Москва, 2012, 143 с.
67. Лащева Т. О., Формирование и активизация полюсов экономического развития в регионе, Дисс. работа, Санкт-Петербург, 2008, 168 с.
68. Лаппо Г. М., География городов, Москва, 1997, 479 с.
69. Лейзеревич Е. Е., Полюса и центры роста в теории и на практике, Полюса и центры роста в региональном развитии, Материалы сессий Экономико-географической секции Международной академии регионального развития и сотрудничества (МАРС), Под ред. Ю.Г. Липеца, М., 1998, с. 42-45.
70. Леш А., Географическое размещение хозяйства: Пер. с англ., М.: Изд-во иностр. лит., 1959, 490 с.
71. Лорина Н. И., Кисельников А. А., Региональная политика в странах рыночной экономики, М., 1998, 171 с.
72. Маергойз И. М., Территориальная и урбанистическая концентрация промышленного производства, Территориальная организация народного хозяйства Советского Союза, М.: МФГО АН СССР, 1979, с. 66-70.
73. Маергойз И. М., Территориальная структура хозяйства, Новосибирск: Наука, 1986, 302 с.
74. Манасян М. Г., Экономико-географический анализ влияния столичности на развитие и функционирование города (на примере г. Еревана), автореферат, М., 1987, 24 с.
75. Модели размещения городов, <http://www.altnet.ru/~rim/lekcicon/020/Gloss.htm>
76. Носова Н. С., Роньшина Н. И., Международные экономические отношения, М.: Эксмо, 2008, 160 с.
77. Павлов К. В., Шишкин М. И., Теория экономического ядра, Ижевск: Удмуртия, 1996, 88 с.
78. Павлов К. В., Ядро экономических систем, Вісник Запорізького національного університету, 1 (3), 2008, с. 92-101.
79. Павлов К. В., Экономическое ядро: сущность, элементный состав и критерии его формирования с учетом зарубежного опыта, Проблемы материальной культуры, Экономические науки, с. 66-73,

- <http://dspace.nbu.gov.ua/bitstream/handle/123456789/34553/18-Pavlov.pdf?sequence=1>
80. [Погосян Д. А., Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Ереван, 1986, 221 с.](#)
81. Подгрушный Г. П., Основные формы и структуры территориальной организации общества, Сжатие социально-экономического пространства: новое в теории регионального развития и практике его государственного регулирования. Ред. Артоболевский С. С., Синцеров Л. М., М.: Эслан, 2010, с. 175-181.
82. Портер М., Конкурентное преимущество: Как достичь высокого результата и обеспечить его устойчивость, Пер. с англ, Под ред. Нижельская О., Перевод Ё. Калинина, М.: Альпина Бизнес Букс, 2005, 715 с.,
[http://www.e-reading.club/bookreader.php/133034/Porter - Konkurentnoe preimushchestvo. Kak dostich' vysokogo rezul'tata i obespechit' ego ustoiichivost'.pdf](http://www.e-reading.club/bookreader.php/133034/Porter_-_Konkurentnoe_preimushchestvo._Kak_dostich'_vysokogo_rezul'tata_i_obespechit'_ego_ustoiichivost'.pdf)
83. Портер М., Конкурентная стратегия, Методика анализа отраслей конкурентов (Competitive Strategy: Technigues for Analyzing Industries and Competitors), Переводил Минервин И., М: Изд. Альпина Паблишер, 2011, 454 с.
84. Пространство циклов, Мир-Россия-регион, Под ред. В. Л. Бабурина и П. А. Чистякова, Москва: Издательство ЛКИ, 2007, 320 с.
85. Развитие депрессивных муниципальных образований: стратегический выбор и механизм реализации, Под ред. д. э. н., профессора Рохчина В. Е., СПб: РНЦ ГМУ, Северо-Западный филиал ИРЭ РАН, 2001, 176 с.
86. Рикардо Д., Начало политической экономии и налогового обложения, Соч. т. I., М.: Госиздполитлит, 1955, 360 с.
87. Родоман Б. Б., Территориальные ареалы и сети, Очерки теоретической географии, Смоленск: Ойкумена, 1999, 256 с.
88. Родоман Б. Б., Пространственная концентрация антропогенных явлений (поиски географических законов), Учен. Зап., Вып. 578, Тарт. Ун-та, 1981, с. 52-61.
89. Родоман Б. Б., Полюса и центры роста в региональном развитии, Новая поляризация российского пространства, Материалы сессий Экономико-географической секции Международной академии регионального развития и сотрудничества (МАРС) под ред. Ю. Г. Липеца, М., 1998, с. 31-36.
90. Рубвальтер Д. А., Полюса конкурентоспособности, <http://www.ng.ru/science/2009-12->

91. Садыкова А. К., Роль межрегиональных связей в теории полюсов роста для практической реализации региональной политики Казахстана, http://www.rusnauka.com/4_SWMN_2010/Economics/59036.doc.htm
92. Смирнов Е. Н., Введение в курс мировой экономики. Экономическая география зарубежных стран, М., 2012, 404 с.
93. Тархов С. А., Особенности транспортного освоения горных регионов (на примере Кавказа), Проблемы горного хозяйства и расселения, М.: ИГАН, 1990, с. 25-40.
94. Ткаченко А. А., Некоторые элементы общей теории территориальной организации общества, Социально-экономическая география: традиции и современность, Под ред. Шкириной А. И., Шувалова В. Е., Москва-Смоленск, 2009, с. 215-224.
